

12604

ԲԱԿԱԿԻՆ. Ա. ԲԵԳԻՑԱՆ



ԽՈԽԱՏԱՆ ԿՈՇՀՐԱՑԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՑԻ
ԱՊԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՈՒՐՎԱԳԻՇԵ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

308(47)

Բ - 22

Բ-22

Ա. ԲԱԿԱԿԻՆ, Ա. ԲԵԳԻՑՅԱՆ

ՈՒՖՈՒ

ԹՈՒՍՍՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԵԼ

107
~~ՏԵՍ~~

ՊԵՏՀՐԱՏ
ՔԱՂԱՔԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1938

ՈՒԹՍՀ-Ն ԱՌԱՋԻՆՆ Ե ԽՍՀՄ ՏԱՍՆՄԵԿ
ՀԱՎԱՍԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԶ

Հին, նախահեղափոխական Թուսաստանը ժողովուրդների բանստ եր: Յարիզմը գիտակցաբար պատվաստում եր գաղանային շովինիզմ և ազգային յերկապառակություն: Այդ բանը նրան հարկավոր եր ժողովուրդներին ստրկության մեջ պահելու համար: Յարիզմը կաշկանդում, ամեն կերպ նեղաւմ եր ժողովուրդների լեզվի զարգացումը, վերացնում եր տեղական դպրոցները, թատրոնները և մյուս լուսավորական հիմնարկները, վորպեսզի ճշնչված ժողովուրդներին պահի խավարի ու տղիտության մեջ:

Յարիզմը ճնշված ժողովուրդներին զրկել եր քաղաքական իրավունքներից: III և IV գումարումների Պետական դումայում ուսու ազգության ներկայացուցիչները կազմում եյին բոլոր պատգամավորների 90%-ը, իսկ ցարական Թուսաստանում ապրող մնացած 164 ազգություններին, ժողովուրդներին ու ցեղերին տրված եր Դումայի տեղերի միայն 10%-ը, ըստվորում այդ 10%-ն ել հատկացվում եր վոչ-ուսու ազգությունների շահագործող շերտերից ընտրված՝ ցարիզմի դրածու կամակատարներին: Վորպեսզի խանդարի ճնշված աղդությունների ժողովրդական մասսաներին՝ ուսուական ինքնակալության գաղութային կողովուտի դեմ պայքարելու համար միանալուն, և վորպեսզի հեշտացնի նրանց հետ դատաստան տեսնելու իր գործը, ցարիզմն իրականացնում եր ազգային ճեղքման քաղաքականություն: Նա գիտավորյալ կերպով մասնատում եր ճնշված ժողովուրդներով բնակեցված տերիտորիաները: Այսպես, որինակ, մորդվայական ժողովուրդը ցրված եր չորս նահանգներում (Պենզայի, Տամբովի, Սիմբիրսկի, Նիժնի-Նովգորոդի), դաղըստանցիները՝ յերեք նահանգում, մարիացիները՝ յերեք նահանգում և այլն:



6169
38

6659- 87

Ա. Բական, Ա. Բեգիան

Р С Ф С Р

Армгиз—Издательство политической литературы

Երևան, 1938

Ժողովուրդները ցարական թուսաստանում գտնվում եյին ժամակական մեջ, մեռում եյին սովոր, մասսայական հիվանդություններից, նահատակվում եյին անհավասար պայքարում՝ ընդթուններից, ուսահանդապետների, ուրբաղնիկների, ունի ցարական դաշիճների—նահանդապետների, ուրբաղնիկների, զաղութացնողների, վորոնք գործում եյին ուն-հարյուրյակային զոկատների ոգնությամբ։

Յարիխմի թալանչիական քաղաքականությունը (վաչոռապետություն) նկատմամբ նրա գլխավոր պատվիրանն եր՝ ազգությունների նկատմամբ նրա գլխավոր պատվիրանն եր՝ «Թալանի՛ ու թալանի՛»), ուժից վեր հարկերը, էշխանությունների գողմից ուղղություններին շարունակ ստորացնելը,—այս ամենը կողմից ժողովուրդներին մեջ առաջացնում եր խորն առելություն ճնշված ժողովուրդների մեջ առաջացնում եր խորն առելությունի ցարիքմը և սնուցանում եր անվտանգությունն, խոկ յերդեմի ցարիքմը և անուցանում եր անվտանգությունն, ինչ ուղարկան ել թշնամական վերաբերմունք դեպի այն ամենը, ինչ ուղարկան ե։

Մահու չափ վախենալով բանվորների ու դյուզացիների հետ պատիսական յելույթներից և ցանկանալով նրանց հետ պահել պատիսական յելույթներից և ցանկանալով դիմ սպայքարելուց, ցարիքմը գրգռում եր մի ինքնակալության դեմ սպայքարելուց, ցարիքմը գրգռում եր մի ազգություն մյուսի դեմ՝ ուստաներին հրեաների դեմ, հայերին թուրքերի դեմ և այլն, կազմակերպում եր կոտորածներ հայերի թուրքերի, ուղբեկների ու թուրքիների միջև, կտրժակերպում թուրքերի, ուղբեկների ու Յակովյան հրեաների ջարդեր։ պում և խրախուսում եր ուն-հարյուրյակային հրեաների ժարդեր։

Այսպես եր ցարական թուսաստանը, ժողովուրդների բան, ազգային ճնշման ու անիրավահավասարության յերկիրը, ազգային-դադութացման ստրկացման յերկիրը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը վերջ դրեց բազմադարյան ազգային ճնշման ու ստրկացմանը։ Վերջ դրեց բազմադարյան ազգային ճնշումն ազնչացրեց տնտեսական, քաղաքական ու ազգային ճնշումն ազնչացրեց ցարական թուսաստանի ժողովուրդներին։ Ամը և վերածնեց ցարական թուսաստանի ժողովուրդներին։ Ազը ազգակրական պայքարի դլուխ անցած քնում եր ուստ մեծ ժողատարական պայքարի դլուխ անցած քնում եր ուստ մեծ ժողովուրդների բանվոր դասակարգը, կենինի-Ստալինի կուռակցության դեկավարությամբ։

Հոկտեմբերյան հեղափոխությունն արմատագետ վերացրեց չին փոխարաբերությունները ժողովուրդների միջև, առեղծեց չին փոխարաբերությունները մեր հայերների բազմաթիվ ժողովուրդների սերտ բարեկամության համար։

ՈԽՖՍՀ տերիտորիայով ամեն աընդարձակ, բնակչության

թվով առաջինը և կազմով ամենաբազմազդ միութենական հանրապետությունն ե։

Նա տարածվում է Բալտիկ ծովից մինչև Խաղաղ ովկիանոսը, Սառուցյալ ովկիանոսի ափերից մինչև Կովկասի լեռնաշղթաները։ ՈԽՖՍՀ բանում ե 16,5 միլիոն քառ. կիլոմետր տերիտորիա, այսինքն՝ կազմով ամբողջ տարածության 78%-ը։ Այդ վեհթիարք տերիտորիայում բնակչում ե 105 միլիոն մարդ, վորք կազմում է կազմում է կազմում է կազմում է ամբողջ ազգաբնակության ավելի քան 60%-ը։

Մեր հանրապետությունն, ի տարբերություն մյուս հանրապետություններից, հանդիսանում է Քեղերաստիլ հանրապետություն, վորք միավորում և մեծ թվով ավտոնոմ հանրապետություններ, ավտոնոմ մարզեր և ազգային ոկրուգներ։

ՈԽՖՍՀ կազմի մեջ մտնում են 17 ավտոնոմ հանրապետություններ—Թաթարական, Բաշկիրական, Դաղստանի, Բուրյաթ-Մոնղոլական, Կաբարդինո-Բալկարյան, Կարմիկական, Կարելական, Կոմի, Ղրիմի, Մարիական, Մորդվական, Մերձվոլյան գերմանացիների, Հյուսիս-սուեթական, Ուդմուրտական, Ջեմուն-ինդուցական, Չուվաշական ու Յակուտական և 6 ավտոնոմ մարզեր՝ Ադրբեյջան, Ղրեական, Կարաչայական, Ոյրոթական, Խակասական ու Զերկեսական։

Նրա մեջ մտնում են նույնակես 12 ազգային ոկրուգներ։ Նենցների ազգային ոկրուգ, վորք մտնում է Արխանգելսկի մարզի մեջ, Կոմի-Պերմյացկի, վորք մտնում է Սվերդլովսկի մարզի մեջ, Տայմիրական ու Եվելիկական ազգային ոկրուգներ, վորք մտնում է Են Կրասնոյարսկի յերկրամասի մեջ, Ուստ-Որդինյան բուրյաթ-մոնղոլական ազգային ոկրուգ, վորք մտնում է Իրկուտսկի մարզի մեջ, Վիտիմ-Ուլեկինական ու Ագինյան բուրյաթ-մոնղոլական ազգային ոկրուգներ, վորք մտնում էն Զիտայի մարզի մեջ, Ուստյակ-Վոլովուցյան ու Յամալ-Նենեցական ազգային ոկրուգներ, վորք մտնում էն Ոմսկի մարզի մեջ, Կարելական ազգային ոկրուգ, վորք մտնում է Կալինինի մարզի մեջ, Կուրյական ու Չուկոտական ազգային ոկրուգներ, վորք մտնում էն Հեռավոր-Արևելյան յերկրամասի Կամչատկայի մարզի մեջ։

Բացի ավտոնոմ հանրապետություններից, ավտոնոմ մարզերից ու ազգային ոկրուգներից, ՈԽՖՍՀ կազմի մեջ մտնում են Ալուայան, Հեռավոր-Արևելյան, Կրասնոյարսկի, Կուրյական ու Որջոնիկիձեյի յերկրամասերը և Արխանգելսկի, Վոլոգդայի

Վորոնեժի, Գորկու, Խվանովյալի, Խրկուտսկի, Կալինինի, Կիրովի, Կույբիշևի, Կուրօնի, Լենինգրադի, Մոսկվայի, Նովոսիբիրսկի, Ռմսկի, Ռուսության, Ռյոլի, Ռոստովի, Ռյազանի, Սարատովի, Տվերդովսկի, Սմոլենսկի, Ստալինգրադի, Տամբովի, Տուլայի, Չելյաբինսկի, Չիտայի և Յարուլալի վարչական մարզերը։ Հեռավոր-Արևելյան յերկրամասն, իտարբերություն մյուսներից, հանդիսանում է մարզային բաժանում ունեցող յերկրամաս։ Նրա կազմի մեջ, բացի Հրեական ավտոնոմ մարզից, մանում են նաև 7 վարչական մարզեր՝ Նիժնի-Ամուրյան, Պրիմորյեյի, Սախալինի, Կամչատկայի, Ռևուրական, Խաբարովսկի և Ամուրի։

Յերկրամասի ու մարզի միջև տարբերությունն այն է, վոր յերկրամասի կազմի մեջ մտնում է վորեւ ավտոնոմ մարզ։ Այսպես, որինակ, Աղեղեյական ավտոնոմ մարզը մտնում է Կրասնոդարի յերկրամասի մեջ, իսկ Խակասականը՝ Կրասնոյարսկի յերկրամասի մեջ և այլն։

ՌԽՖՍՀ կառավարությունն ավտոնոմ մարզերին ցույց է տալիս սիստեմատիկ ողնություն, ըստ ամենայնի բարձրացնելով նրանց տնտեսությունը, կուլտուրան՝ ձեռով աղդային, բովանդակությամբ սոցիալիստական։

ՌԽՖՍՀ տերիտորիայի լայնածավալությանը համապատասխանում է նաև նրա հարստությունների հսկայական բարձրացնությունը։ Նրա հյուսիսը ծածկված է հարուստ անտառներով։ Գետերը, լճերը և ՌԽՖՍՀ ափերը վողոզող ծովերը հարուստ են ձկան անսպաս պաշարներով։ Նրա ընդերքն առատ է յերկաթահանքով, քարածխով, նավթով, վոսկով և հսկայական քանակությամբ այլ ոգտակար հանածոներով։ ՌԽՖՍՀ յերկաթուղային մեծ պետություն է, նրա պողպատյա ռելիերը տարածվում են տասնյակ-հազարավոր կիլոմետրների վրա։

ՌԽՖՍՀ բազմազդ պետություն է, բայց նա արդարացիորեն կոչվում է ուստի մեծ ժողովրդի անունով, վորը կազմում է հանրապետության ընակչության մեծամասնությունը։ Ռուս ժողովուրդը հանդիսանում է մեծ ժողովուրդ։ Այդ նա յէ, վոր տվեց աշխարհին աշխատավոր մարդկության հանճար Վ. Ի. Լենինի։ Ռուս ժողովուրդն առաջինը բարձրացրեց աղատադրական մեծ պայքարի դրոշն ընդդեմ ինքնակալության, ընդդեմ իմպերիալիզմի և իր հետեւց տարած ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների բազմամթիվոն մասսաներին։

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիան-Հոկտեմբերյան Սո-

ցիալիստական Մեծ հեղափոխության որորանն է։ Ռուսաստանի պրոլետարիատը բաց արեց համաշխարհային սոցիալիստական հեղափոխության դտրագլուխը և որինակ ցույց տվեց, թե ի՞նչ-պես պետք է իրագործել սոցիալիստական հեղափոխությունն ու հաղթականութեն կառուցել սոցիալիզմ։

Իր մահվանից վոչ շատ առաջ, 1882 թվին, Մարքսը գրում եր, վոր Ռուսաստանի իրենից ներկայացնում է Յեվրոպայի հեղափոխական շարժման առաջավոր ջոկատը։ Ռուս ժողովուրդը լիովին արդարացրեց այն հույսերը, վոր նրա վրա դնում եր գիտական կոմունիզմի ստեղծող Կարլ Մարքսը։

Ռուս ժողովրդի մեծագույն զալակ, համաշխարհային հեղափոխության հանճար Վ. Ի. Լենինը գրում եր. «Խորթ ե, արդյոք, մեզ, վելիկոռոս գիտակից պրոլետարներիս, ազգային հպարտության զգացմունքը։ Իհարկե, վո՛չ։ Մենք սիրում ենք մեր լեզուն և մեր հայրենիքը, մենք ամենից շատ աշխատում ենք այն բանի սիստեմությունը ու պահպահությունը ինքնական բարձրացնելու մեջ ամառանքի յեն յենթարկում մեր հրաշալի հայրենիքը ցարական դահիճները, աղնվականներն ու կապիտալիստները։ Մենք պարծենում ենք նրանով, վոր այդ բռնությունները գիմարդություն եյին առաջ բերում մեր միջավայրից, վելիկոռոսների միջավայրից, վոր այդ միջավայրը հրապարակ հանեց Ռադիչչեվին, գեկարբիստներին, 70-ական թվականների հեղափոխական-ուազնոչինեցներին, վոր վելիկոռոս բանվոր դասակարգը 1905 թվականին ստեղծեց մասսաների հզոր հեղափոխական կուսակցություն, վոր վելիկոռոս մուժիկը միևնույն ժամանակ դասնում է գերմոնկատ, ոկսել և տապալել տերաբերին ու կալվածատիրոջը»¹։

Ռուս մեծ ժողովրդի միջավայրից գուրս յեկան այնպիսի լուսավոր գլուխներ, ինչպիսիք են Լոմոնոսովը, Պուշկինը, Բելինսկին, Զերնիչեվսկին, Դորոբյուռովը, Զեխովը, Տոլստոյը, Մաքսիմ Գորկին, Ռեպինը, Մենդելեևը, Պալամովը, Միջուրինը, Յիոլովսկին, Գլինկան, Դարգոմիշևին, Զայկովսկին և մյուսները, վորոնք հսկայական աղղեցություն ունեցան համաշխարհային կուլտուրայի ու քաղաքակրթության զարգացման վրա։

1 Լենին, Յերկ. չ. XVIII, էջ 81։

Թուս մեծ ժողովրդի բարձր կուլտուրան, վորի բարձրագույն նվաճումը հանդիսանում է լենինիզմը, մոտ է Խորհրդային Միության բոլոր ժողովուրդներին և համայն աշխարհի աշխատավորներին: Միայն Փաշիզմի ստոր չները, Բուխարինը և նրա բանդան—զանազան բուրժուական նացիոնալիստներն են ընդունակ դրաբարտիչ պնդումներ անելու ոռւս ժողովրդի «անտաղանդության» և «ոբլոմովականության», նրա կուլտուրայի ինքնամփոփվածության, ոռւս ժողովրդի կուլտուրայից ԽՍՀՄ ժողովուրդների կուլտուրայի մեկուսացած լինելու վերաբերյալ: Թուսական կուլտուրայի մեծագույն արժանիքը նրա արտասովոր լայնության և նրա խորագույն ինտերնացիոնալիզմի մեջ է: ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների կուլտուրայի լայն զարգացումը՝ ոռւս ժողովրդի կուլտուրայի ներգործությամբ, ամենափայլուն ապացույցն ե այն բանի, վոր աղդային ինքնամփոփվածությունը ոռւս կուլտուրայի համար խորթ յերեռութ է:

Լենինյան-ստալինյան աղդային քաղաքականության անշեղ կենսագործումը, ոռւս բանվոր դասակարգի կողմից նախկին ճնշված, հետամնաց ժողովուրդներին ցույց տրվող սիստեմատիկ ոգնությունը, —ստեղծեցին ՌԽՖՍՀ և ամբողջ Խորհրդային Միության վոչ-ոռւս աղգությունների աշխատավորների յեղբայրական սերը դեպի ոռւս ժողովուրդը: Այդ բոլոր ժողովուրդները ՌԽՖՍՀ Սահմանադրությունն ընդունելու համար Համառուսական ԽՎՊ Արտակարգ համագումար ուղարկված իրենց ներկայացուցիչների միջոցով խորհուրդների համագումարի ամբիոնից իրենց անկեղծ սիրո ու հարգանքի զգացումներն եյին արտահայտում դեպի ոռւս մեծ ժողովուրդը, իրենց ցույց տրված յեղբայրական ոգնության, աղատ ու բերկրալի կյանքի համար:

Համառուսական ԽՎՊ Արտակարգ համագումարի ամբիոնից մյուս տասը յեղբայրական միութենական հանրապետությունների ժողովուրդների ներկայացուցիչները, արտահայտելով իրենց ժողովուրդների կամքը, հայտնում եյին ոռւս մեծ ժողովրդի հետ, ՌԽՖՍՀ հետ, Խորհրդային Միության առաջատար հանրապետության հետ իրենց ժողովուրդների անխախտ, ամուր, յեղբայրական բարեկամության մասին:

Ի՞նչ եր հին ցարական Ռուսաստանը: Աղքատ ու խոճուկ Նր յերեռում ցարական Ռուսաստանի արդյունաբերությունը՝ կապիտալիստական յերկրների առաջավոր ինդուստրիայի համեմատությամբ: Հին Ռուսաստանը գլխավորակես հողագործական:

յերկիր եր: Այնտեղ գերակշռում եր գյուղատնտեսությունը: Արդյունաբերությունը Թուսաստանում շատ թույլ եր գարգացած: Թուսաստանը, վոր հարուստ եր զանազան հանքերի վիթխարի պաշարներով, արդյունաբերական տեսակետից Յելբուզայի ամենահետամնաց յերկրների թվին եր պատկանում: Նա ուներ չնչին թվով մերենաշխական գործարաններ: Զնայած հանքային հարստությունների առատությանը, ցարական Թուսաստանում քիչ կային նաև մերենաներ, շոգեքարշեր, գաղցահներ, վորանք ներմուծվում եյին արտասահմանից: Յարական Թուսաստանի մասին կենինը խոսում եր՝ վորպես մի յերկրի մասին, վորը «արքավորված եր արտադրության ժամանակակից գործիքներով քառապատիկ վատ Անդլիայից, հնդապատիկ վատ՝ Գերմանիայից, տասնապատիկ վատ՝ Ամերիկայից»: Յերկրում տնօրինում եյին ոստարերկրյա կապիտալիստները: Նրանց եյին պատկանում շատ խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ, ինչպէս և հանքահորեր ու հանքարաններ: Հին Թուսաստանի տնտեսական հետամնացությունն անդրագառնում եր և նրա ռազմական թույլություն վրա: Հերապես՝

Դու և՝ աղքատ ես,
Դու և՝ առատ ես,
Դու և՝ հզոր ես,
Դու և՝ անզոր ես,
Մա՛յր-Թուսաստան:

Գյուղում տնօրինում եյին ցարական ուրբալնիկները, կալվածատերերը և կուլակ-պորտաբույծները, վորոնք անխնա շահագործում եյին և կողոպտում ընչազուրկ ու աղքատ գյաւղացիներին: Հողագրկությունը, սովոն ու աղքատությունը գյուղացիների բաժինն եյին: Զքակոր գյուղացիությունը կը ուղացի բաժինն եյին: Զքակոր գյուղացիությունը կը ուղացի կալվածատերերի ձեռքին գտնվում եր մոտ 70 միլիոն դեսյատին հող, այս ժամանակ, յերբ նույնքան հող բաժինն եր ընկնում 10 միլիոն չքակոր գյուղացիական տնտեսությունների: Խզուր չե, վոր կալվածատերական հողերի գրավման և կալվածատերական-ազնվական հնչման լծից աղատազբյելու համար մզվող պայքարը յեղել և Թուսաստանի բոլոր գյուղացիական ապօտամբությունների բոլոտնիկովի, Ստեփան Ռազինի, Պուղաչովի և մյուսների ապօտամբությունների բովանդակությունը:

Յարական Ռուսաստանում մշտապես կար գործազուրկների հակայական մասսա: Բանվորներ աշխատավարձը չափեց դուրս ցածր եր, հազիվ բավականացնում եր կիսաքաղց գոյության համար: Մուրացկանային աշխատավարձով բանվորներն որական աշխատում եյին 10—12 ժամ և ավելի: Նրանք վատահ չեյին, թէ վաղն աշխատանք կստանան նույնիսկ այդ մուրացկանային աշխատավարձով: Բանվորներն ու գյուղացիները, մանավանդ ցարական Ռուսաստանի ծայրամասերի բանվորներն ու գյուղացիները, կրում եյին ցարական աստիճանավորների վոչչով չսահմանափակող կամայականությունը, քաղաքական իրավազրկություն և ճնշում:

Այլևս չկա Հին Ռուսաստանը, անդառնալիորեն անցյալի գիրկն անցավ «անզոր մայր-Ռուսաստանը»: Ռուսաստանը խորհրդացյան, սոցիալիստական—դա հզոր ու առատ, բանվորացուղացիական սոցիալիստական մեծ հանրապետություն է:

Ստալինյան հնդամյակների տարիների ընթացքում ՌԽՖՍՀ տնտեսությունը դարձավ սոցիալիստական:

ՌԽՖՍՀ արդյունաբերությունը հասավ Յեվրոպայի ու Ամերիկայի բարձր զարգացած կապիտալիստական յերկների արդյունաբերության մակարդակին, իսկ առանձին ճյուղերում նույնիսկ առաջ և անցել նրանցից: ՌԽՖՍՀ խոշոր արդյունաբերությունը 1937 թվին ութ անգամ ավելի արտադրանք տվեց, քան Հին, ցարական Ռուսաստանը: Արդյունաբերության առանձին ճյուղերում այդ տոկոսն ավելի բարձր է:

Ստալինյան հնդամյակների տարիներին ՌԽՖՍՀ մեջ կառուցված են մեքենաշինության խոշորագույն գիտանտներ՝ Ստալինի անվան Կրամատորսկի գործարանը, Կապանովիչի անվան «Շարիկովոդշվանիկ» գործարանը, Ուրալի ելեկտրոմեքենաշինական գործարանը և շատ ուրիշները:

Ստալինը առաջարկության մի շաբք ճյուղեր, վորոնք չկային նախահեղափոխական Ռուսաստանում: Որինակ, ցարուցված են աշխատավարձության առաջնային արդյունաբերություն, իսկ այժմ ՌԽՖՍՀ մեջ կառուցված և ամբողջ թափով աշխատում են տրակտորային արդյունաբերություն, իսկ այժմ ՌԽՖՍՀ մեջ կան կոմբայններ արտադրություն, իսկ այժմ ՌԽՖՍՀ մեջ կան կոմբայններ արտադրություն, Սարատովի ու Ռոստովի գործարանները: Յարական Ռուսաստանը չգիտեր ավտոմոբիլային արդյունաբերություն ասած

բանը, իսկ այժմ Ռուսաստանի հանրապետությունն ունի ավտոշինարարության նշանավոր գիգանտներ՝ Մուկվայի Ստալինի անվան գործարանը:

Վիթխարի հաջողություններ են ձեռք բերված ՌԽՖՍՀ ելեկտրիֆիկացիայի բնագավառում: Յեթե 1913 թ. ցարական Ռուսաստանի բոլոր ելեկտրոկայանների կարողությունը հավասար էր 1,1 միլ. կվկ., ապա 1936 թ. միայն ՌԽՖՍՀ ելեկտրոկայանների կարողությունը հասավ 6,6 միլ. կվկ.: ՌԽՖՍՀ մեջ նոր ստեղծվել են նաև ինքնաթիւուշինարարություն, մոտոբաշխնություն, դաղդյահաշինություն, ավիացիոն արդյունաբերություն, սինթետիկ կառուզուկի, արհեստական մետաքսի և այլ արտադրություններ:

Հոկայական նվաճումների յե հասել ՌԽՖՍՀ գյուղատնտեսությունը: ՌԽՖՍՀ գյուղատնտեսությունը՝ ցանքատարածության ու տեխնիկական հագեցվածության տեսակետից գրավեց առաջին տեղը Յեվրոպայում: ՌԽՖՍՀ մեջ այժմ կա 173,3 հաշար կոլտնտեսություն, 2522 խորհուտեսություն և 3937 ՄՏԿ: ՌԽՖՍՀ կոլտնտեսային ու խորհուտեսային դաշտերում աշխատում ե 285 հազար տրակտոր, 90,5 հազար կոմբայն: Ուժգին աճել ե ցանքատարածությունը, վորը 1913 թ. 69,7 միլիոն հեկտարից հասել է 1937 թ. 93,4 միլիոն հեկտ.: ՌԽՖՍՀ-ը մյուս միութենական հանրապետությունների մեջ առաջին տեղն ե բըռնում նաև ցորենի, չաճարի, վուշի և գյուղատնտեսական այլ տեսակի պրոցուկտների արտադրության բնագավառում:

ՌԽՖՍՀ արդյունաբերության վիթխարի աճումն ուղեկցվում եր նաև քաղաքների բուռն աճմամբ: Ստալինյան հնդամյակների տարիներին ՌԽՖՍՀ մեջ աճել են տասնյակի նոր արդյունաբերական քաղաքներ, վորոնց թվում՝ Ստալինսկը, Մագնիսովորսկը, Նիժնի Տագիլը, Մուրմանսկը, Ստալինովորսկը, Բերեզնիկին, Կոմսոմոլսկը, Կիրովսկը և ուրիշները: Կերպարանափոխիցին և խոչըրացույն արդյունաբերական ու կուլտուրական կենտրոններ գարձան հին քաղաքները՝ Գորկին, Սվերդլովսկը, Ստալինգրադը, Չելյաբինսկը, Իվանովոն:

ՌԽՖՍՀ գյուղության քսանամյակին նրա տնտեսությունը, կուլտուրան, ժողովուրդների բարեկեցությունը հասան բացառիկ ծաղկման: ՌԽՖՍՀ բոլոր ավտոնոմ հանրապետություններում, ավտոնոմ մարզերում և ազգային ոկրուզներում զարգացալ արդյունաբերությունը, աճեցին նոր Փարբիկաներ ու գործարաներ,

ուր սաեղծվում են բանվորների և տեխնիկական ինտելիգենցիայի նորանոր կարգեր՝ տեղական բնակչության բանվորներից ու դյուրացիներից:

Արինակի համար վերջնենք կարարդինո-Բալկարիան: 100 տարուց ավելի կարարդինո-Բալկարիան յեղել է ցարական Ռուսաստանի գաղութը: Կարարդայի նվաճման որից—XIX դ. սկզբ-ըից—կարարդինական ու բալկարական գյուղացիները կրում եյին կրկնակի ճնշում՝ ռազմա-ֆեոդալական Ռուսաստանի և իրենց սեփական իշխանների ճնշումը: Այս տերիտորիայում, վոր ներկայում և կարարդինո-Բալկարիայի ավտոնոմ հանրապետությունը ամենեն արդյունաբերություն չկար: Գյուղատնտեսությունը ամենեն աստիճան թույլ եր զարգացած: Աղքատությունն ու անկուլտուրականությունը կարարդիների ու բալկարցիների բաժինն եր:

Կարարդինցիների մեջ դրագիտությունը հազիվ հասնում էր 2%-ի, իսկ բալկարցիների մոտ այն չեր հասնում նույնիսկ 1%-ի: Ռուս աստիճանավորների, իր իսկ բազմաթիվ իշխանների, մոլաների ու կուլակների ճնշման տակ կարարդինո-Բալկարիայի բնակչությունը սիստեմատիկաբար կոսորվում եր: Կարարդինական ու բալկարական գյուղացիները շատ անդամ վոտքի եյին յելում իրենց կեղեքիների դեմ, ստեղծում եյին ապստամբական ջոկատներ, սակայն ցարական սեհարյուրյակային պատժիչ ջոկատները ճնշում եյին կարարդինական ու բալկարական գյուղացիության շարժումները:

Ի՞նչ և դարձել կարարդինո-Բալկարիան խորհրդային իշխանության որով:

Խորհրդային իշխանության տարիներին նա դարձել է միանգամյան անձանաշելի: Ամեցին ու վայլուն հաղթանակներ ձեռք դարձելին նրա գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը: Շողշողուն բարձունքների հասավ կարարդինցիների ու բալկարցիների կուլտուրան: Էնդհանուր ցանքատարածությունը կարարդինո-Բալկարիայում 1913 թվին հաշվվում եր 117 հազար հեկտար, վորն իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների հետևանքով իջակ 69 հազ. հեկտարի: Հողասակալությունն ու ծայր աստիճան անյեկամտարերությունը բնորոշում եյին կարարդինցիների ու բալկարցիների մուրացիկ կյանքը:

Այժմ հանրապետության ցանքատարածությունը, նախահե-

ղափոխական ժամանակաշրջանի համեմատությամբ, աճել է համարյա յերեք անգամ՝ հասնելով 1937 թ. 330 հազ. հեկտարի:

45 Հազար դաճաճային ու ծայր աստիճան անյեկամտարելը գյուղացիական անտեսությունների փոխարեն կարարդինո-Բալկարիայում ստեղծվել է խոշոր սոցիալիստական բարձր յեկամտաբեր հողագործություն: Այստեղ 1936 թվին հաշվվում եր 147 կոլտնտեսություն, 14 ՄՏԿ և 14 խորհունտեսություն: Կարարդինո-Բալկարիայի ՍևՍՀ կոլտնտեսականները դեռ 1936 թվին մեկ աշխարի համար, բայց դրամից, բանջարեղենից, մոխր յուղից, կարտոֆիլից, ստացել են 20 կգ. հացահատիկ: Երա կոլտընտեսային ու խորհունտեսային դաշտերում 1937 թ. աշխատում եյին 756 տրակտոր, 102 կոմբայն և մեծ քանակությամբ այլ գյուղատնտեսական մեքենաներ:

Հանրապետությունը մեծ հաջողությունների յե հասել նաև անանաբուծության զարգացման բնագավառում: Անանաբուծության լավագույն առաջավորներից 27 հոդի պարգևատրվել են Միության շքանշաններով:

Կյանքը հանրապետության մեջ գառնում է ավելի ու ավելի ուներ և կուլտուրական: Վոչմեծ հյուղեր (սակլյաներ) ունեցող հին կարարդական ու բալկարական առողջերն իրենց տեղը գիշեցին կոլտնտեսականների սքանչելի տներ, ընդարձակ գվրոցներ ու խորհունտեսային ակումբներ ունեցող կուլտուրական կոլտնտեսային գյուղերին: 1933 թ. Նալչիկում (ՍևՍՀ գարչական կենտրոնը) հրավիրվեց առաջին ճարտարապետական կոնֆերանսը, վորն ոգնեց Կարարդինո-Բալկարիայի բանվորներին ու գյուղացիներին հատակագծելու իրենց սոցիալիստական շեներն, ավանները, քաղաքները, կոլտնտեսային գյուղերը:

Կարարդինո-Բալկարիայի արդյունաբերությունն սկսեց զարգանալ միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափախությունից հետո: Խորհրդային իշխանության տարիներին այստեղ կառուցված են շատ թվով խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, առանձնազես սննդարդյունաբերության ձեռնարկություններ: Նալչիկում կա մուրաբայի գործարան, ալբանաց կօժինատ, հայց գործարան, կոնսերվի գործարան: Հենց այստեղ կառուցված են չուզունաձուման ու մեխանիկական գործարաններ և մի շարք այլ մանր ձեռնարկություններ: Հանրապետության մեջ կառուցված է Միության խոշորագույն ողբերդաբան-

ներից մեկը—Դաշկունինի գործարանը, ինչպես նաև ոսլայի խո-
շորագույն գործարան:

Կաբարդինո-Բալկարիայի արևելյան սահմանի մոտ վերջին
տարիներս սկսեց լայնորեն ծավալվել նավթի արդյունահանումը.
այնտեղ ստեղծվել ե Մալգորեկ հարուստ նավթահանքը, վոր
մտնում ե Գրոզնեվթի նավթային ձեռնարկությունների կազմի
մեջ:

Հաջողությամբ իրականացվում ե հանրապետության ելեկ-
տրիֆիկացումը: Բական գետի վրա կառուցված ե մեծ հիդրոկա-
յան 25 հազար կՎ. Հզորությամբ. կառուցված են նաև 13 ռա-
յուսական ու 27 մանր կոլտնտեսային կայաններ:

Առանձնապես խոշոր են Կաբարդինո-Բալկարիայի հաջողու-
թյունները նրա ժողովրդական մասսաների կուլտուրայի վերել-
քի բնագավառում: 318 հազար բնակչություն (1937 թ. տվյալներով)
67 հազար սովորողներ են: Կա 247 դպրոց, վորից 96 վոչ-լրիվ
միջնակարգ և 21 միջնակարգ: Կաբարդինո-Բալկարիայում
ստեղծվել են՝ մանկավարժական ինստիտուտ, բարձրագույն կո-
մունիստական գյուղատնտեսական դպրոց, մելիորատիվ տեխնի-
կում, դրույխնիկում, մանկավարժական ուսումնարան, յերա-
ժշտական դպրոց և գիտահետազոտական ինստիտուտ:

Կաբարդինցիները և բալկարցիները, վոր առաջ չունեյին ի-
րենց գիրն ու գրականությունը, այէմ թերթեր են հրատարակում
մայրենի լեզվով: Նրանց միջավայրից վերջին ժամանակներս ա-
ռաջ են քաշվել գրողներ, բանաստեղծներ, վորոնք ստեղծում են
ազգային գեղարվեստական յերկեր: Հանրապետության մեջ խոր-
հըրդային իշխանության տարիներին կառուցվել ե 100-ից ավելի
ակումբ, 40 խրճիթ-ընթերցարան, 66 գրադարան, ինչպես նաև
մեծ քանակությամբ շրջիկ կինոներ:

1936 թ. Նալչիկում բացվեց ազգային դրամատիկ թատրոնը
և նրան կից՝ կաբարդինական ու բալկարական կուտնեսային
թատրոններ: Կաբարդինո-Բալկարիայի տարբեր կետերում կա-
ռուցվում են մեծ թվով ակումբներ, կինոթատրոններ և պիտնե-
րական տներ:

Բուսա չինությունիկների, ինչպես և իրենց իսկ իշխանների ու
կարգածատերերի գաժան շահագործման հետևանքով նախահեղա-
փոխական կաբարդինո-Բալկարիայի բնակչությունը կոտորվում
էր—մահացությունն այնտեղ գերակռում եր ծննդաբերությանը:
Կաբարդինո-Բալկարիայի խորհրդային իշխանության որդանները,

Փեղերատիվ ու միութենական կառավարությունների ոգնու-
թյամբ, ծավալեցին բուժհիմնարկների լայն ցանց: Այնաելզ այժմ
կա 19 հիվանդանոց, վորից 17-ը գյուղական (150 բժիշկներով),
և մալարիական կայաններ, 6 մալարիական կետեր, 46 բժշկական
ամբուլատորիաներ և 81 բուժակային կետեր:

Առողջական միջոցառումների լայն կիրառման և նյութական
ու կուլտուր-կենցաղային պայմանների ուժեղ բարելավման չոր-
հիվ Կաբարդինո-Բալկարիայում համարյա անհետացան եպի-
դիմիական (համաճարակային) հիվանդությունները՝ քութեչ,
տիֆ, ծաղիկ, վորոնք մինչ այդ աշխատավոր մասսաների սար-
սափելի պատուհան եյին:

Կաբարդինո-Բալկարիայի աշխատավորներն ապրում են ունե-
վոր ու կույսուրական կյանքով, վորի ցուցանիշն ե ծառայում
խորհրդային իշխանության տարիներին ազգաբնակության աճումն
ավելի քան յերկու անգամ:

Սոցիալիստական արդյունաբերության, գյուղատնտեսու-
թյան, ձեռով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական
կուլտուրայի նույնպիսի ծաղկում են ապրում ՌԽՖՍՀ նաև մյուս
ժողովուրդները:

Մեծ նվաճում ե հանդիսանում այն, վոր բանվորների և տե-
ղերում աճեցվող ինժեներա-տեխնիկական աշխատողների մեջ
կան տեղական ազգության պատկանող հաղարավոր կանայք, վո-
րոնք մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունն ստրուկներ եյին
բառիս բուն իմաստով: Նրանց կարող եյին ծաղրուծանակի
յենթարկել, նրանց կարող եյին սպանել և անպատճի մնալ: Տե-
ղական ազգության պատկանող կինը չեր կարող տղամարդկանց
մեջ յերևալ: Նա ճգմված ու ստորացված եր թե՛ վորպես աշխա-
տավորուհի և թե՛ վորպես կին:

Բոլշեկիների կուսակցության ղեկավարությամբ ՌԽՖՍՀ ժո-
ղովուրդները հսկայական հաջողություններ ձեռք բերին կուլ-
տուրական հեղափոխության լենինյան պլանի իրագործման աս-
պարեզում: Հանրապետությունը վստահորեն զնում ե ամբողջ
բնակչության համատարած գրադիտության ճանապարհով:
ՌԽՖՍՀ մեջ սովորողների թիվը բոլոր գպրոցներում—1936/37 թ.
կազմում եր 27.611 հազար, այդ թվում միջնակարգ գպրոցնե-
րում—16.641 հազար, այն ժամանակ, յերբ ամբողջ կին ՌԽՍՍՀ
տառականում 1914/15 թ. կար 5.531 հազար սովորող, այդ թվում
միջնակարգ գպրոցներում՝ 566 հազար:

ՌԻՖՍՀ մեջ մտնող հանրապետություններում, յիշկրամա-
սերում ու մարզերում յեղած բարձրագույն դպրոցների ընդհա-
նուր թիվը ներկայում 362 է, իսկ ցարական Ռուսաստանում
կար ընդամենը 73 բուհ։ ՌԻՖՍՀ բուհերում այժմ ոռվոքում են
ավելի քան 341 հազար ուսանողներ, վոր յերեք անդամ գերա-
գանցում ե Անդրխայի, Գերմանիայի և Խոալիայի ուսանողների
ընդհանուր թվից՝ միասին վերցրած։

Վիթխարի չափով ավելացել է թատրոնների, ակումբների
խրճիթ-ընթերցարանների, կինոսարքավորումների քանակությու-
նը։ 1937 թ. սկզբներին ՌԻՖՍՀ մեջ կար մոտ 500 թատրոն,
500 հազար ակումբ և խրճիթ-ընթերցարան, 18·500 կինոսարքա-
վորում։ Տարեցտարի աճում է ՌԻՖՍՀ ժողովուրդների լեզու-
ներով գրքի արտադրանքը։ Այսպես, որինակ, նախահեղափոխա-
կան Թուսաստանում չկար վոչ մի տպագրական միավոր աղիղե-
յական լեզվով, իսկ 1936 թ. այդ լեզվով տպագրված միավորնե-
րի թիվն աճեց մինչև 42-ի—114 հազար տիրաժով։ Վոչ մի տպա-
գրական միավոր չկար նաև բաշկիրական, բուրյաթ-մոնղոլական,
կալմիկական, կարաչայական, կոմի-զիրյանական, մորգվական
լեզուներով, ինչպես և ժամանակակից ՌԻՖՍՀ շատ ժողովուրդ-
ների լեզուներով։ Առ 1936 թ. տպագրական միավորների թիվն
աճեց՝ բաշկիրական լեզվով՝ 186-ի—105 հազար տիրաժով,
բուրյաթ-մոնղոլական լեզվով՝ 37-ի—199 հազար տիրաժով, կալ-
միկական լեզվով՝ 40-ի—201 հազար տիրաժով, կարաչայական
լեզվով՝ 56-ի—177 հազար տիրաժով, կոմի-զիրյանական լեզվով՝
69-ի—356 հազար տիրաժով և այլն։ Ռուսերեն լեզվով 1936 թ.
հրատարակած և 31·652 տպագրական միավոր—438·220 հազար
տիրաժով։

ՌԻՖՍՀ շատ ժողովուրդներ, վոր անցյալում չունեցին վոչ
մի թերթ, այժմ ունեն այդպիսիք բավական թվով ու մեծ տի-
րաժով։ Այսպես, որինակ, բաշկիրական լեզվով հրատարակվում
է 40 թերթ—161 հազար տիրաժով, բուրյաթ-մոնղոլական լեզ-
վով՝ 10 թերթ—31 հազար տիրաժով, կալմիկական լեզվով՝ 15
թերթ—54 հազար տիրաժով, մարիերեն՝ 22 թերթ—50 հազար
տիրաժով, մորգվական լեզվով՝ 18 թերթ—43 հազար տիրաժով։
Ռուսերեն լեզվով հրատարակվում է 6·285 թերթ—27·516 հազար
միավոր տիրաժով։ Ընդամենը ՌԻՖՍՀ մեջ հրատարակվում է
մոտ 6500 թերթ—4,5 միլիոնի ընդհանուր տիրաժով, վարչուցից

450 թերթ հրատարակվում և ազգային փոքրամասնությունների
լեզուներով։

Իր գոյության 20 տարվա ընթացքում Մեծ Ռուսաստանի
Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը
դարձավ հարուստ ու հզոր, զորեղ ու անպարտելի յերկիր։ Հաղ-
թանակեց լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքակա-
նությունը, վոր ՌԻՖՍՀ ժողովուրդներին հասցեց կուլտուրա-
կան, քաղաքական և տնտեսական ծաղկման վիթխարի բարձուն-
քին։

Ավելի ու ավելի յերջանիկ է դառնում ՌԻՖՍՀ բանվորների ու
գյուղացիների կյանքը։ Աճում ու բարձրանում է նրա աշխատա-
վորական մասսաների ուներությունն ու բարեկեցությունը։
Տարեցտարի աճում և բանվորների ու ծառայողների աշխատա-
վարձը, բարձրանում է կոլտնտեսականների յեկամուտաբը։ Միջին
աշխատավարձը ՌԻՖՍՀ մեջ 1929 թ. համեմատությամբ աճել է
ավելի քան յերեք անգամ։ Կոլտնտեսությունների յեկամուտները
ՌԻՖՍՀ մեջ, 1934 թ. յեկամուտների համեմատությամբ, 1935 թ.
աճեցին համարյա յերկու անգամ։ իսկ 1936 թ. և հատկապես
1937 թ. հացահատիկների ու մյուս գյուղատնտեսական կուլտու-
րաների առաջ բերքը մեր հանրապետության կոլտնտեսություն-
ներին ու կոլտնտեսականներին բերեց յեկամուտի նոր վիթխա-
րի աճում։

Յարական Ռուսաստանում պետական գանձարանը մտնող
յեկամուտները ծախսվում ելին բանվորների ու գյուղացիների
հեղափոխական յելույթները ճնշելու վրա, բանտերի, վոստիկա-
նության, ժանդարմերիայի և տերսերների պահպանման վրա։

Արագորեն աճում է ՌԻՖՍՀ ժողովրդական յեկամուտաբը, վո-
րը ծախսվում է մեր հանրապետության աշխատավորների կյանքի
բարեկամանը, մեր յերկրի հետագա ինդուստրացմանը, աշխա-
տավորների համար լուսավոր, հարմար տների, դպրոցների,
կուրորտների, սանատորիաների, հանգստյան տների, հիվանդա-
նոցների, թատրոնների, ակումբների և խրճիթ-ընթերցարանների
կառուցմանը, կարմիր բանակին և մեր սքանչելի, սիրելի հայ-
րենիքի պաշտպանության ամրապնդմանը։

Մեր յերկիրն, ընդգրկված մեծ ստախանովյան շարժմամբ, ա-
վելի ու ավելի յե հարստանում, գառնում ե ավելի զորեղ ու զե-
ղեցիկ։ Ստախանովյան շարժումը, վոր մնդգրկել է ՌԻՖՍՀ ժո-
ղովրդական տնտեսության բարեկամանը, բարձրացրեց ու

բարձրացնում ե ժողովրդական աշխատանքի արտադրողականությունը, բազմապատկում ե մեր հայրենիքի հարստությունները: Նա առաջ քաշեց ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերի հոկայական թվով ականավոր վարպետներ: ԽՍՀՄ Գերադույն Խորհրդի պատգամավոր՝ Փրեզերովչչիկ Գուգովի, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորուհի, ականավոր մանածագործուհի Դուսյա Վինոգրադովյան, կոչի արդյունաբերության լավագույն վարպետ Մետանինի, դարբին Բուսիդինի և շատ ուրիշների անունները գիտե ամբողջ Խորհրդային Միությունը:

Շատ հերոսական ջանքեր դրին ՌԽՖՍՀ ժողովուրդներն իրենց հողն ոտարերկրյա ինտերվենտներից նվաճելու համար, շատ արյուն թափեցին քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում բազմաթիվ գեներալական բանդաների դեմ մղված պայքարում: Աքանչելիորեն աշխատեցին բանվորներն ու գյուղացիները և բոլոր ազնիվ խորհրդային քաղաքացիներն իրենց խորհրդային պետության ամրացման համար, նրա արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման համար, ՌԽՖՍՀ ժողովուրդների կուլտուրայի վերելքի համար:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌԴԱԿՈՒՄԸ

1917 թ. Հոկտեմբերին բանվորները, դաշն կնքած Ռուսաստանի չքաղաքացույն գյուղացիության հետ, Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ տապալեցին կապիտալիստների ու կարվածատերերի իշխանությունը և հաստատեցին խորհուրդների իշխանություն—պրոլետարիատի դիկտատորա:

Նախկին ցարական Ռուսաստանի կենտրոնում սկսված սոցիալիստական հեղափոխությունն առաջին որերից տարածվեց դեպի նրա բոլոր ծայրամասերը: Մայրամասերում սոցիալիստական հեղափոխությունն իր ճանապարհին հանդիպեց «ամբարտակ»-ի՝ հանձնի դեռ մինչև 1917 թ. Հոկտեմբերին ստեղծված զանազան բուրժուալական «ազգային» կառավարությունների:

Այսպես, ուկրաինական ուղղան, սոցիալիստական հեղափոխության դեմ պայքարելու համար, համախմբելով հականեղափոխական ուժերը, 1917 թ. նոյեմբերի 14-ին իրեն հայտարարեց բարձրագույն իշխանություն՝ Ռուսակայի ամբողջ տերիտորիա-

յի վրա: Ռազմայի դլիսավոր քարտուղարությունը բանակցությունների մեջ է մտնում դլիսավոր հրամանատարի կայանին կից հականեղափոխական համարանակային կոմիտեյի հետ՝ խորհրդային իշխանության դեմ պայքար մղելու համար համառուսաստանյան կառավարություն կազմակերպելու մասին: Ռազման համաձայնություն է կնքում ֆրանսական կառավարության ներկայացուցչի հետ՝ իմպերիալիստական պատերազմը շարունակելու մասին: 1917 թ. դեկտեմբերի 8-ին ուկրաինական ռազմական գործարքում է թույլ տալ խորհրդային հեղափոխական զորամասերին Ռուսական կառավարությունը գնալու՝ Դոնում գեներալ Կալեդինի հականեղափոխական ապահովությունը ճնշելու համար:

Անդրկովկասում, 1917 թ. նոյեմբերի 11-ին, վրացական մենշևիկների ղեկավարությամբ կազմակերպվում է այսպես կոչված «Անդրկովկասյան կոմիտեի համար»՝ սոցիալիստական հեղափոխության դեմ կռվելու համար:

Բաշկիրիայում, 1917 թ. ոգոստոսին կազմակերպված բուրժուանացիոնալիստական «բաշկիրական կենտրոնական խորհուրդը» բացահայտ կերպով գուրս է դալիս խորհրդային իշխանության դեմ:

Դրիմում, բուրժուա-կալվածատիրական «Միլի Ֆիրկա» կուսակցությունը կազմակերպում է ղուրությայի կառավարություն և բացահայտ պայքարի մեջ է մտնում խորհուրդների իշխանության դեմ: Ազգայնական բուրժուական «կառավարությունների» գլուխ են անցնում—Հայաստանում՝ դաշնակցությունը, Ադրբեջանում՝ մուսավաթը:

«Ազգային դրոշակը, —ըրում է ընկ. Ստալինը, —մեջ են զցում մասսաներին խարելու համար միայն, իրեւ ժողովրդականություն վայելող մի դրոշակ, վորը հարմար է ազգային բուրժուազիայի հականեղափոխական դիտավորությունները քողարկելու համար»¹:

Անդլիայի, ֆրանսիայի, Գերմանիայի և մյուս յերկրների իմպերիալիստական բուրժուազիան ակտիվ մասնակցություն է ունենում բուրժուանացիոնալիստական կառավարությունների ստեղծման մեջ, ձգտելով հեղափոխական Ռուսաստանի կենտրոնակայի անջատելու ծայրամասերը, առանձնապես հումքի, վառելիքի

¹ Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1937 г., стр. 54.

ու պարենի պաշարներ ունեցող վայրերը։ Այսպես, որինակ, գերմանական խմբերի լիզմի ակտիվ ոգնությամբ տեղի յե ունենում անդեկովկասյան բուրժուական սերմի կաղմագործումը։

«Իրենց սեփական» ազգայնական բուրժուագիայի ամբողջ դորժունելությունը (դաշնակցած իմպերիալիստների հետ) ձևնշված ազգությունների բանվորներին ու չքալոր-միջակային մասներին ե՛լ ավելի ցույց տվեց, վոր իրենց ազատագրումը ճշնչումից, իմպերիալիստական ստրկությունից՝ կարող ե իրականացվել միայն Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի հետ դաշնակցած։

Այսպես սկսվեց ծայրամասերի բանվորների ու աշխատավորական մասսաների պայքարն ընդդեմ զանազան «ազգային կառավարությունների», վորոնք հանդես եյին յեկել ամեն տեսակի «ազգային խորհուրդների», մարզային «կառավարությունների» ձեւրով։ Այդ «կառավարությունները» իրենցից ներկայացնելով «սեփական» ազգային բուրժուազիայի տիրապետությունը, ամբողջովին հակահեղափոխական եյին, նրանք «լսել անգամ չեյին ուզում սոցիալիստական հեղափոխության մասին» (Ստալին)։

«Զարմանալիք է, — գրում ե ընկ. Ստալինը, — վոր որեցոր աճում եր նրանց կոնֆլիկտն «իրենց» ազգային կառավարությունների հետ։ Հոկտեմբերյան հեղաշրջումը միայն ամրապնդեց ծայրամասերի բանվորների ու գյուղացիների դաշինքը Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ՝ վորեշնչելով սոցիալիզմի հաղթանակի հավատով։ Իսկ «ազգային կառավարությունների» պատերազմն ընդդեմ խորհրդային իշխանության, նրանց կոնֆլիկտն այս «կառավարությունների» հետ հասցրեց մինչև կապերի միակատար խորումը նրանցից, մինչև բացորոշ ազստամբությունը նրանց դեմ»¹։

Ուկրաինայի հեղափոխական բանվորներն ու գյուղացիները միկրուացիայի յմթարկեցին բուրժուական ուկրաինական «ուգան»։ նույնպիսի վիճակ բաժին ընկավ Կալեղինին, կոռոնլովին, «Սիրիրի կառավարությանը», «ավտոնոմ կառավարությանը»— թուրքեստանում և մյուսներին։

Անցյալներում ձևված ազգային ծայրամասերի բանվորների ու աշխատավորական մասսաների պայքարն իրենց լիակատար ե իս-

¹ Стalin, Марксизм и национально-колониальный вопрос, Паргиздат, 1937 г., стр. 54.

կական ազգային ազատագրության համար հաջողությամբ պսակվեց, վորովհետեւ բոլոր այդ «ազգային կառավարություններն», ինչպես ընկ. Ստալինն եր ասում, գրոհի յենթարկեցին յերկու կողմից՝ դրսից—խորհրդային իշխանության կողմից և ներսից— «իրենց սեփական» բանվորների ու գյուղացիների կողմից։

Միայն սոցիալիստական հեղափոխության հաղթանակը ըերեց ազգային ձևնշման վոչնչացում։ «... խորհրդակների հաղթությունը և պրոլետարիատի գիլատառության հաստատումը հանդիսանում էն ազգային ձևնշումը վոչնչացնելու, ազգային հավասարություն հաստատելու, ազգային վորքամասնությունների իրավունքներն ապահովելու հիմնական պայմանը»¹։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ջարդելու հանձնեց բուրժուական պետությանը—շահագործվողներին կեղեկելու և ձնչելու այդ մեքենան։ Բոլցեիկների կուսակցության գեկալարությամբ բանվորներն ու գյուղացիներն սկսեցին կառուցել իրենց սեփական պետությունը, պրոլետարական պետությունը։ Կալվածատերների ու կապիտալիստների գեմով զպգված կատաղի դասակարգային պայքարի բովում նրանք սկսեցին ուրբագծել պրոլետարական սոցիալիստական պետության հիմնական դրույթները։

Խորհրդային պետության հիմնական գրույթները սահմանվեցին Խորհրդակների Համառուսական II պատմական Համագումարի վորոշումներով, վորը (Համագումարը) բացվեց 1917 թ. Հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին)։

Բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին ուղղված՝ Խորհրդակների II Համագումարի կողմից ընդունված գիմումի մեջ ասվում եր։

«Հենվելով բանվորների, զինվորների ու գյուղացիների վեթ խարի մեծամասնության կամքի վրա, հենվելով Պետրոգրադում կատարված՝ բանվորների ու կայազորի հաղթական ազստամբության վրա, Համագումարն իշխանությունը վերցնում է իր ձեռքը»։

«Համագումարը վորոշում ե՝ ամբողջ իշխանությունը տեղերում անցնում է բանվորների, զինվորների ու գյուղացիների պատմամակուրների Խորհրդակներին...»։

¹ Стalin, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздан, 1937 г., стр. 67.

Խորհուրդների Համառուսական Ա Համագումարի ազգարարեց, վոր պրոլետարական պետության հիմքը կազմում են խորհուրդները—պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևը:

Համագումարի գիմումի մեջ արձանագրված եյին խորհրդային իշխանության աղդային քաղաքականության ոկրունքները. Ռուսաստանում բնակվող բոլոր ազգերին ապահովվում եր ինքնորոշման խակական իրավունք—ընդհուպ մինչեւ անջատումն, այսինքն ինքնուրույն պետության ստեղծումը: Դիմումը նշում եր նաև բանվորների ու գյուղացիների հեղափոխական բանակի հիմունքները, նրա լիակատար գեմոկրատացումը:

Խորհուրդների Համառուսական Ա Համագումարի պատմական վորշումներն եյին՝ լենինի գեկուցումների առթիվ ընդունված դեկրետները՝ հաշտության մասին, հողի մասին:

Հաշտության մասին ընդունված դեկրետով համագումարը վերացրեց ցարական գաղտնի դիվանագիտությունը, հայտարարեց իմպերիալիզմի հետ կապերի խզման և թալանչխական պատերազմից դուրս գալու մասին:

Հողի վերաբերյալ գեկրետով վերացվում եր հողի կալվածատիրական սեփականությունն—անհապաղ և առանց վորեն փրկադնի: Խորհրդային իշխանությունը խեց և գյուղացիությանը հանձնեց 150 միլիոն հեկտարից ավելի նախկին կալվածատիրական, պետական ու վանքապատկան հողեր:

Լենինը, բնորոշելով ցարական Ռուսաստանի հողատիրությունը, գրում եր. «Տասը միլիոն գյուղացիական տնտեսություններն ունեն 73 միլիոն գեսատին հող: Քսանութ հազար աղովական ու կելտոտ լենդորդեր ունեն 62 միլիոն գետյատին»¹:

Մեկ կալվածատէր միջին հաշվով ուներ նույնքան հող, ինչքան 300 գյուղացիական տնտեսությունները միասին վերցրած: Հողի մասնավոր սեփականության վերացումը, կալվածատիրական հողատիրության լիկվիդացիան ազատեցին մեր յերկրի գյուղացիությանը կալվածատիրական-կուլակային ամենակալ իշխանությունից:

Խորհուրդների Ա Համագումարը կազմեց բանվորա-գյուղացիական կառավարություն—ֆողովրդական Կոմիսարների Խորհուրդ, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ:

Դավաճանություն եր բանվոր զասակարդի հանգիւա, պրո-

լետարիատի գեկտատուրայի դեմ ուղղակի պայքար եր հեղափոխության գավաճաններ կամենելի, Զինովյեվի, Ռիկովի պահանջը՝ բոլոր այսպես կոչված «սոցիալիստական» կուսակցություններից կառավարություն կազմելու մասին: Նման կառավարություն ստեղծելը կնշանակեր պրոլետարիատի դիկտատուրայի լիկվիդացիա, կապիտալիզմի ռեստավրացիա: Հակահեղափոխական արտելք (Վալաչա) եր եսերների, նրանց հետ մեկտեղ նաև ժողովրդի թշնամի, դավաճան Ռիկովի և մյուսների յելույթը, վորով նրանք մամուլի ազատություն եյին պահանջում բուրժուական թերթերի համար:

Հեղափոխության շտրայկբեները կուսակցության դեմ, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ իրենց դավաճանական, ստոր պայքարում կազմակերպում են սարուտաժ, խորհուրդներում՝ աշխատանքի ձախողում:

Բանվոր դասակարգը, լենինի—Ստալինի կուսակցության դեկտարությամբ, մնչելով կալվածատերերի և բուրժուազիայի հակահեղափոխական դիմագրությունը, ամրացնում ե խորհուրդների իշխանությունը:

1917 թ. նոյեմբերի 15 (2)-ին հրապարակվեց ընկեր Ստալինի ձեռքով գրված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկրացիան»: Նրանում վորոշված եյին խորհրդային կառավարության ազգային քաղաքականության հիմունքները.

¶ 1) Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը:

¶ 2) Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորշման իրավունքն՝ ընդհուպ մինչեւ անջատումն ու ինքնուրույն պետություն կազմելը:

¶ 3) Բոլոր և ամեն աղդային ու աղդային-կրօնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը:

¶ 4) Ռուսաստանի տերիտորիայում բնակվող աղդային վուքարման սուվերենությունների և աղդադրական խմբերի ազատ զարգացումը»:

Խորհրդային իշխանության առաջին իսկ ամիսներին ժողովուրդական կոմիսարների Խորհուրդն ընդունեց մի շարք գեկրետներ, վորոնք անցյալներում ճնշված ազգություններին ակնհայտ կերպով ցույց տվին, վոր խորհրդային իշխանությանը միանգամայն խորժ և ամեն մի աղդային ճնշում, վոր խորհրդային իշխանության կառուցվածքը—մի իշխանություն, վորն ինտեր-

1. Լենին, Ըստ., տ. XI, ստ. 337.

Նացիոնալ է իր դասակարգային բնույթով—աշխատավորներին տանում է համախմբվելու ուղին:

Խորհրդային խշանության առաջին գեկրեաները և ամենից առաջ հաշտության ու հողի վերաբերյալ գեկրեաները, ինչպես և ազգային հարցի առթիվ յեղած միջոցառումներն ապահովեցին անցյալում ճնշված ազգությունների դյուլացիոնալիքը: «Խաղաղություն, ադրաբային հեղաշրջում և ազգությունների ազատություն—սրա՞նք են այն յերեք հիմնական մոմենտները, վորոնք ուսւական պրոլետարիատի կարմիր դրոշի շուրջը հավաքեցին անձայսիր Ռուսաստանի ավելի քան քսան ազգությունների դյուլացիներին»¹:

Հաջորդ կարենը բույն վիաստաթղթերն ու միջոցառումները, վորոնց մեջ մշակվում ելին խորհրդային պետության հիմունքները, հետեւյալներն ելին. Համառուսական կԳԿ (1917 թ. գեկտեմբերի 4) գեկրետը՝ «պատգամավորներին հետ կանչելու իրավունքի մասին», վոր հետագայում ձևակերպվեց ու ամրապնդվեց ՌԽՖՍՀ Սահմանադրության մեջ, վորակս պատգամավորներին հետ կանչելու իրավունք. գեկրետ (1917 թ. նոյեմբերի 25) դասերի ու քաղաքացիական աստիճանների վոչնչացման մասին. Համառուս. կԳԿ վորոշումը (1917 թ. նոյեմբերի 27) բանվորական վերահսկողության վերաբերյալ կանոնադրությունն ընդունելու մասին, վորակս արտադրության կառավարմանն անցնելու առաջին քայլը. Համառուս. կԳԿ և ԺԿԾ գեկրետը (1918 թ. գեկտեմբերի 15) ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդի կազմակերպելու մասին, վորակսի գեկրետի ընդունումը վճռական հարված հասցվեց Փարրիկաների ու գործարանների կապիտալիստական սեփականությանը:

Լենինը բացառիկ նշանակություն եր տալիս ժՏԳԽ (BCHX) կազմակերպելու վերաբերյալ գեկրետին: «Բանվորական վերահսկությունից, — գրում եր Լենինը, — մենք դնում ենք դեկտի ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհրդի ստեղծումը: Միայն այդ միջոցառումը, բանկերի և յերկաթուղիների ազգա-նայման հետ մեկտեղ, վորպիսին կիրառվի մոտակա որերս, մեզ հնարավորություն կտա ձեռնամուխ լինելու նոր սոցիալիստական անտեսության կառուցմանը»²:

¹ Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздан, 1937 г., стр. 87.

² Ленин, Соч., т. XXII, стр. 215.

1917թ. դեկտեմբերի 20-ին խորհրդային իշխանությունն ստեղծում է Հակահեղափոխության ու սաբուտաժի դեմ պայքառող Համառուսական Արտակարգ Հանձնաժողով (ՎՊՀ), վորը դարձալ «բուրժուազիայի պատուհասը, հեղափոխության արթուն պահպանը, պրոլետարիատի մերկացված սուրը» (Ստալին): ՎԶԿ-ի ստեղծումը ցույց տվեց, վոր Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ մեր յերկրի բանկուներն ու գյուղացիները սովորեցին պաշտպանել Խորհուրդների իշխանությունը, ջախջախիչ հարվածներ հասցնել Հակահեղափոխական տարրերին:

1917 թ. գեկտեմբերի 28-ին հրապարակվում են Համառուսական կղզի գեկտեմբերը՝ բանկերի ազգայնացման մասին։ Միայն պրոլետարիատի գիտատուրան կարող էր անցկացնել բանկերի ազգայնացում, վորով քայլայլում ելին կապիտալի տիրապետության հիմքերը և բազա յեր ստեղծվում սոցիալիստական պլանային տնտեսության անցնելու համար։

Ազգային հարցի դեկապարման ու գործնական լուծման համար խորհրդային իշխանությունը Հռկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ որերից ստեղծեց Ազգությունների Գործերի ժողովրդական կոմիսարիատ (Ազգային)՝ ընկեր Ստալինի գլխավորությամբ:

ԱԽԾԱՀ 140 միլիոն բնակչությունից (1921 թվականի ըստ) վելիկուսները կազմում են 75 միլիոնից վոչ ավելի, իսկ մնացած 65 միլիոնը ծայրամասերի վոչ-վելիկուսն ազգություններից են: Սակայն այդ ծայրամասերը, ուր կենտրոնացած էին հումքային, վառելիքի ու պարենային նշանակալի պաշարներ, արդյունաբերական և ռազմական տեսակետից ավելի պահառ են: Պարգացած, կամ ամենաեն զարգացած էլեկտ:

Ազգժողկոմատի ամբողջ գործունեցությունն անխղելիորեն կապված և յեղել կուսակցության և խորհրդային իշխանության՝ աղջային քաղաքականության բնագավառում կատարվելիք ձեռնարկումների հետ։ Ազգժողկոմատը հսկայական աշխատանք կատարեց ծայրամասերի տեղական աղջային բուրժուազիայի վարած հակահեղափոխական քաղաքականության մերկացման առաջարկում։

Կուսակցության և խորհրդային իշխանության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաջող իրականացման չնորոշված ամրացավ ու կոփվեց ամբողջ Ռուսաստանի բանվորների ու աշխատավոր գյուղացիների դաշնաքն ընդդեմ Ռուսաստանի ծայր-

բամասերի ազգային բուրժուական «կառավարությունների» դաշտերէ:

Անխնա պայքարելով ոռոսական հակածեղափոխական բուրժուակայի և ամեն տեսակի «ազգային կառավարությունների» դեմ, վոչնչացնելով Կալեղինի և մյուս սպիտակ գններայների սպիտակ-գվարդիական բանդաները, ճնշելով հակածեղափոխական խորվությունները, սարոտաժը, դաշտադրությունները, խորհրդային իշխանությունը հաղթականողն առաջ եր գնում և ամբապնդվում:

Խորհրդային իշխանության հաղթական յերթն իր արտահայտությունը գտապի «Ուչքեղիկայի» ցըման մեջ (6/1 1918 թ.), վոր կատարեց խորհրդային իշխանությունն այն բանից հետո, յերբ Լենինի-Ստալինի կուսակցության ճիշտ քաղաքականության ու տակտիկայի չնորհիվ աշխատավորության համար պարզորչ դարձավ «Ուչքեղիկայի» հակածեղափոխական եյությունը: Սահմանադրական ժողովի ընտրությունները, վոր տեղի ելին ունեցել դեռ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, այլ ևս չեցին արտացոլում դասակարգային ուժերի այն իրական հարաբերակցությունը, վոր առաջացել եր հեղափոխության հաղթանակի հետևանքով:

Այն բանից հետո, յերբ «Ուչքեղիկան» հրաժարվեց ընդունել «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան», հետևաբար բացահայտ կերպով դուրս յեկավ խորհրդային իշխանության դեմ, —նա ցըման յենթարկվեց: Բանլորներն ու աշխատավորները վողջունեցին «Ուչքեղիկայի», այդ հակածեղափոխական կենտրոնի ցրումը: Լենինը գրում եր. «... մենք կատարեցինք ժողովրդի կամքը, —կամք, վորն ասում ե՝ ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»¹: Կուսակցությունը Լենինի-Ստալինի դեկադարությամբ ջախջախեց հեղափոխության դավաճաններ կամենելի ու Խիկովի դիմադրությունը, վորոնք մենշեկիների ու եսերների հետ միասին պաշտպանում ելին հակածեղափոխական «Ուչքեղիկային»:

1918 թ. հոնվարի 24-ին Խորհուրդների Համառուսական III համագումարն ընդունեց Լենինի և Ստալինի մշակած «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան»: Դեկլարացիան ազգարեց, վոր՝

«1) Շառաստանը հայտարարվում ե բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների հանրապետություն: Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում ե այդ խորհուրդներին:

2) Խորհրդային մուսաստանի Հանրապետությունը հիմնվում է աղատ ազգերի աղատ միության վրա, վորպես խորհրդային ազգային հանրապետությունների Փեղերացիա»:

Այս, վոր ՌեֆՍՀ կոչվեց սոցիալիստական, չեր նշանակում, թե այն ժամանակ գոյություն ունեցող անտեսական կարգերը սոցիալիստական եյին: Լենինը հենց այն ժամանակ, Համառուսական III համագումարում, բացատրում եր. «... Խորհուրդների մեր հանրապետությունը սոցիալիստական ե, վորովհետեւ մենք վոտք դրինք այդ ուղին և այս խոսքերը չեն լինի դատարկ խոսքեր»²:

ՌեֆՍՀ հոչակումն ավարտեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մէծ հեղափոխությունից սկսված ժամանակաշրջանը, վորը լենինն անվանեց խորհրդային իշխանության հաղթական յերթ:

Հաղթակարելով տապալված շահագործող դասակարգերի կատարի դիմադրությունը, բոլշևիկների ղեկավարությամբ, պրոլետարիատն ու աշխատավորական մասսաներն ստեղծեցին «... Սոցիալիստական խորհրդային հանրապետության նոր պետական կարգեր, վորպես Ռուսաստանում ընակլող տարբեր աղերի աղատ հանրապետությունների Փեղերացիա»²:

«Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան» հանրապետության քաղաքական հիմքը հայտարարեց խորհուրդները, վորոնց պատկանում և ամբողջ իշխանությունը ինչպես կենտրոնում, այնպես ել տեղերում: Աշխատավորական մասսաների իշխանության վրակտարությունն ապահովելու համար դեկլրետավորվում եր աշխատավորության սպառազինումը, բանվորների ու գյուղացիների Սոցիալիստական Կարմիր Բանակի կազմակերպումը և ունեսոր դասակարգերի լիակատար զինաթափումը: Դեկլարացիան ազգարեց, իշխանությունն ապահովերի գաղափականությունից, առանց անեքսիաների ու կոնտրիբուցիաների դեմոկրատական հաշտության կնքումը՝ աղեղերի աղատ ինքորոշման հիման վրա:

1) Ленин, Соч., т. XXII, стр. 186.

2) Նույն աեղում, հջ 223:

«Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլացիան» խորհրդային իշխանության հիմնական խնդիրն եր հայտարարում՝ մարդու ձեռքով մարդու ամեն մի շահագործան փոչնչացումը, հասարակության դասակարգային բաժանման լինակատար վերացումը, շահագործողների անխնա ճնշումը, հասարակության սոցիալիստական կազմակերպության հաստատումը:

Խորհրդային իշխանության ազգային քաղաքականության սկզբունքներին լիովին համապատասխան, դեկլացիան հայտարարում եր խորհրդային իշխանության ձգտումը՝ «... սեղծել Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավոր դասակարգերի իրոք աղատ ու կամացոր և, հետեւարար, ամենի լրիվ ու հաստատուն դաշինք...», իրավունք վերապահելով յուրաքանչյուր աղդի բանվորներին ու գյուղացիներին ինքնուրույն կերպով վըճռելու Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիայի մեջ մտնելու հարցը: Դրանով վորոշվում եր Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիայի հիմքը:

Դեկլացիան փողունում եր Հայաստանի ինքնորոշման ազատության հռչակումը և իրանից (Պարսկաստանից) զորքերի արդեն սկսած դուրսբռումը: Դեկլացիան հայտարարում եր իմալերիալիզմի բարբարոսական գաղութային քաղաքականությունից—գաղութների ու փոքր յերկրների աշխատավորության անտանելի կեղեքման քաղաքականությունից լիսին խղվելու մասին:

Ընկեր Ստալինի գեկուցման առթիվ համագումարը վորոշում ընդունեց «Ռուսաստանի հանրապետության Փեղերալ հիմնարկների մասին», վորի (վորոշման) մեջ ուրվագծված Եյին ՌԽՖՍՀ պետական կառուցվածքի ընդհանուր հիմունքները:

Համագումարի՝ «Ռուսաստանի հանրապետության Փեղերալ հիմնարկների մասին» վորոշման մեջ սահմանված Եյին Փեղերացիայի բարձրագույն որդանեները: Իշխանության գերազույն որդանը հայտարարվում եր Խորհրդագների Համառուսական համագումարը: Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում իշխանության բարձրագույն որդանը հանդիսանում է գործադիր Կոմիտեն (ՎՀԱԲ): Համագումարը սահմանեց, վոր Ռուսաստանի Փեղերացիայի կառավարությունը հանդիսանում է ֆողովրդական Կոմիտարների Խորհրդը, վորն ընտրվում կամ փոփոխվում է ինչպես ամբողջությամբ:

Խույնակես և մաս առ մաս, Խորհրդագների Համառուսական համագումարի կամ Համառուսական կողմից: Համագումարի այդ վորոշման մեջ սահմանվում եցին կենարոնական խորհրդային իշխանության իրավունքներն ու պարտականությունները, կենարոնական խորհրդային իշխանություն, վորը պարտավոր և հոկել Փեղերացիայի հիմունքների պահպանմանը և ներկայացնել Ռուսաստանի Խորհրդագների իշխանությունը:

Բոլոր տեղական գործերը պետք ե վճակն աեղական խորհրդագների կողմից, իսկ բարձրագույն խորհրդագներին իրավունք եր վերապահվում տեղական խորհրդագների միջև հարաբերությունները կարգավորելու և նրանց միջև ծագելիք տարածայնությունը լուծելու:

Վերջապես, իր վորոշման մեջ համագումարը նշեց, վոր ՌԽՖՍՀ մեջ մտնող իրենց հատուկ կենցաղով ու ազգային կաղմով զանազանվող հանրապետությունների և մարզերի Փեղերալ ու մարզպային հիմնարկների մասնակցության յեղանակը և նրանց միջև իրավունքների սահմանադումը վորոշվում ե Համառուսական կողմից և Խորհրդային Համարկետությունների կողմից՝ այդ հիմնարկները կազմվելուց անմիջապես հետո: Միաժամանակ համագումարը հանձնարարեց Համառուսական կողմին՝ մշակել Խորհրդային սահմանադրություն:

Այսպիսով, III համագումարի այդ վորոշման մեջ գրվեցին ՌԽՖՍՀ ընդհանուր հիմունքները, վորպես Խորհրդային Ֆեդերացիայի, վորը կառուցվում և Ռուսաստանի գողովրդագների կամագուր միության վրա:

Խորհրդագների Համառուսական III համագումարի աշխատանքների նշանակությունը կենինը գնահատեց այսպես: «Յան Համագումարը, վոր ամրացրեց Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած նոր պետական իշխանության կազմակերպությունը, որպազծեց ուղենիցերը գալիք սոցիալիստական շինարարության՝ ամրող աշխարհի համար, բոլոր յերկրների աշխատավորների Համար»¹:

1918 թ. փետրվարին ստեղծվում է Կարմիր Բանակը, բանվորների ու գյուղացիների բանակը, վոր ձեւավորվեց «... վորպես մեծագույն մարտական հեղափոխական ուժ՝ ի սարսափ

¹ Ленин, Соч., т. XXII, стр. 223.

բանվոր դասակարգի թշնամիների, հուբախություն բռնը ճշնչ-
վածների ու ստրկացվածների»¹:

Իր գոյության առաջին իսկ որերից կարմիր Բանակին վի-
ճակվեց կովել ներքին ու արտաքին հակահեղափոխության ոպղ-
մական ուժերի դեմ:

Խորհուրդների III համագումարից հետո ընկած ժամանակա-
ըքչանը բացառիկ ծանր եր:

Դերմանական խմակերխմբմի բանակների հարձակումը խա-
փանեց ուրվագծված «ղաղաղը» և կուսակցության ու խորհր-
դային իշխանությանը հնարավորությունից զրկեց անմիջականո-
րեն անցնելու սոցիալիստական շինարարության այն խնդիրնե-
րին, վորոնք լենինի կողմից նախագծվում ելին դեռ 1918 թ.
մարտին:

Այդ ժամանակաշրջանում կուսակցությունը լենինի և Ստա-
լինի գլխավորությամբ վճռական պայքար մղեց ժողովրդի յերդ-
վյալ թշնամիների—Տրոցկու, Բուխարինի, Զինովյեվի գեմ՝
Բրեստի հաշտության պայմանագրի կնքման հարցի շուրջը:

Տրոցկին ու Բուխարինը, այսպես կոչված «ձախ» կոմու-
նիստների հետ միասին, անց ելին կացնում դավաճանական քա-
ղաքականություն, ձգտելով խափանել Բրեստի հաշտության կրն-
քումը: Նրանք հետապնդում ելին մի նպատակ՝ ուղղմական տե-
սակետից թույլ, զեռ չամրապնդված Խորհրդային յերկիրը ներս
քաշել զինված ընդհարման մեջ՝ խմակերխմբաների հետ և դրա-
նով իսկ գլուխ բերել խորհրդային իշխանության ջախջախումը,
միկվեդացիայի յենթարկել պրոլետարիատի գիլտատուրան:

Խորհրդային իշխանությունը կարվածատերերից և բուր-
ժուազիայից ժառանգություն ստացավ քայլքայլած տնտեսու-
թյուն: Մասսաները հոգնել ելին խմակերխմբական պատերազ-
մից: Հարկավոր եր դադարեցնել պատերազմը, ձեռք բերել դա-
դար Կարմիր Բանակը կաղմակերպելու համար, խորհրդային իշ-
խանությունն ամրապնդելու համար, սոցիալիստական շինարա-
րության համար:

Զնայած տրոցկիստների և բուխարինակամների նենդարարու-
թյուններին, հաշտության պայմանագրին ստորագրվեց: Դրան
շուտով Գերմանիայում հաջորդած հեղափոխությունն ազատեց

Խորհրդային Ռուսաստանը Բրեստի հաշտության ստրկական
պայմանագրից:

Պրոլետարական դիկտատուրայի լկտի թշնամիները—Բուխա-
րինը և իր այսպես կոչված «ձախ» կոմունիստների խմբակը,
Տրոցկին ու իր համախոհները, ձախ եսերների հետ միասին
կազմակերպեցին անլուր չարագործություն: Նրանք դավադրու-
թյուն կազմակերպեցին, վորպեսզի տապալեն խորհրդային կա-
ռավարությունը, վորպեսզի ձերբակալեն ու սպանեն լենինին,
Ստալինին, Սվերդլովին:

Բուխարինի ուղղակի հրամանով ու եսերների հետ նրա
կնքած համաձայնությամբ, եսեր-տեռորիստուհի Կապլանը 1918
թ. ոգոստոսի 30-ին կրակեց լենինի վրա: Ժողովրդի թշնամի
Բուխարինի այդ հեշալոր հանցագործությունն անառարկելի
պարզությամբ ապացուցվեց հակախորհրդային «աջ-տրոցկիստա-
կան բլոկի» դատավարության ժամանակ:

Այդ պայմաններում, չնայած բացառիկ ծանր իրադրությա-
նը, կուսակցությունն ուժեղ աշխատանք է տանում ՌԽՖՍՀ պե-
տական շինարարության գծով:

Խորհրդային Ֆեդերացիայի ստեղծման գործում հսկայական
քաղաքական նշանակություն ունեցան ընկեր Ստալինի ցուցում-
ները, վոր նա տվեց Ազգային կոմիտեի կողմից Կապլանի, Ռեֆայի,
Որենբուրգի, Յեկատերինորուրդի խորհուրդներին, Թուրքեստանի
յերկրամասի Ժողկոմիտորհին և մյուսներին ուղղված դիմումի
(1918 թ. ապրիլ) մեջ: Ընկեր Ստալինը մատնանշեց, վոր տեղե-
րում վորոշ Խորհուրդներ սխալ են վորոշել՝ ամենեկին հրաժար-
վել ամեն մի ավտոնոմիայի կիրառումից: Ընկեր Ստալինը դրում
եր. «Վու թե ավտոնոմիայի բացասումն, այլ նրա ընդունումն և
հանդիսանում Խորհրդային իշխանության հերթական խնդիրը:
Անհրաժեշտ ե միայն այդ ավտոնոմիան կառուցել տեղական խոր-
հուրդների բազմի վրա, և միայն այդ ճանապարհով իշխանու-
թյունը կարող ե դառնալ ժողովրդական և մասսաների համար
հարազատ, այսինքն՝ անհրաժեշտ ե միայն, վոր ավտոնոմիան
տագանովի իշխանությունը վու թե տվյալ աղբի վերնախավե-
րին, այլ նրա ներքնախավերին: Դրանում ե ամբողջ եյու-
թյունը...»:

Ընկեր Ստալինը նախազդուշացնում եր ծայրամասերի խոր-
հուրդներին՝ ընդդեմ բուրժուա-նացիոնալիստական խմբակների
հակահեղափոխական փորձերի՝ խորհրդային ավտոնոմիաների

¹ Стalin, О трех особенностях Красной Армии, Воениздат, 1938 г., стр. 3.

Հիմնադիր համագումարների համար ընտրություններ անցկացնելու —ազգային կուրիանների (ընտրախմբերի) բաժանումով։ Ազգային կուրիանների կազմակերպումով բուրժուական նացիոնալիստները ձգտում եյին անջրպետներ դնել աշխատավորական մասների միջև և ամբաղնդել այդ անջրպետները։ «Հիմնադիր համագումարների ընտրությունների հիմք և ավտոնմիայի ֆունդամենտ պետք է ծառայի վոչ թե ազգությունների աշխատավորական դեմքրատական մասսաների բաժանումն առանձին ազգային խմբերի, այլ նրանց միացումն ու համախմբումը համապատասխան խորհրդային կազմավորությունների չորջը»։

Գիմումը պարզորոց կերպով նշում եր Շուսաստանի Խորհրդադատին Սոցիալիստական Ֆեդերացիայի պետական շինարարության ուղին։

Խորհրդաների Համառուսական III համագումարի վորոշմանը համապատասխան, Համառուսական ԿԳԿ-ը 1918 թ. ապրիլի 1-ի նիստում կազմեց Սահմանադրությունը մշակող հանձնաժողով։

Սահմանադրական հանձնաժողովն իր աշխատանքն սկսեց 1918 թ. ապրիլի 5-ից։ Հանձնաժողովի աշխատանքներն սկսվելուց վոչ շատ առաջ ընկեր Ստալինը «Ազքետիա» թերթի աշխատացի հետ ունեցած գրույցի ժամանակ շարադրեց խորհրդային ֆեդերացիայի հիմունքները։

Ընկեր Ստալինը մշակեց թեղիններ «Բուսաստանի Խորհրդային Հանրապետության Ֆեդերացիայի տիպի մասին» և «Խուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության Սահմանադրության ընդհանուր դրույթները»։ Ընկեր Ստալինի այդ ցուցումները դրվեցին Սահմանադրական հանձնաժողովի աշխատանքի հիմքում։ Հանձնաժողովի մշակած Սահմանադրության նախադիմը քննության առնվեց ՌԿ(Բ)Կ կե հատուկ հանձնաժողով։ Լենինի նախադահությամբ։

ՌԽՖՍՀ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

1918 թ. հուլիսի 10-ին Համառուսական Վ Համագումարն ընդունեց առաջին Խորհրդային Սահմանադրությունը—ՌԽՖՍՀ Սահմանադրությունը։

Խորհրդաների Համառուսական Վ Համագումարն իր վորոշ-

ման մեջ նշեց, վոր Խորհրդաների Համառուսական III համագումարի կողմից ընդունված «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան» Խորհրդային Հանրապետության Սահմանադրության հետ միասին կազմում եւ «Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության միասնական հիմնական որենքը»։

Այն իրադրությունը, վորի ժամանակ ընդունվում եր ՌԽՖՍՀ Սահմանադրությունը, ծայր աստիճան լարված եր։ Ցերիտասարդ Խորհրդային Հանրապետությանը վիճակվեց ընդհարվելու իմպերիալիստական պետությունների բացորոշ ուղմական ինտերվենցիայի հետ։

Ուկրաինան ոկուտացիայի յեր յենթարկվել գերմանական իմպերիալիզմի բանակի կողմից։ Զեխոսովվակյան լեզիոնները, եսերների ու կալվածատիրական-կուլակյահն ապստամբ խմբերի ակտիվ մասնակցությամբ, 1918 թ. կեսերին գրավեցին համարյա ամբողջ Արևմտյան Սիրիոս և Պովոլժյեյի զգալի մասը։ Գեներալ՝ Կրասնովը կազմավորեց հակահեղափոխական ուժերը՝ Դոնում։ Հյուսիսային Կովկասում կազմավորվում եյին Դենիկինի ապագա «կամավորական» բանակի սպիտակ-գլարդիական բանդաները։

1918 թ. մայիսի 24-ին Համառուս։ ԿԳԿ-ը դեկրետ ընդունեց Կարմիր Բանակի պարտադիր զորահավաքի մասին, իսկ Խորհրդաների Համառուսական Վ Համագումարի կողմից սահմանվեց ընդհանությունը։

Խորհրդային Հանրապետության ներքին դրությունը ծայր աստիճան բարդանում եր պարենային ճգնաժամի հետևանքով։

Խորհրդաների Համառուսական Վ Համագումարի աշխատանքների ժամանակ (6—7 հուլիսի) ձախ եսերները՝ դավաճան Բուլիարինի և «ձախ» կոմունիստների հետ համաձայնության յեկած՝ խոռվություն բարձրացրին խորհրդային իշխանության դեմ։ ՌԽՖՍՀ Գերմանիայի դեմ պատերազմի մեջ քաշելու պրովոկացիոն նպատակ հետապնդելով, նրանք սպանեցին գերմանական դեսպան Միլրախին։ Հակահեղափոխական խոռվություններով, գալադրություններով բռնված եր յերկիրը։

Այսպես եր այն իրադրությունը, վորի պայմաններում ընդունվում եր ՌԽՖՍՀ առաջին Սահմանադրությունը, վորը հանդիսացալ պրոլետարիատի հաղթական դրոշը սոցիալիզմի համար մղված պայքարում։

Ի՞նչը հանդիսացավ այն հիմքը, վոր բնորոշեց Ռեփուլ ուղղակի Սահմանադրության բովանդակությունը:

Պրովետարիատի դիկտատուրան, հանձին հզոր համառուսական խորհրդային իշխանության—ահա թե ինչն եր բնորոշում ՌԽՖՍՀ առաջին Սահմանադրության բովանդակությունը։ Սահմանադրությունն արտացոլելով յերկրում դասակարգային ուժերի հարաբերակցությունը, արձանագրեց հաղթանակած պրովետարիատի տիրապետությունը։

Հենին այդ առթիվ գրում եր-

«Յերբ Սահմանադրությունը դրանից հետո արձանադրեց թղթի վրա այն, ինչ կյանքը վճռեց—կապիտալիստական, կալվածատիրական սեփականության վերացում, և ավելացրեց, զորքանվոր դասակարգն ըստ Սահմանադրության ունի ավելի իրավունքներ, քան զյուղացիությունը, իսկ շահագործողները չունեն վոչ մի իրավունք—դրանով արձանադրվեց այն, զոր մենք դասակարգի տիրապետությունն իրականացրինք, վրոր մենք մեղ հետ կապեցինք բոլոր խավերի ու մասն խմբերի աշխատավորներին»¹:

ԱԽՎԱՀ Սահմանադրությունն արձանագրեց, վոր Խոր-Հուրդները հանդիսանում են պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևը:

Սահմանադրությունը յելնում եր պրոլետարիատի ղեկատա-
տուրայի բարձրագույն սկզբունքից—բանվոր դասակարգի դա-
շինքից՝ գյուղացիության հետ, բանվոր դասակարգի ղեկավա-
րությամբ։ Խորհրդային պետության մեջ բանվոր դասակարգի
ղեկավար գերը Սահմանադրությամբ ամրացվում եր նաև խոր-
հուրդների ընտրություններում՝ գյուղացիության համեմատու-
թյամբ բանվոր դասակարգի վորոշ առավելություններով։ Ինչ-
պես հայտնի յեւ, քաղաքային խորհուրդներն, այսինքն պրոլետա-
րական կենտրոնները, իրենց ներկայացուցիչներն եյին ուղար-
կում խորհուրդները, որինակ՝ խորհուրդների համառուսական
համագումարները՝ 25 հազար ընտրողից 1ներկայացուցչի նորմա-
յով, իսկ խորհուրդների նահանգական համագումարները՝ 125
հազար բնակչից 1 ներկայացուցչի նորմայով։

Բանվոր դասակարգի համար այս առավելությունները մտցը-
վեցին այն ժամանակ, յերբ դյուզացիները մանր սեփականատե-

ըեր եյին, գյուղում դեռ՝ զգմալքը յան ձկնաբանութեան աղջկեցությունը:

Սահմանադրությունը լայնա է կազմությունով և ստուգայի մեջ է բարձրացնելու համար պահանջական է լինութիւնը:

Որենսդրականմադրությունը առջևապես պատվուի երեսն առաջնային համարակալիք է բարեհաջուկ է առ սակ բարձրացած է իշխանության առաքենալիքն արդիքը. զողովը, անտառանուրը, ընդերքն ու զրերը, գյուղականութենական ժողովարկությունները, կարմաճնենին իրենց կենդանիք առ յալ ինչի հնատարություն չայտարարվում է ին համաժողովի պարագան սեղանի կանություններուն:

Սահմանադրությունը Համատապնդում եր ինքը զրդացն Փեղերացիայի վերաբերյալ Հիմնական դրույթները, գոր արձանադրված ելին «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների գեկլարացիայի» մեջ? Նրանում լրովին արձանագրը փած են նաև այն հիմնական դրույթները, գոր մշակել ե ընկեր Մտավինը և ընդունել ե Ոորչուրդների Համառուսական Առաջնական արքայի արքունությունը և առաջնական արքունությունը Հանրապետության Փեղերաց Հիմնարկության մասնակի առաջնական արքունությունը:

ԱԽՖՍՀ Սահմանադրության 11-րդ Հոդվածն ասում էր.
«Հատուկ կենցաղով և ազգային կազմով տարբերվող մարզերի խորհուրդները կարող են միանալ վորպես ամսություն մարզային միություններ, վորոնց գլուխ, ինչպես և ընդհանրապես աճեն մի մարզային միավորման գլուխ, վոր կարող է կազմվել, կանգ-

¹ Ленин, Соч., т. XXV, стр. 104.

նած են խորհուրդների մարզային համագումարները և նրանց գործադիր որդանները»։ Այս հիմնական դրույթները Սահմանադրության նաև իշխանության բարձրագույն որդանների կառուցվածքում։

Սահմանադրությունը ձևակերպեց և որենսդրական կարգով վավերացրեց աշխատավորների համար իրավունքների մաքսիմում, ապահովելով նրանց համար ժողովների, մամուլի, միտինգների ու յերթերի ազատություն։

Ճանաչելով ազգերի ու ցեղերի իրավահավասարությունը, Սահմանադրությունը հիմնական որենքի հակասումն և հայտարարում ազգային հատկանիշով վորեւ արտօնություն ու առավելություն կամ ազգային փոքրամասնությունների վորեւ ճնշում և իրավահավասարության սահմանափակում թույլատրելը։

ՈՒԽԾ պետական կառուցվածքը կերտված եր խորհրդային դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով։

Գետական կառուցվածքի ամբողջ սիստեմը, ընտրական իրավունքն ապահովում եյին աշխատավորների լայն մասնակցությունն ու ընդդրկումը պետության կառավարման գործում, նրանց վերահսկողությունն իշխանության որդանների աշխատանքների մրա։ Սահմանադրությունն արձանագրում եր ընտրողների՝ իրենց պատղամավորին ամեն ժամանակ հետ կանչելու իրավունքը։

ՈՒԽԾ Սահմանադրությունը սոցիալիստական կարգերի իրականացման խնդիրն եր դնում։

ՈՒԽԾ Սահմանադրությունն արձանագրում եր խորհրդային իշխանության կառուցման այն փորձը, վոր կուտակել եյին չահագործողներին տապալած բանվոր դասակարգը, աշխատավորները։ Նա արձանագրում եր խորհրդային պետության հիմունքները, վորոնք կերտվել եյին դասակարգային կատաղի պայքարում։

Անմիջականորեն Լենինի և Ստալինի կողմից մշակված 1918թ. ՈՒԽԾ Սահմանադրությունը հանդիսանում եր Խորհրդային առաջին Սահմանադրությունը, վոր որինակ դարձավ հետագայում կազմավորված Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Սահմանադրությունների համար—բելոռուսականի՝ ընդունված 1919թ. փետրվարի 4-ին, ուկրաինականի՝ ընդունված 1919թ. մարտի 10-ին, աղբյեղանականի՝ ընդունված 1921թ. մայիսի 19-ին։

Իրականացնելով խորհրդային, սոցիալիստական դեմոկրատիզմը, ՈՒԽԾ Սահմանադրությունն ըստ ամենայնի ոժանդակեց աշխատավորների համախմբմանն ու կազմակերպմանը։ Սահմանադրությունն ապահովեց աշխատավորների համար թերթերի ու գրքերի հրատարակության նյութական միջոցները, ժողովների համար շենքերը, ապահովեց կանանց իրավահավասարությունը, որենքով նրանց տալով տղամարդկանց հավասար իրավունքներ, զինվորական ծառայողների լիակատար քաղաքացիական իրավունքները և այլն։

Խորհրդային դեմոկրատիզմը, վորի հիմնական սկզբունքները դրվում եյին պլրութարիատի դիկտատուրայի պետության ամրապնդման համար մղվող կատաղի պայքարի բովում, իր բնույթով սոցիալիստական ե։ Լենինը, բնորոշելով խորհրդային դեմոկրատիզմի սոցիալիստական բնույթը, գրում եր։

«Խորհրդային—այսինքն պլրութարական, նրա կոնկրետ, տվյալ կիրառմամբ—դեմոկրատիզմի սոցիալիստական բնույթը, նաև և առաջ, այն ե, վոր ընտրողներն աշխատավոր ու շահագործվող մասսաներն են, բուրժուազիան բացառվում ե։ յերկրորդ, այն ե, վոր ընտրությունների ամեն տեսակի բյուրոկրատական ձեռվանությունները և սահմանափակումները վերանում են, մասսաներն իրենք են վորոշում ընտրությունների կարգը և ժամկետները, ընտրվածներին հետ կանչելու լիակատար աղատությամբ։ յերրորդ, վոր աշխատավորների ավանդաբարի, խոշոր արդյունաբերական պլրութարիատի լավագույն մասսայական կազմակերպություն և ստեղծվում, վոր թույլ ե տալիս նրան զեկավարել շահագործվողների առավելադրույն լայն մասսաներին, քաշել նրանց ինքնուրույն քաղաքական կյանքի մեջ, դաստիարակել նրանց քաղաքականապես իրենց սեփական փորձով, վոր այդպիսով առաջին անգամ ձեռնարկվում ե այն բանին, վորպեսզի բնակչությունն իսկապես գլխովին սովորի կառավարել և սկսի կառավարել»¹։

ՈՒԽԾ Սահմանադրության ընդունումից հետո առաջին վերընտրական կամպանիան զյուղական ու վոլոստային խորհրդային վերընտրական կամպանիան զյուղական ու կատաղական իրավությունների վերընտրությունները յեղան, վոր անցկացվեցին ի կատարումն խորհրդային վորոշման (1918թ. նոյեմբերի 9)։ Համագումարի այդ վորոշումը թելագրվեց միջակների շրջադարձով գեպի պլրութարիատի կողմը, վոր

նըանկը կատարեցին չողություն հակածեղափոխության դեմ խորհրդավայրին իշխանության մղած քաջող պայքարի, չորհիվ խորհրդավայրին իշխանության միջազգային դիրքի ամրացման և չորհիվ 1918 թ. Հունիսի 1-ին գործելու տով ստեղծված չքավորության կոմիտեներ, կոմիտեներ, վորոնք հաջող պայքարան կույակության դեմ և նախապատրաստեցին կուլակության մերժուազումն ու անջատումը միջակից:

«Սորոկինի արժեքավոր խոստովանությունները» Հոդվածում, դրված 1918 թ. նոյեմբերի 28-ին, Լենինը նշում եր, որ «...Հատկապես այժմ միջին գյուղացիության մեջ ըրջադարձը գեղափառ կրոնի անխուսափելի յե...»¹, իսկ 1919 թ. մարտին կայացած կուսակցության VIII համագումարը միջակի ըրջադարձը պարունարիտի կողմն արդեն արձանագրեց իրեւ կատարված փաստ, վորոշելով:

«Խորհրդային իշխանության միանդամայն ճիշտ քաղաքականությունը գյուղում ապահովում ե, այդպիսով, հաղթական պրոլետարիատի դաշինքն ու համաձայնությունը միջակ գյուղացիության հետ»²:

Խորհրդների Համառուսական VII համագումարը վերևում հեշտակի վորոշման մեջ արձանագրեց.

«Ազգի իստական շինարարությունը կարող է ավարտվել միայն այն զեպքում, յերբ Խորհրդային կազմակերպություն ստեղծվի ամենուրեք գյուղերում՝ Խորհրդային Հանրապետության սահմանադրությանը ճշտորեն համապատասխան»: Խորհրդների VII համագումարի այս վորոշման համապատասխան և նրա հանձնարարության համաձայն Համառուսական ԿԳԿ-ը 1918 թ. դեկտեմբերի 2-ին վորոշում ե ընդունում «Վոլոստային ու գյուղական խորհրդների վերընտրությունների կարգի մասին», վորի մեջ հաստատապնդելով վերընտրություններում չքավորության կոմիտեների ղեկավար դերը, նշում եր վերընտրությունների ընթացքի կեկավարությունը հանձնարարելով նահանգգործկոմներին, հատկապես ընդգծում եր, վոր «յերեկվա շահագործողները մասնակցություն չեն կարող ունենալ խորհրդների ընտրություններում»:

Գյուղական ու վոլոստային խորհրդների կայացած վերընտ-

րությունները հոկայական գեր խաղացին գյուղխորհուրդներն ու վոլոստային խորհրդները կուլակային և խորթ տարրերից մաքրելու գործում: Վերընտրություններն ամրացրին գյուղական ու վոլոստային խորհրդները, վորպես պրոլետարական դիկտատորայի որդաններ գյուղում: Ընտրական սխտեմը հանդիսանում եր կուսակցության ու խորհրդային իշխանության հզոր գենքը չքավորագույն ու միջակ գյուղացիությանը խորհրդների շուրջը համախմբելու գործում, բանվոր զասակարգի ու գյուղացիության դաշինքն ամրապնդելու գործում:

1919 թ. առաջին կեսի ընթացքում, ըստ 45 նահանգների տվյալների, կայացել են գավառական խորհրդների 309 համագումարներ, և 1919 թ. յերկրորդ կեսին՝ գավառական խորհրդների 280 համագումարներ, ըստվորում այդ համագումարներին, 37 նահանգների ավալներով, մասնակցել են 48·055 հազար պատգամավորներ: Խորհրդների համագումարների հրավիրման վերաբերյալ ՌԽՖՍՀ առաջին Սահմանադրությամբ հաստատված ժամկետների համաձայն, չնայած ծավալված կատաղի քաղաքացիական պատերազմին, 1917 թ. նոյեմբերից մինչև 1920 թ. հունվարը կայացել են խորհրդների 117 նահանգական համագումարներ (32 նահանգում) և խորհրդների 595 գավառական համագումարներ: Լենինն ասում եր. «... քաղաքակրթված ժողովուրդների պատմության մեջ դեռ չի յեղել վոչ մի յերկիր, վորտեղ այնքան լայնորեն կիրառված լիներ պրոլետարական դեմոկրատիան, ինչպես մեզ մոտ, Ռուսաստանում... այնպիսի գրժամանակ, ինչպես պատերազմի ժամանակն ե, յերբ դաշերով սահմանված և արևմտայելվողական մարդու սովորության մեջ մտած յելլոպական սահմանադրությունների գործադրությունը համարյա թե ամբողջովին դադարեցվեց, այդ ժամանակ խորհրդային սահմանադրությունը—համագումարներում, խորհրդներում, վերընտրություններում կառավարմանը և կառավարման գործերի ինքնուրույն լուծման գործում ժողովրդական մասսաների մասնակցության իմաստով—կիրառվել ե տեղերում այնպիսի չափերով, ինչպես աշխարհում վոչ մի տեղ»³:

Խորհրդների Համառուսական VII համագումարը (5·9 դեկտեմբերի 1919 թ.) վորոշում ընդունեց «Խորհրդային շինարարության մասին», վորի մեջ խորհրդային շինարարության մի շարք կարելորպույն հարցերի լուծման հետ մեկտեղ ուրվագըծ-

1 Ленин, Соч., т. XXIII, стр. 294.

2 Ленин, Соч., т. XXIV, стр. 173.

ված եյին խորհուրդների աշխատանքում խորհրդային դեմոկրատիայի ավելի լայն ծավալումն ու ամրացումն ապահովող գործնական միջոցառումները։ Սրանց, առաջին հերթին, վերաբերում են համագումարի վորոշումը պատգամավորների կողմից ընտրողների հետ սերտ կապ ու լայն հաշվետվություն սահմանելու մասին։

Խորհուրդների Համառուսական ՎII համագումարի վորոշումները, նշելով խորհրդային կառավարման կազմակերպության բարելավման, խորհրդային դեմոկրատիայի ընդարձակման ու զարգացման գործնական ուղիները, կարեռագույն ետապ են հանդիսանում խորհրդային ընտրական սփառեմի ամրացման ու զարգացման պատմության մեջ, այդ սիստեմի գործնական իրականացման տեսակետից։

Խորհուրդների ՎII համագումարում յելույթ ունենալով, կենին ասում եր.

«... առաջին անգամ ՎII համագումարին հաջողվեց շինարարության գործնական խնդիրներին նվիրելու արդքան շատ ժամանակ, առաջին անգամ մեղ հաջողվեց սկիզբ դնել այն խնդիրների գործնական, անմիջականորեն փորձից քաղված քննարկմանը, վորոնք վերաբերում են խորհրդային տնտեսության լավագույն կազմակերպմանը, խորհրդային կառավարման լավագույն կազմակերպմանը»¹։

Այս ուղղությամբ եյին ընթանում նաև Խորհուրդների Համառուսական ՎIII համագումարի վորոշումները, վոր նա ընդունեց խորհրդային շինարարության հարցի վերաբերյալ (1920 թ. դեկտեմբերի 29)։ Համագումարը պնդելով Խորհուրդների Համառուսական ՎII համագումարի վորոշումները, նշեց, վոր անհրաժեշտ ե «...կատարել գյուղական, վոլոստային, քաղաքային և մյուս խորհուրդների ուղղությար վերընտրություններ՝ սահմանված ժամկետներում, ինչպես և կանոնավոր կերպով հրավիրել խորհուրդների Համագումարներ»։ այնուհետև Համագումարը հանձնարեց Համառուսական յերկու ամսվա ընթացքում մշակել հրահանգ՝ վոլոստային ու գյուղական խորհրդների ընտրությունների կարգի վերաբերյալ։

Խորհուրդների Համառուսական ՎIII համագումարի հրավիրման ժամանակ նեպին անցնելու դեմ դուրս յեկան հակառակուսակցական խմբավորումները՝ կուսակցության յերդվայթներ,

բանվոր դասակարգի դավաճաններ Տրոցկու և Բուխարենի գլուխությամբ։ Նրանց յելույթն, ինչպես և «բանվորական ոպողիցիայի» ամբողջապես հակահեղափոխական անարխո-օինդիկալիստական խմբակի յելույթը, ուղղված եյին դյուղացիության հետ բանվոր դասակարգի դաշինքի ամբապնդման դեմ, խորհրդային իշխանության դեմ։

Կուսակցությունը գլխովին ջարդեց պրոլետարական դիկտատուրայի թշնամիների այս նենդարարությունները։

Արդեն խաղաղ տնտեսական շինարարության պայմաններում Համագումարը Խորհուրդների Համառուսական ՎIX համագումարը (1921 թ. դեկտեմբերի 23—28) նորից քննարկեց խորհրդային շինարարության հարցերը (1921 թ. դեկտեմբերի 28)։

Ի փոփոխումն ՈՒԽՍՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի, Համագումարը սահմանեց, վոր խորհուրդների Համառուսական Համագումարները հրավիրվում են տարեկան մեկ անդամ։ Ավտոնոմ Հանրապետությունների, մարզերի Համագումարներն, ինչպես և նահանդական, դավառական և վոլոստային խորհրդների Համագումարները, հրավիրվում են տարեկան մեկ անդամ։ Համագումարի այդ նույն վորոշմամբ սահմանվեց, վոր քաղաքային, ավանային և գյուղական խորհրդների վերընտրությունները կատարվում են նույնպես տարեկան մեկ անդամ։

Համագումարի այս վորոշումներում պայմաններ եյին ստեղծվում բանվորներին ու աշխատավորական մասսաներին պետության կառավարման գործին ավելի ալանաչափ ու լայնորեն ներգրավելու համար։ Կուսակցության և խորհրդային իշխանության առաջ խնդիր եր ծառացած անհապաղ առաջ շարժել ժողովրդական տնտեսությունը, բարեկավել բանվորների ու գյուղացիների դրությունը, իսկ այդ խնդիրի լուծումը պահանջում եր աշխատավորական լայն մասսաներին ներգրավել պետական կառավարման, տնտեսական շինարարության գործին, վճռական պայքար մզել բյուրոկրատիզմի դեմ։

ՈՒԽՍՀ-ի — ՎՈՐՈՒՍ ԽՈՐՅՐԴԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՅԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՇԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բոլշևիկների կուսակցությունն իր գոյության հենց սկզբից հայտարարեց ազգերի ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչեւ անջատումը։ Բոլշևիկները միշտ ել գտնում եյին, վոր ամեն մի ազգ իրավունք ունի տնորինելու իր գործը սեփական ցանկության

1 Լենին, Ըօշ., տ. XXIV. ստ. 627.

Համաձայն, վոր վոչ վոք վոչ մի իրավունք չունի բռնի կերպով խառնվելու նրա կյանքին, քանդելու նրա զպրոցները, ջարդելու ազգի բարքերն ու սովորությունները, ճնշելու լեզուն, կրծատելու նրա իրավունքները:

Ընկեր Ստալինը գրում եր. «Ինքնորոշման իրավունք, այսինքն՝ ազգը կարող է անորինել իր գործը սեփական ցանկությամբ: Նա իրավունք ունի իր կյանքը տնօրինելու ավտոնոմիայի հիմունքներով: Նա իրավունք ունի ֆեռքբատիվ հանրապետությունների մեջ մտնելու մյուս ազգերի հետ: Նա իրավունք ունի բռլորովին անջատվելու: Ազգը սուվերեն է, և բոլոր ազգերն իրավահավասար են»¹:

Ճանաչելով ազգերի ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատումը, մեր կուսակցությունը յերեք չեր ասում այսպես, թե՝ յեթե ճանաչում ես ազգերի ինքնորոշման իրավունքն, ապա, ինչ ել ուզում ե լին՝ անջատվիր: Ընդհակառակը, ազգերի իրավունքները վոչ մի կերպ չսահմանափակելով ու վոչ մի բանում չկրծատելով, ճանաչելով նրանց լիակատար իրավահավասարությունը, մեր կուսակցությունը կանգնած է յեղել միասնական գետնկրատական պետության դիրքերում, պաշտպանելով ավտոնոմիան վրայես տարբեր ազգային կազմ ունեցող դեմոկրատական պետության ընդհանուր սկզբունք: Մեր կուսակցությունը միշտ ձգտել է տարբեր ազգությունների աշխատավորների կամացոր համախմբման: «Պրոլետարիատի գործն ե,—գրում եր Լենինը,— ավելի սերտորեն միախմբել բոլոր և ամեն ազգությունների բանվորների վորքան կարելի յե ավելի լայն մասսաներ, միաձուլել հանուն դեմոկրատական հանրապետության, հանուն սոցիալիզմի հնարավորին չափ լայն քատերաբեմում պայքարելու համար»²:

Բանվոր դասակարգի դավաճաններն ազգերի ինքնորոշման իրավունքը մեկնաբանում եյին բուրժուազիայի ոգտին և ի վնաս բանվոր դասակարգի ու աշխատավորության շահերի: Նրանք ցանկանում եյին սահմանագատել բանվոր դասակարգը, բաժանել նրան ազգային անջրաբետներով և միևնույն ժամանակ, ըստ եյության, բացասում եյին ազգերի ինքնորոշման իրավունքը, սահմանագակելով «կուլտուրայի» հարցերով և այլն: Այսպես, որին ավատրիական սոցիալ-դեմոկրատ, ներկայումս Փաշիզմի

¹ Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1937 г., стр. 14.

² Ленин, Соч., т. V, стр. 243.

գործակալ Շպրինգերը Բառերի հետ միասին առաջ քաշեցին այսպես կոչված «ազգային» կամ «կուլտուր-ազգային» ավտոնոմիայի «Քենորիան»:

Պատահական չե, վոր Ռուսաստանում «կուլտուր-ազգային ավտոնոմիային» կառչեցին բոլոր բուրժուական կուսակցությունները, բոլոր գույնի ողբարաւանաները, լիկվադատորները, բունդականները, մենչեւիկները, տրոցկիստները:

Դեռևս 1913 թ. Լենինը գրում եր. «Ռուսաստանի բանվոր դասակարգը պայքարել է և կապարարի «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» ուսակցիոն, մեշչանական, ազգայնական իդեալի գեմ»¹:

Մեր բոլցելիյան կուսակցությունը, ճանաչելով ազգերի ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև անջատումը, ազգային հարցը դիմում եր վորագես պրոլետարական հեղափոխության ուղերժների հարց, մի հարց, վոր յենթակա յե պրոլետարիատի հեղափոխական դասակարգային պայքարի խնդիրներին, վորագես մի հարց, վոր կարող է լիակատար կերպով ու իրավես լուծվել միայն պրոլետարական սոցիալիստական հեղափոխության հաղթանակի, պրոլետարիատի հաղթական դիկտուրայի հաստատման բաղայի վրա:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության հաղթանակը, կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալումը աղատազրեցին անցյալում ճնշված ազգերին ու ցեղերին: Յեվ խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին խել որերից գործնականում աղացուցեց, վոր նա ամբողջությամբ ու լիովին ապահովում ե ինքնորոշման լրիվ, իրական պատասխությունը:

Մեր կուսակցությունը միշտ բացահայտել է ռուսական ցարկոմի զազրելի գերը, վորն ազգերին իրար զեմ գրգռելու իր քաղաքականությամբ ջանում եր անջատել Ռուսաստանի ժողովուրդներին: Լենինը մատնանշում եր, վոր «...մենք անջատման իրավունքի կողմնակից ենք, նկատի ունենալով սեհարցուրյակային վելիկուսական նացիոնալիզմը, վորն այնպես աղտօնեց ազգային համակեցության գործը, վոր յերեմն ավելի մեծ կազ կսատացի ազգա անջատումից հետո!»²:

«Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների գելարա-

¹ Ленин, Соч., т. XVII, стр. 95.

² Նույն աեզում, էջ 90:

ցիա»—յում և խորհրդային իշխանության հաջորդ ակտերում ճանաչվում եր ազգեաթ անկախությունը, սովորենությունը, անշատման, ինքնուրույն պետություն կազմելու իրավունքը։ Այդպիսի ակտեր եյին Ժկի-ի 1917 թ. դեկտեմբերի 17-ի գեկրեան ուկրաինական ժողովրդական հանրապետության ճանաչման մասին, Ժկի-ի 1917 թ. դեկտեմբերի 31-ի գեկրեալ Ֆինլանդիայի անկախության ճանաչման մասին, Ժկի-ի 1918 թ. հունվարի 11-ի գեկրեալ և Ազգժողկոմատի դիմումը՝ «Թյուրքահայաստանի մասին», վորոնցով կարգադրվում եր գուրս հանել ոռուսական դրբք Թյուրքահայաստանից և վերջինիս ազատ ինքնորոշման իրավունք եր տրվում ընդհուպ մինչև անկախություն։ այնուհետեւ, Համառուս։ Կֆկ վորոշումը (1919 թ. փետրվարի 5)՝ Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ճանաչման մասին։

Խորհրդային իշխանության այդ ակտերը բացառիկ գեր խաղին ժողովուրդների յեղայրական, ազատ ու իրավահայտարմիավորման մեջ, իշխանությունը նվաճած ոռու բանվորների նկատմամբ անցյալում ճնշված ազգությունների աշխատավորների վստահության ու համակրանքի ամրապնդման գործում։

Լենինը, յելույթ ունենալով խորհուրդների Համառուսական III համագումարում, խորհրդային իշխանության ազգային քաղականությունն ու նրա արդյունքները հետեւյալ կերպ բնորոշեց։

«Ինկերնե՛ր, դուք հիշում եք, թե ինչպես գեռես մոտ անցյալում բուրժուական մամուլն առանց լոելու աղաղակում եր, թե մենք կործանում են ոռուսական պետությունը, թե մենք չենք կարողանում կառավարել, վորի հետեւանքով ել մեզանից հեռանում են բոլոր ազգությունները — Ֆինլանդիան, Ուկրաինան և այլն։ Մենք գործում եյինք առանց դիվանագետների, առանց իմպերիալիստների կիրառած հին յեղանակների, բայց մեծագույն հետեւանքն առկա յեւ, — հեղափոխության հաղթանակը և հաղթողների մեջ հետ միանալն ու մի հուժկու հեղափոխական ֆեղերացիա կազմելը»¹։

Կուսակցության և խորհրդային իշխանության ազգային քաղականությունը ժողովուրդների խորը վստահություն ստեղծեց իրար նկատմամբ և բացառիկ գեր խաղաց ՌԽՖՍՀ կազմակորման գործում։ «Միայն այս վստահության հիման վրա յեւ,

վոր կարողացավ առաջանալ ՌԽՖՍՀ ժողովուրդների այն անխորտակելի միությունը, վորի դեմ անզոր հանդիսացան «դիվանագիտական» բոլոր ու ամեն տեսակի խորամանկությունները և խնամքով իրագործված «բլոկադները»...»¹։

Խորհուրդների պետական շինարարության մեջ կուսակցության ու խորհրդային իշխանության լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունն իր գործնական, կոնկրետ իրականացումն առաջին հերթին գտավ ՌԽՖՍՀ մեջ — խորհրդային առաջին բազմազդ հանրապետության մեջ։

Վորոնցով են խորհրդային ֆեղերացիայի (միության) հիմքերը։

Խորհրդային ֆեղերացիայի հիմունքներն ամենից առաջ կայանում են նրանում, վոր տարբեր ազգերի աշխատավորների միավորումը կատարվում է բացառապես կամավորության, իրավահավասարության, փոխադարձ վստահության սկզբունքներով։ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների գեկլարացիան» սահմանում եր, վոր իմպերիալիզմի կեղեքիչ, կեղծ քաղաքականությունը նրա (իմպերիալիզմի) կողմից ճնշվող ազգությունների նկատմամբ «...աղետք և փոխարինվի դեպի Ռուսաստանի ժողովուրդների լիակատար փոխադարձ վստահությունը տանող, բացորոշ և ազնիվ քաղաքականությամբ»։ Այդ մասին ասվում եր նաև խորհրդային իշխանության մյուս կարևորագույն պատմական փաստաթղթում — «Աշխատավոր և շահագործվող ժողովրդի իրավունքների գեկլարացիայում» վորուել Փեղերացիան հայտարարվում եր վորպես պետական կառուցման պլան։ «Ճգտելով ստեղծել Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավոր դասակարգերի իրոք աղատ ու կամավոր և, հետեւարար, դրանով իսկ ամելի լիակատար ու հաստատուն միություն, խորհուրդների III համագումարը սահմանափակվում է Ռուսաստանի խորհրդային հանրապետությունների Փեղերացիայի արմատական սկզբունքները սահմանելով, թողնելով յուրաքանչյուր ազգի բանվորներին ու գյուղացիներին իրենց սեփական լիազոր խորհրդային համագումարում ինքնուրույն կերպով վորոշում ընդունելու՝ ցանկանում են արդյոք նրանք և ի՞նչ հիմնարկությունների մեջ»։

Դրանում ել կայանում է բուրժուական Փեղերացիայից խոր-

1 Стalin, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1937 г., стр. 88.

Հըրդային Փեղերացիայի արմատական, գլխավոր տարբերություններից մեկը: Պատմությունը ցույց տվեց, վոր բուրժուական բոլոր Փեղերատիվ պետությունների կազմավորումը (որինակ՝ ԱՄՆ-ի) ընթացել և բանություն, ճնշման ճանապարհով: Ամերիկայի Միացյալ Նահանգների ստեղծմանը նախորդել է Հարավային նահանգների (չտատների) արյունահեղ պատերազմը: Հյուսիսայինների հետ: Խորհրդային Փեղերացիայի հիմքը, բազան հանդիսանում ե պրոլետարիատի դիկտատուրան, խորհուրդների իշխանությունը, այն ժամանակի, յերբ բուրժուական Փեղերացիան կազմավորվում եր շահագործող դասակարգերի, մասնավոր սեփականության, աշխատավորների շահագործման ու ճնշման տիրապետության հիման վրա:

Ո՞վ ե, ուրեմն, հանդիսանում Ռուսաստանի Խորհրդային Ֆեղերացիայի անդամը, մասնակիցը (սուրյեկտը):

Ռուսաստանի Խորհրդային Ֆեղերացիայի սուրյեկտները, ինչում եր ընկեր Ստալինը «Իզեռտիա» թերթի աշխատակցի հետ ունեցած իր դրույցում (1918 թ. ապրիլի 3), հանդիսանում են «...միայն վորոշակի մարդեր, վորոնք բնականորեն զուգորդում են իրենց մեջ կենցաղի առանձնահատկություններ, ազգային կազմի յուրահատկություն և տնտեսական տերիտորիայի վորոշ մինիմալ ամբողջականություն...»: Հետեարար, միավորումը տեղի յե ունենում ազգային հատկանիշով, վոր նույնպես կազմում ե բուրժուական Փեղերացիայից խորհրդային Փեղերցիայի գլխավոր տարբերություններից մեկը:

Միանդամայն այլ ե բուրժուական Փեղերացիան: Այսպես, որինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգները «...կառուցվում ենին վոչ թե ազգային հատկանիշով և վոչ ել նույնիսկ տնտեսական, այլ միանդամայն պատահական, եմիգրանտ-կոլոնիստների կողմից այս կամ այն տերիտորիան պատահականորեն զավթելու հիման վրա...» (Ստալին): Ըստվորում կապիտալիստական յերկրներում Փեղերատիվ պետությունները գործնականում վերեն ածվել միանդամայն (ունիտար) պետությունների: Այսպես ե այժմ դրությունը ԱՄՆ-ում և մյուս բուրժուական Փեղերատիվ պետություններում:

Խորհրդային Փեղերացիան կառուցվում ե գենոկրատական ցենտրալիզմի սկզբունքով, այն ժամանակ, յերբ բուրժուական Փեղերացիան անխուսափելիորեն յելնում ե բյուրոկրատական ցենտրալիզմից, ձեականորեն միայն հանդիսանալով Փեղերատիվ

միավորում: Լենինը 1918 թ. մարտին գրում եր. «Ռուսաստանի Խորհրդային Հանրապետության որինակով առանձնապես ակնառու կերպով ե պատկերանում մեզ, վոր Փեղերացիան, վորը մենք մտցնում ենք և վորը մենք պետք ե մտցնենք, հենց ամենաուղիղ քայլը կլինի Ռուսաստանի զանազան ազգություններին մեկ միասնական դեմոկրատական կենտրոնացված խորհրդային պետության մեջ ամենաամուր կերպով միավորելու համար... դեմոկրատական կենտրոնացված ամեննեին չի բացառում ավտոնոմիան և Փեղերացիան»¹:

Խորհրդային սոցիալիստական Փեղերացիայի հենց այս հիմունքները ձևակերպվեցին ու որենսդրաբար վավերացվեցին ՌԽՖՍՀ առաջին Սահմանադրության մեջ:

Ընկեր Ստալինը բնորոշելով այն դրույթները, վորոնց հանդում ե կուսակցության ազգային քաղաքականությունը, մասնաւունը եր. «ա) ժողովուրդների անջատման իրավունքի ճանաչում, բ) մարդային ավտոնոմիա՝ տվյալ պետության սահմաններում մնացող ժողովուրդների համար, գ) ազգային փոքրամասնությունների համար՝ նրանց աղատ զարգացումն ապահովող հատուկ օրենքներ, դ) միասնական պրոլետարական անբաժան կուլտուրի, միասնական կուսակցություն՝ տվյալ պետության բոլոր ազգությունների պրոլետարների համար»²:

Խորհրդային իշխանությունը լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ իրականացրեց կենցաղի, լեզվի և այլ սուանձնահատկություններով տարբերվող մարզերի համար մարզային ավտոնոմիաների կառուցման պլանը: Գործնականում խորհրդային ավտոնոմիայի իրականացումը նշանակում է տվյալ ազգության մայրենի լեզվով իշխանության որգանների, դատարանի, դպրոցի ու աղքանինստրացիայի կազմակերպում. «...մայրենի լեզվով դպրոց, դատարան, աղքանինստրացիա, իշխանության որգաններ կազմակերպել՝ հենց այս ե, վոր նշանակում ե դործով իրականացնել խորհրդային ավտոնոմիան»³:

Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Ֆեղերացիան իրենից ներկայացնում ե խորհրդային ավտոնոմիայի սկզբունքներով կառուցման պետության ավտոնոմիան»:

1 Ленин, Соч., т. XXII, стр. 416.

2 Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1937 г., стр. 49.

3 Նույն աշուում, Էջ 02:

Հարկ ե առանձնապես ընդգծել, վոր խորհրդային ավտոնոմիան հնարավոր դարձնելով իր զարգացման ամենաբաղմաղան ձևերն ու աստիճանները, դրանով իսկ խորհրդային իշխանության ու կուսակցությանը թույլ տվեց ՌԽՖՍՀ պետական շինարարության մեջ «... ընդդրկելու Ռուսաստանի՝ կուլտուրական ու տնտեսական ամենատարրեր աստիճանների վրա կանգնած ծայրամասերի ամբողջ բազմազանությունը»¹:

Կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը խորհրդային ավտոնոմիայի վրա հիմնված խորհրդային ֆեդերացիայի մեջ դասան ՌԽՖՍՀ մեջ ազգային հարցի լուծման ուղիղ ճանապարհը: «Խորհրդային հանրապետությունների ֆեդերացիան պետական միության այն վորոնելի ձևն ե, վորի կենդանի մարմնացումը ՌԽՖՍՀ ե»²:

Խորհրդային ֆեդերացիան, հիմնված ավտոնոմիայի վրա, ապահովում ե ազգերի, ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների ազատ զարգացումը:

Բայց ինչո՞ւմն ե կայանում ազգային հարցի դասակարգային եյությունը խորհրդային իշխանության պայմաններում, յերբ արդեն արմատապես լիկվիդացիայի յե յենթարկված ազգային ճնշումը:

Խորհրդային իշխանության պայմաններում ազգային հարցի դասակարգային եյությունը կայանում ե նախկին պետական ազգի պրոլետարիատի և առաջներում ճշշված ազգությունների աշխատավորական մասսաների, հետևաբար, առավելապես նրանց դյուզացիության միջև ճիշտ փոխարարելություններ հաստատելու մեջ:

Թուս պրոլետարիատի և մյուս ազգությունների դյուզացիության միջև իրական ու հաստատուն դաշինքն ապահովող ճիշտ փոխարարելությունները հենց հանդիսանում են ազգային հարցի բուն խնդրի հաջող լուծման—առաջներում ճշշված ազգությունների հետամնացության վոչնչացման—անհրաժեշտ պայմանը: «Ազգային հարցի եյությունը Ռուսաստանում այն ե, վոր վոչնչացմանը ազգությունների այն հետամնացությունը (տնտեսական, քաղաքական, կուլտուրական), վորը մենք ժառանգել ենք անցյալից, վոր հետամնաց ժողովուրդներին հնարագորություն տանք կենտրոնական Ռուսաստանին հասնելու՝ թե՝

պետական, թե՝ կուլտուրական և թե տնտեսական տեսակետներից»³:

Իսկ այս ամենի համար անհրաժեշտ ե, վորպեսզի խորհրդային իշխանությունը լինի հարազատ ու մոտիկ բոլոր ազգությունների աշխատավորների համար, վորպեսզի խորհրդային իշխանության որդանները, գատարանը, դպրոցները կառուցվեն ավյալ ազգության լեզուն, բարգերը, կենցաղը, սովորություններն իմացող մարդկանցից, վորպեսզի, հետևաբար, իշխանությունը, դատարանը, դպրոցները, մամուլը գործեն նրա մայրենի լեզվով:

Կուսակցությունը կենինի և Ստալինի զեկավարությամբ գլխովին ջարդեց ժողովրդի թշնամիներ, բանվոր դասակարգի դավաճաններ բուխարինի, Պյատակովի, Զինովյեվի և մյուսների նենդարությունները, վորոնք ձգտում եյին հարված հասցնելու ժողովրդների, յեղբայրական միավորմանն ու համագործակցությանը, դուրս եյին գալիս ընդդեմ ազգերի ինքնորոշման իրավունքի, ընդդեմ Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերացիայի:

1919 թ. մարտին կազմավորվեց Բաշկիրական ավտոնոմ հանրապետությունը, 1920 թ.⁴ Թաթարական և Ղազախական (սկզբում Կիրգիզական) ավտոնոմ խորհրդային հանրապետությունները:

1920 թվին կազմավորվեցին Չուվաշական, Կալմիկական, Ուդմուրտական և Մարիական ավտոնոմ մարդերը: 1921 թ.—կոմի և Կաբարդինական ավտոնոմ մարդերը, Ղըմի և Դաղստանի ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետությունները: 1922 թ.—Կարաչայական, Ջերկիսական, Կաբարդինո-Բալկարական, Ոյրոթական, Աղեղեյական և Զեչենական ավտոնոմ մարդերը, ինչպես և Յակուտական Անդ:

ԽՍՀՄ կազմավորման մոմենտին—1922 թ. վերջերին—ՌԽՖՍՀ մեջ արդեն կային 13 ավտոնոմ մարդեր և 6 ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետություններ:

ԽՍՀՄ կազմավորման մոմենտին (1922 թ.) գոյություն ունեցող 13 ավտոնոմ մարդերից մնացել են 3 ավտոնոմ մարդեր՝ Կաբաչայական, Աղեղեյական և Ոյրոթական, իսկ մյուսները տարբեր ժամանակներում վերակազմվել են վորպես ավտոնոմ հանրապետություններ: ԱնՍՀ-ների վերափոխվեցին 1923 թ. գեր-

¹ Стalin, Марксизм и национально-колониальный вопрос, стр. 60.

² Նույն տեղում, էջ 76:

մանական աշխատանքային կոմունան, 1925 թ.—Զուվաշական ավտոնոմ մարզը, 1934 թ.—Ռւբենուրտական և 1935 թ.—Կալմիկական ավտոնոմ մարզերը:

ԽՍՀՄ կազմավորվելուց հետո ՌԽՖՍՀ կազմում ստեղծվեցին մի շարք նոր ավտոնոմ հանրապետություններ ու ավտոնոմ մարզեր:

1923 թ. կազմվեցին Բուրյաթ-Մոնղոլական, Կարելական ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետությունները: 1924 թ. կազմվեց Խնդուշական ավտոնոմ մարզը, 1934 թ.—Հրեական և Չեչենո-ինդուչական ավտոնոմ մարզերը (վերջինս Չեչենական և Խնդուշական ավտոնոմ մարզերի ձուլման միջոցով):

ՌԽՖՍՀ յերկրորդ Սահմանադրության ընդունումից (1925 թ.) հետո լայն գարդացում ստացավ ազգային-տերիտորիալ բաժանման նոր ձև—ազգային ոկրուգը: Առաջին ազգային ոկրուգը—Կոմի-Պերմյականը—կազմվեց 1925 թ.: Այդ նույն թվին կազմվեց Խակասական ազգային ոկրուգը: Ավելի ուշ կազմվեցին Նենեցական (1929 թ.), Վիտիմո-Ռէկմինական (1930 թ.) և մյուս ազգային ոկրուգները:

Ազգային ոկրուգները չեյին մնում վորպես ինչ-վոր քարացած բան, նրանցից շատերը վերակազմվեցին և դարձան ավտոնոմ մարզեր: Այսպէս, որինակ, Խակասական և Մորդվական ազգային ոկրուգները 1930 թ. վերափոխվեցին ազգային մարզերի: Խսկ վերջինս 1934 թվից ԱԽՍՀ է:

Այս ամենը մի անգամ ևս ընդգծում է ընկեր Ստալինի արտահայտած այն դրույթի արդարացնությունը, վոր «Խորհրդային ավտոնոմիան ինչ-վոր քարացած և մի անգամ ընդմիշտ տրված բան չեւայն յենթադրում ե իր զարգացման ամենաբարպազան ձևեր ու աստիճանները: Վարչական նեղ ավտոնոմիայից (Պովոլժյեյի գերմանացիները, չուփաչները, կարելները) նա անցնում ե ավելի լայն, քաղաքական ավտոնոմիայի (բաշկիրները, Պովոլժյեյի թաթարները, կիրգիզները) ...»¹:

Խորհրդային հշանառությունը՝ ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետությունների, ավտոնոմ մարզերի, ազգային ոկրուգների և ազգային շրջանների հետ մեկտեղ ստեղծեց նաև մեծ թվով ազգային գյուղական խորհուրդներ:

Բոլոր ազգերի, ժողովուրդների և ազգային խմբերի համար

ցարական Ռուսաստանն իրոք հանդիսանում եր «ժողովուրդների բանու»: Ընկեր կալինինը Խորհուրդների Համառուսական XVII Արտակարգ համագումարում ասում եր, վոր ցարական կառավարությունը ճնշված ազգությունների վերաբերմամբ անց եր կացնում «...սեղմի՛ր, ճնշի՛ր, բաժանիր և իշխի՛ր, իսկ գլխավորը—թալանի՛ր ու թալանի՛ր» քաղաքականությունը: Յեվ նա թալանում, կողոպտում եր ամբողջ ուժով, սիստեմատիկարեն կողոպտում եր նրանց հողերը, գանձում եր ուժից վեր հարկեր, արմատավորում եր իշխանությունների կամայականություն, մշտապես ստորացնում եր այդ ժողովուրդների արժանապատվությունը: Աներևակայելի ազգային ճնշման հետեւանքով այդ ժողովուրդների տնտեսությունը քայլայիլում եր, զեպի անկում եյին գնում հենց իրենք՝ այդ ժողովուրդները, տեղի յեր ունենում նրանց մասսայական բնաջնջում:

Առանձնապես ծանր եր Հյուսիսի մանր ժողովուրդների դրությունը: Հյուսիսի ժողովուրդները չունեյին գիր և գրականություն: Նրանց մեջ չեր կարելի գտնել վոչ մի գրադետ մարդ: Ռուս վաճառականության ու կուլտուրային զգիլի կույտը, վոր գաղանորեն շահագործում եր Հյուսիսի ժողովուրդներին, արհամարհանքով նրանց անվանում եր «անրան արարած», «անտառի գաղան»:

1924 թ. Համառուս. ԿԳԿ ստեղծեց Հյուսիսի կառավարական հատուկ կոմիտե—մի որդան, վորին հանձնարարեց Հյուսիսի մանր ժողովուրդների մեջ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կիրառումը:

Խորհրդային շինարարությունը Ծայր Հյուսիսում իր ճանապարհին հանդիսում եր մեծ գժվարությունների: Այս շրջաններում, ուր տոհմական մնացորդները դեռ ուժեղ եյին, սկզբում հնարավոր չեր ստեղծել սովորական տերիտորիալ խորհրդային կազմակերպությունները: Ծայր Հյուսիսում առաջին խորհրդային կազմակերպությունները տոհմական խորհրդներն եյին:

Հյուսիսի ժողովուրդների, ինչպես և մեր յերկրի բոլոր ժողովուրդների համար խորհրդները գարձան հարազատ իշխանություն: Հյուսիսում խորհրդային շինարարության հաջողությունները հող պատրաստեցին Ծայր Հյուսիսի ուսյոնացման (շրջանացման) համար:

1930 թ. զեկուեմքերին Համառուսական ԿԳԿ նախագահությունը վորոշում կայացրեց «Հյուսիսի մանր ժողովուրդների տարարնակեցման շրջաններում ազգային միավորումներ կազմա-

¹ Стalin, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1936 г., стр. 60.

կերպելու մասին»։ Յեղ արգեն 1935 թ. սկզբին Հյուսիսի խորհրդայիշին սիստմը ներկայացնում եր՝ 9 ազգային ոկրուժներ, 93 ազգային շրջաններ և 830 ազգային խորհուրդներ, վորոնցից միայն 165-ը քոչվորական։

Ենորհիվ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության և անձամբ ընկեր Ստալինի հողատարության ձեռք և բերված Հյուսիսի ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական վերելք։

Ծայր Հյուսիսի նախկին ամայի անկյուններում խորհրդային իշխանությունն ստեղծեց արդյունաբերություն—ձկնային, անտառային, նավթային, ածխային, առաստիտային և այլն։ Առել են արդյունաբերական կենտրոններ—Խիբինոգորսկը, Իգարկան, Նագայեվոն և ուրիշ։ Հյուսիսի շատ ժողովուրդների համար, վորոնք առաջ չունեցին գիր ու գրականություն, ստեղծված և սեփական գիր ու գրականություն։

Լենինյագրդում, Հյուսիսի ժողովուրդների ինստիտուտում, սովորում են Հարյուրավոր ուսանողներ՝ Հյուսիսի ժողովուրդներից։ Խարարովսկում, Նարյան-Մարում, Յենիսեյսկում, Ռուտյան-Վոլգոգրամ, Մուրմանսկում կազմակերպված են տեխնիկումներ։ Ուրուգային ու շրջանային կենտրոններում մշտագետ գործում են ազգային աշխատողների պատրաստման դասընթացներ։

Ստալինյան Սահմանադրությունն ել ավելի ընդարձակեց ազգային խորհրդային կազմակորումների իրավունքները՝ հինգ ավտոնոմ մարզեր—Կոմի, Մարիական, Չեչենո-ինգուշական, Հյուսիս-Ուստիշական, Կաբարդինո-Բալկարական—ավտոնոմ հանրապետությունների վերածելու և նրանց ներկայացուցչությունը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդում—Ազգությունների Խորհրդում ավելացնելու միջոցով։ Ավտոնոմ մարզերը մի պատգամավորի փոխարքն, վոր նրանք տալիս ելին 1924 թվի Միութենական Սահմանադրությամբ, ընտրում են հինգ պատգամավոր, իսկ ազգային ոկրուգներն ընտրում են մեկ պատգամավոր՝ անմիջականությունների Ազգությունների Խորհրդի համար։

Խորհրդային ֆեդերացիայի, խորհրդային ավտոնոմիայի մասին լենինյան ուսմունքի հետագա փայլուն զարգացումը ալլուգած և ընկեր Ստալինի կողմից Խորհուրդների Համամիութենական ՄIII Արտակարգ համագումարում, նրա՝ «ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին» պատմական գեկուցման մեջ։

Ընկեր Ստալինն ակնառու կերպով ցույց տվեց, վոր այս կտմ այն ավտոնոմ հանրապետության՝ միութենականների կարգըն անցնելու հարցը չի լուծվում և չի կարող լուծվել տվյալ ավտոնոմ հանրապետության տնտեսական կամ կուլտուրական հաստանության հիման վրա։

Ընկեր Ստալինը Խորհուրդների Համամիութենական ՄIII Արտակարգ համագումարում, իր տված գեկուցման մեջ, մասնաւոց յերեք հատկանիշներ, վորոնք հիմք են տալիս ավտոնոմ հանրապետությունները միութենական հանրապետությունների կարգը վոխադրելու համար։

«Նախ անհրաժեշտ ե, վոր հանրապետությունը ծայրել կրային լինի, ամեն կողմից ըլջապատված չլինի ԽՍՀՄ տերի տորիայով։ Խնչո՞ւ։ Վորովհետեւ յեթե միութենական հանրապետությանն իրավունք ե վերապահվում գուրս գալու ԽՍՀ Միությունից, ապա անհրաժեշտ ե, վոր միութենական դարձած այդ հանրապետությունը հնարավորություն ունենա տրամադրանուելու վաստորին հարց զնել իր գուրս գալու մասին ԽՍՀՄ-ից։ Խոր այդպիսի հարց կարող ե զնել միմիայն այնպիսի հանրապետությունը, վորը, սահմանակից ե վորեւ ոտար պետության և, հետեւաբար, ամեն կողմից շրջապատված չե ԽՍՀՄ տերիտորիայով։ Իհարկե, մեզ մոտ չկան այնպիսի հանրապետությունները, վորոնք փաստորին հարց զնելին ԽՍՀՄ-ից գուրս գալու մասին։ Բայց քանի վոր Միութենական հանրապետությանն իրավունք ե վերապահվում գուրս գալու ԽՍՀՄ-ից, ապա հարկավոր ե զործն այսպես զնել, վոր այդ իրավունքը դատարկ և անիմաստ թղթի կտոր չդառնա։ Վերցնենք, որինակ, Բաշկիրական կամ Թաթարական, հանրապետությունը։ Յենիսեյնք, թե այդ ավտոնոմ հանրապետություններն անց ենք կացրել միութենական հանրապետությունների կարգը։ Կկարողականացներն արդյոք նրանք արամանորեն կամ փաստորին հարց զնել իրենց գուրս գալու մասին ԽՍՀՄ-ից։ Վո՞չ, չեյին կարող։ Խնչո՞ւ։ Վորովհետեւ նրանք բոլոր կողմերից շրջապատված են խորհրդային հանրապետություններով ու մարզերով և նրանք, իսկապես տած, տեղ չունեն ԽՍՀՄ կազմից գուրս գալու։ Այդ պատճառով ել այդպիսի հանրապետությունները միութենական հանրապետությունների կարգն անցկացնելը սխալ կլիներ։

Յերկրորդ, անհրաժեշտ ե, վորպեսզի այն ազգությունը, վոր խորհրդային հանրապետությանն իր անունն ե տվել, քիչ

թե շատ կոմպակտ մեծամասնություն ներկայացնի հանրապետության մեջ: Վերցնենք, որինակ, Դրիմի ալյոնոմ հանրապետությունը: Նա ծայրամասային հանրապետություն է, բայց Դրիմի թափարները մեծամասնություն չունեն այդ հանրապետության մեջ, ընդհակառակը, նրանք այնտեղ փոքրամասնություն են ներկայացնում: Հետեաբար, սխալ և անտրամաբանական կլիներ Դրիմի հանրապետությունը միութենական հանրապետությունների կարգն անցկացնել:

Յերրորդ, անհրաժեշտ ե, վորպեսզի հանրապետությունը շատ ել փոքր չլինի իր բնակչության քանակության իմաստով, վորպեսզի նա, ասենք, ունենա վոչ պակաս, այլ դոնե մի միլիոնից ավելի բնակչություն: Ինչո՞ւ: Վորովհետեւ սխալ կլիներ յենթալըել, թե փոքր խորհրդային հանրապետությունը, վոր բնակչության նվազագույն քանակություն և անշան բանակունի, կարող կլիներ պետական անկախ գոյության հույս ունենալ: Հազիվ թե կարելի յե կասկածել այն մասին, վոր իմպերիալիստական գիշատիչներն իսկույն ենթ իրենց ձեռքը կցցելին այն:

Ես կարծում եմ, վոր առանց այս յերեք որյեկտիվ հատկանիների առկայության սխալ կլիներ ներկա պատմական մոմենտում հարց դնել այս կամ այն ավտոնոմ հանրապետությունը միութենական հանրապետությունների կարգն անցկացնելու մասին»:

Ստալինյան Մեծ Սահմանադրությունն, արտացոլելով ու ամրապնդելով լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության փայլուն հաղթանակը, մի քաղաքականության, վոր ապահովեց բազմազդ սոցիալիստական պետության ստեղծումը, «...վորի ամրությունը կարող եր նախանձել ամեն մի ազգային պետություն աշխարհի ամեն մի մասում» (Ստալին), դրա հետ մեկտեղ սոցիալիզմի հաղթանակների բազայի վրա գրանցեց խորհրդային պետությունների ֆեդերատիվ միավորման հետադարձացումն ու ամրապնդումը, այսինքն՝ խորհրդային ֆեդերացիան:

ՌԽՖՍՀ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

ՌԽՖՍՀ փորձը լիովին հաստատեց «...Փեղերացիայի, վորպես խորհրդային հանրապետությունների պետական միու-

թյան, ընդհանուր ձեկ ամբողջ նպատակահարմարությունն ու ձկունությունը»¹:

Քաղաքացիական պատերազմի և ոտարերկրյա ինտերվենցիայի ժամանակաշրջանում ազգային հանրապետությունների ռազմական ինքնապաշտպանության շահերն առաջին պահին վըսնի վըս քաշվեցին: Այդ ժամանակաշրջանում ազգերի համագործակցությունը ռազմա-քաղաքական դաշնիքի ձեւ ընդունեց:

Նախկին ցարական Ռուսաստանի բոլոր ազգերի աշխատավորների ռազմական դաշնիքն ապահովեց կամիր Բանակի հաղթանակը՝ ոռւս և ոտարերկրյա սպիտակ-դվարդիական բանդաների նկատմամբ: Ընկեր Ստալինը մատնանշում եր. «... յեթէ մենք կուշակի, Դենիկինի, Վրանդելի և Յուղենիչի թիկունքում չունենայինք այսպես կոչված «այլաղդիներին», չունենայինք առաջներում ճշշված ժողովուրդներին, վորոնք դեպի ոռւս պրոլետարները տածած իրենց լուռ համակրանքով քայլայում ելին այդ գեներալների թիկունքը... մենք այդ գեներալներից վոչ մեկին դեն չեյինք շպրտի...»²:

1918 թ. նոյեմբերի 13-ին Համառուս. ԿԳԿ կոչ արեց Ռւկրախնայի, Կովկասի և մյուս աշխատավորների դաշնիք կաղմելու՝ խորհրդային հանրապետությունների ուժերը հակահեղափոխության դեմ միավորելու համար: 1918 թ. նոյեմբերի 29-ին Ռւկրախնայի ժամանակավոր բանվորա-դյուլացիական կառավարությունը հրապարակում եւ մանիֆեստ, վորով ազգարում եւ խորհրդային հանրապետությունների միացումն ընդում հակահեղափոխության և ինտերվենցիայի, իսկ դրան հաջորդող «Դեկլարացիայում» նա հայտարարում եւ Ռւկրախնական Խորհրդային հանրապետությունը ՌԽՖՍՀ հետ սոցիալիստական Փեդերացիայի հիմունքներով միավորելու ձգտման մասին:

Յենելով կոնկրետ պատմական իրադրությունից և ՌԽՖՍՀ հետ միատեղ գործակցելու վերաբերյալ անկախ խորհրդային հանրապետությունների արտահայտած ցանկությունից, Համառուս. ԿԳԿ-ը 1919 թ. հունիսի 1-ին դեկտեմբեր և ընդունում, վորով սահմանում ե այդ համագործակցության կոնկրետ ձևերը: Այդ դեկտեմբերի Համառուս. ԿԳԿ-ը սահմանում եր խորհրդային հանրապետությունների գործունեյության միացումը՝ ռազմա-

1 ԹԿ(թ) կ Խ համագումարի վորոշումից:

2 Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Наргиздат, 1937 г., стр. 116.

կան, յերկաթուղային տրանսպորտի, ժողովրդական տնտեսության, ֆինանսների և աշխատանքի հարցերում: Բոլոր խորհրդային հանրապետությունների նախագծվող միավորումը ձախողվեց ինտերվենցիայի պատճառով:

Հակածեղափոխությունը ջախչախելու և խորհրդային հանրապետությունների տերիտորիաներն աղատելու հետևանքով ՌԽՖՍՀ հետ համագործակցելու հարցը, հենց իրենց խորհրդային հանրապետությունների կողմից, նորից դրվում և որակարգում:

Այսպես, որինակ, Համառկախնական հեղկոմը 1920 թ. հունվարի 28-ին վորոշում են ընդունում, վոր հետո (1920 թ. մայիսի 20-ին) հաստատեց խորհուրդների Համառկախնական IV համագումարը—ուղարկան, պարենային, աշխատանքի, ժողովրդական տնտեսության խորհրդի գծով, սոցիալական ապահովության, զաղորդակցության ճանապարհների, փոստ ու հեռադրի, Փինանսների հարցերի գծով Ռուկրախնայի գործունեյությունը ՌԽՖՍՀ հետ միավորելու մասին: 1920 թ. հունիսի Համառուսական կղկ-ը 30 անդամներին իր կազմի մեջ մտցնելու մասին:

Բելոռուսիան ինտերվենտներից ազատվելուց անմիջապես հետո Բելոռուսիայի հեղափոխական բանվորա-դյուլացիական ժամանակավոր կառավարությունն իր մասինիքստով (1919 թ. Հունվարի 1) հայտարարեց, վոր Բելոռուսիայում ուժի մեջ են մտնում ՌԽՖՍՀ բոլոր դեկրետները, վորոնք առաջնորդում են բանվոր դասակարգի շահերը: Խորհուրդների Բելոռուսական I համագումարի գեկարացիան հայտարարում են ՌԽՀՀ հետ Փեղերատիվ կապ հաստատելու անհրաժեշտության մասին:

1920 թ. սեպտեմբերի 13-ին ՌԽՖՍՀ միության դաշինք է կնքում Խորեզմի ժողովրդական հանրապետության հետ: 1920 թ. ՌԽՖՍՀ Աղրբեջանի ԱլիՍՀ հետ համաձայնություն և կնքում ուղմա-տնտեսական միության վերաբերյալ: Այս իսկ ուղու վրա, բայց արդեն առավել սերտ հարաբերությամբ, կանգնում են Բելոռուսիայի ԽՍՀ Հանրապետությունը, վորը միացնում է իր ժողկոմատները ՌԽՖՍՀ ժողկոմատներին և ուղարկում է իր ներկայացուցիչներին ՀԿԳԿ և համառուսական խորհուրդների համագումարներին:

Սակայն այս հարաբերությունները տնտեսական ընարարության անցնելու պայմաններում դարձան անբավարար:

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո կամպանիա յե ծավալվում խորհրդային սոցիալիստական հանրապետությունները վորակես մի միասնական միութենական պետություն—ԽՍՀՄ միավորելու ուղղությամբ:

Ընկեր Ստալինը խորհուրդների համառուսական X համագումարում՝ «Խորհրդային հանրապետությունների միավորման մասին» իր զեկուցման մեջ (1922 թ. դեկտեմբերի 26) ասում էր. «Կամպանիայի խման այն ե, վոր պայմանագրային հին հարաբերություններից անխուսափելիորեն հարկ է անցնել ավելի սերտ միավորման հարաբերությունների, —այնպիսի հարաբերությունների, վորոնք յենթագրում են միասնական միութենական պետության ստեղծում...»¹:

Վորոնք եյին այն պատճառները, վոր պայմանավորեցին խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ավելի սերտ միավորման հարաբերությունների ստեղծումը:

Այդ պատճառները յերեքն են՝ 1) ժողովրդական տնտեսության վերականգնումն անհնարին եր հանրապետությունների անջատ գոյության պայմաններում, 2) կապիտալիստական ըլքապատման զեմ-հանդիման միութենական հանրապետությունների միասնական ճակատ ստեղծելու անխուսափելիությունը, 3) խորհրդային իշխանության ինտերնացիոնալ դասակարգացին բնույթը, վորը խորհրդային հանրապետությունների աշխատավորներին մղում և միավորման ուղին:

1922 թ. դեկտեմբերի 29-ին տեղի ունեցավ միավորվող խորհրդային հանրապետությունների ՌԽՖՍՀ, Ռուկրախնայի, Բելոռուսիայի, ԱլիՍՀ լիազոր ներկայացուցիչների կոնֆերանսը, վորոնք ընդունեցին ԽՍՀՄ կազմելու մասին պայմանագրի նախադիմը: 1922 թ. դեկտեմբերի 30-ին կայացավ ԽՍՀՄ խորհուրդների I համագումարը, վորն ընկեր Ստալինի զեկուցման առթիվ ընդունեց «Դեկլարացիա ԽՍՀՄ կազմելու մասին» և «Պայմանագիր ԽՍՀՄ կազմելու մասին»:

Այսպես ստեղծվեց միասնական միութենական բազմազդ խորհրդային սոցիալիստական պետությունը, վոր հանդիսացավ «... ժողովուրդների համակեցության նոր ձեւ, միասնական

¹ Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1907 г., стр. 90.

միութենական պետության մեջ նրանց համագործակցության նոր ձև...»¹:

Կուսակցությունն ընկեր Ստալինի ղեկավարությամբ աղաւովելով իրավահամասար ժողովուրդների միավորումը, վորպես միասնական միութենական մի պետություն, դրեց նաև այն վտանդների հարցը, վորոնք սպառնում եյին ժողովուրդների յեղայրական համագործակցությանը: Առաջին ու գլխավոր վտանդն այն ժամանակ ներկայացնում եր մեծապետական չովինիզմը: Ընկեր Ստալինը կուսակցության XII համագործամարում իր զեկուցման մեջ նշում եր. «...յեթե մի այնպիսի ուժ, ինչպիսին վելիկոռոսական չովինիզմն ե, վարժամուրեն ծաղկի ու աարածվի, —առաջներում ճնշված աղդերի կողմից վոչ մի վատահություն չի լինի, վոչ մի համագործակցություն միասնական միության մեջ մենք չենք կառուցի և Հանրապետությունների վոչ մի Միություն մենք չենք ունենաց»²:

Մեծապետական չովինիզմն արտացոլում եր առաջներում տիրապետող վելիկոռոսական ազդի անցած դասակարգերի ձգտումը՝ վերապարձնելու իրենց բոլոր կորցրած արտոնությունները, տապալելու պրոլետարական դիկտատուրան: Առաջներում ճնշված ժողովարդներին ուռասական պրոլետարիատի շուրջը համախմբելում խոչընդուռ ծառայող կարելոր գործոններից մեկը հանդիսանում եր ցարիզմից ժառանգություն ստացած, նրա կեղեքիչ քաղաքականության հետևանքով յեղած փաստական տնտեսական, կուլտուրական անհամարությունը:

Ընկեր Ստալինը կուսակցության XII համագործարում առում եր. «...անհավասարություն փաստորեն—սա հիմնքն ե բոլոր դժգոհությունների ու բոլոր ընդհարումների»:

Տեղական նացիոնալիզմն արտահայտում եր առաջներում ճնշված ազդերի անցնող դասակարգերի ձգտումն առանձնանալու, բաժանվելու ժողովուրդների ընդհանուր միությունից, ստեղծելու բուրժուական ազդային պետություն, վերացնելու պրոլետարիատի դիկտատուրան և վերականգնելու կալվածատերերի, բայցերի ու կապիտալիստների տիրապետությունը:

¹ Сталин, Марксизм и национально-колоноиальный вопрос, Партизат, 1937 г., стр. 108.

² Եռոյն տեղում, էջ 117:

Անհրաժեշտ եր կործանիչ հարված հասցնել վելիկոռոսական մեծապետական չովինիզմին, վորպես այն ժամանակաշրջանում գլխավոր վտանգի, անհրաժեշտ եր վելիկութացիայի յենթարկել նաև տեղական նացիոնալիզմը:

Բուռական մեծապետական չովինիզմը ձգտում եր միութենական և ավտոնոմ հանրապետությունների վելիկութացիային: Մեծապետական չովինիստները հանրապետությունների միությունը դնահատում եյին վոչ վորպես հավասար պետական միավորների միություն, վոր կոչված և ապահովելու ազգային հանրապետությունների աղատ զարգացումն, այլ վորպես մի քայլ դեպի այդ հանրապետությունների վելիկութացիան, վորպես սկզբը այսպես կոչված «միասնական, անբաժան ուռասաստանյան պետության» ստեղծման:

Տեղական բուրժուական նացիոնալիզմի ցայտում դրսեռումն եր հանդիսանում վրացական ուկոնիստների պայքարն Անդրկովկայան ֆեռերացիա կազմելու դեմ, վորոնք ձգտում եյին վրաստանի համար ձեռք բերել հատուկ իրավունքներ, արտոնություններ և գրանով խել հակադրել Վրաստանը Անդրկովկասի մյուս ժողովուրդներին, բորբոքել ազգային թշնամանք: Բուրժուական նացիոնալիզմի դրսեռում եր նաև ուկրաինական «կոնֆեռերալիստների» պայքարը, վորոնց գլխավորում եր մերկացված Փաշիստական գործակալ, արոցկիստ Ռակովսկին, վորոնք գեմ եյին դուրս գալիս ԽՍՀՄ վորպես միասնական միութենական պետության ստեղծմանը:

Հակախորհրդային «աջ-տրոցկիստական բլոկի» դատավարությունը ցայտում կերպով ցույց տվեց տրոցկիստների, բուխարինականների, բուրժուական նացիոնալիստների ամրազդ հականդապիտական եյությունը: Ինչպես մեծապետական չովինիզմը, վորպես այն ժամանակական գլխավոր վտանգ, նույնպես և տեղական նացիոնալիզմը—դրանք բոլորը տանում եյին դեպի ժողովուրդների յեղայրական միության խորում, խել գրա միջացով՝ դեպի ԽՍՀՄ անդամահատում և կապիտալիզմի ռեստավրացիա:

Կուսակցության XVII համագործամարում ընկեր Ստալինը ցույց տվեց, վոր այն վեճը, թե վո՞ր թեքումն և գլխավոր վտանգ հանդիսանում—դեպի վելիկոռոսական նացիոնալիզմը յեղած թեքումը, թե՞ դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեքումը—գա գատարկ, ձևական վեճ է: Ընկեր Ստալինը մատաննչեց, վոր՝ «գլխավոր վտանգ և հանդիսանում այն թեքումը, վորի

դեմ դագարել են պայքարելուց և վորին այսով հարավուրություն են տվել աճելու և դառնալու պետական վահանգ»¹:

Կուսակցությունը բոլոր ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի խմասուն զեկավարությամբ մերկացրեց այդ արոյցի խոտական-բուխարինական և բուրժուա-նացիոնալիստական ֆաշիստական լրտեսների, մարդասպանների, դիվերսանտների թշնամական, դավաճանական մեքենայությունները:

Մեր մեծ յերկրի բանվոր դասակարգն ու գյուղացիությունը Լենինի-Ստալինի կուսակցության զեկավարությամբ հիմնականում կառուցելով սոցիալիզմը, ստեղծեցին հզոր բազմազդ պետություն:

ՌԽՖՍՀ ՅԵՐԿՐՈՐԴ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՌԽՖՍՀ առաջին Սահմանադրության ընդունման մոմենտից (1918 թ. հուլիս) մինչև 1925 թ. մայիս անցած տարիների ընթացքում ՌԽՖՍՀ ժողովուրդների և մյուս հանրապետությունների յեղբայրական ժողովուրդների կյանքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան: Այդ յոթ տարվա ընթացքում մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները Լենինի-Ստալինի կուսակցության զեկավարությամբ ջախջախեցին ներքին հակածեղափոխությունը, դուրս շպրտեցին ուսարերկրյա ինտերվենտներին, ստեղծեցին միասնական բազմազդ խորհրդային սոցիալիստական պետություն—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը—և ընդունեցին նրա առաջին Սահմանադրությունը:

ՌԽՖՍՀ յերկրորդ Սահմանադրության ընդունման պահին, նորհիմ կուսակցության ու խորհրդային իշխանության ձիւտ քաղաքականության, յերկիրը հիմնականում ավարտեց իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմի քայլայած արդյունարերության և գյուղատնտեսության վերականգնումը:

Սակայն մեր արդյունաբերությունն այն ժամանակ գեռ հիմնված էր հին, հետամնաց և վոչ-հարուստ տեխնիկայի վրա, իսկ գյուղատնտեսությունը ներկայացնում էր հետամնաց, պապենական տեխնիկա ունեցող մանր, ցիրուցան գյուղացիական տնտեսությունների մի անծայրածիր ովկիանոս:

¹ Сталин, Марксизм и национально-колониальный вопрос, Партиздат, 1935 г., стр. 199.

Կուսակցությունն այն ժամանակ հռչակեց յերկրի ինքուստրացման լողունզը և վճռական պայքար տարալ յերկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, ինչպես և ապրանքաշինառության մեջ սոցիալիզմի դիրքերի ամրապնդման համար:

Խորհրդայինների Համառումարը XII համագումարը 1925 թ. մայիսին ընդունեց ՌԽՖՍՀ յերկրորդ Սահմանադրությունը:

Ընկեր Կալինինը հետեւյալ կերպ բացատրեց 1925 թ. Սահմանադրությունն ընդունելու անհրաժեշտությունը:

«1922 թ. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմումով և 1924 թ. ԽՍՀՄ Սահմանադրության ընդունումով անհրաժեշտ եր վերամշակել ՌԽՖՍՀ Սահմանադրության տեքստը ԽՍՀ Միության Սահմանադրության հիմն վրա և նրան համապատասխան:

1918 թվականի Սահմանադրության տեքստի փոփոխման անհրաժեշտությունը բղխում եր նաև այն բանից, վոր Սահմանադրության մեջ կային մի շարք հողածներ, վորոնք արտացոլում եյին պայքարի պատմականորեն անցած ետապը, որինակ՝ հողի սոցիալիզմացիան, բանվորական վերահսկողությունը ֆարմիկանների ու գործարանների վրա, զորքը Պարսկաստանից դուրս բերելը, Հայաստանի ինքնորոշումը և այլն: Այս բարոն եյական եյին 1918 թ. համար, իսկ 1925 թ. լոկ պատմական փաստ եյին հանդիսանում»²:

ՌԽՖՍՀ ժողովուրդների կյանքում առաջացած նոր ետապին համապատասխան՝ 1925 թ. Սահմանադրությունը մացրեց մի շարք փոփոխություններ: Նա առաջին հերթին արտացոլեց ՌԽՖՍՀ և մայնաց հանրապետությունների միջև նոր, ավելի հաստատուն կապի ձևերը, վորոնք սահմանվել եյին ԽՍՀՄ կազմումով: Նա փոփոխեց խորհրդային Համառումարը համարության համագումարների հրավիրման ժամկետները, սահմանելով, վոր Համառութական կենտրոնական Գործադիր Կոմիտեն խորհրդաների Համառութական համագումար հրավիրում և յերկու տարին մեկ անգամ:

ԽՍՀՄ կազմվելու և ԽՍՀՄ Սահմանադրությունն ընդունելու կապակցությամբ փոփոխվեց նաև ՌԽՖՍՀ ժողովրդական Կոմիտեն Խորհրդի կազմը:

² Калинин, Доклад о проекте конституции РСФСР, Партиздат, 1937 г., стр. 6.

ՌԽՖՍՀ 1925 թ. Սահմանադրությամբ, ՌԽՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը կառուցվում եր հետեւյալ կազմով՝ հոգագործության, աշխատանքի, մատակարարման, Փենանսների, բանվորա-գյուղացիական տեսչության, արդարադատության, լուսավորության, առողջապահության, սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարներ, Պետական պլանային հանձնաժողովի նախագահ և ժողովրդական տնտեսության գերազույն խորհրդի նախագահ։

Առաջներում ՌԽՖՍՀ ժողովրդական կազմում յեղած մի շարք ժողովածաներ՝ արտաքին գործերի, ռազմական գործերի, ներքին գործերի, հաղորդակցության ճանապարհների, փոստի և հեռագործի, ԽՍՀՄ կազմվելու կազմակցությամբ վերածվեցին համամիութենական ժողովրդական կոմիսարիատների։ ՌԽՖՍՀ ժողովրդական նրանք ներկայացվում եյին հանձինս հասուլ լիազորների, վորոնք նշանակվում եյին համամիութենական ուրենադրության կարգով։

1925 թ. Սահմանադրության մեջ վորագես հասուլ գլուխ մացվեց ավտոնոմ հանրապետությունների և ավտոնոմ մարզերի վերաբերյալ գլուխը։ Սահմանադրությունը սահմանում եր ավտոնոմ հանրապետությունների և ավտոնոմ մարզերի գործադիրությունները ՌԽՖՍՀ համապատասխան որդաններ կազմելու կարգը, նրանց վորխարաբերությունները ՌԽՖՍՀ համապատասխան որդանների հետ։ Սահմանադրությունը հաստատում եր նաև, վոր ավտոնոմ մարզերի խորհրդային որդանները գործում են ավտոնոմ մարզերի վերաբերյալ կանոնադրությամբ, վոր ընդունվում են նրանց խորհուրդների համագումարների կողմից և հաստատվում են Ռուսական կամառուսական կենտրոնական գործադիր կոմիտեյի կողմից։

Փոփոխվեցին նաև վորոշ հոգմածներ, վորտեղ խոսվում եր իշխանության տեղական որդանների իրավասությունների մասին։ Այդ փոփոխությունները կատարվում եյին պետական իշխանության տեղական որդանների իրավունքների լայնացման ուղղությամբ, մասնավորապես ՌԽՖՍՀ Սահմանադրության մեջ 1918 թ. Սահմանադրության համեմատությամբ մացվեց նոր կետ, վոր պարտավորեցնում եր տեղական խորհուրդներին իրենց տերիտորիաների սահմաններում ապահովել հեղափոխական ուրինականությունը և պետական կարգի ու հասարակական անվտանգության պահպանությունը։

Նա լայնացրեց տեղական խորհուրդների իրավունքները նաև

բյուջեյի բնադրավառում։ Նրանում խոսվում ե արդեն վոչ թե նախահաշվի մասին, ինչպես 1918 թ. Սահմանադրության մեջ եր, այլ բյուջեյի մասին։ Տեղական բյուջեն արդեն հաստատվում ե խորհրդի գործկոմի կամ խորհուրդների համագումարի կողմից՝ ՌԽՖՍՀ կենտրոնական որդանների վերահսկողության ներքո։

1925 թ. Սահմանադրությունն ընդունվելուց հետո, խորհուրդների համառուսական համագումարները նրա մեջ մտցնում եյին փոփոխությունները ու լրացնումներ։

Խորհուրդների Համառուսական ԽIII համագումարը (1927 թ. ապրիլի 10) հաստատեց Համառուսության կԳԿ ԽII գումարման III նստաշրջանի վորոշումը՝ Ներքին Առևտրի ժողովրդական կոմիսարիատը՝ Առևտրի ժողովրդական կոմիսարիատի վերակազմվելու մասին և համապատասխան փոփոխություն մտցրեց ՌԽՖՍՀ Սահմանադրության մեջ։ Համագումարը սահմանադրական կարգով ձևակերպեց ՌԽՖՍՀ մեջ կազմակերպված ՌԽՖՍՀ կենտրոնական վիճակադրական վարչությունը։ ՌԽՖՍՀ շրջանացման (ռայոնացման) ավարտման, նահանգների, գավառների և վոլոստների լիկիվացիայի կազմակցությամբ, համագումարը Սահմանադրության V գլուխի՝ «Տեղական իշխանության մասին»—մեջ փոփոխություններ մտցրեց, արտացոլելով նրա մեջ ՌԽՖՍՀ մեջ կատարված ռայոնացումը։

Խորհուրդների Համառուսական ԽV համագումարն (1931 թ.) ոկրուգների միկրոֆացիայի կազմակցությամբ համապատասխան փոփոխություններ մտցրեց ՌԽՖՍՀ գործող Սահմանադրության մեջ։

Խորհուրդների Համառուսական ԽVI համագումարը (1935 թ. հունվարի 15) ՌԽՖՍՀ Սահմանադրության մեջ մտցրեց փոփոխություններ՝ ժողովրդական կոմիսարիատների կազմի վերաբերյալ։ Խորհուրդների համառուսական համագումարների կողմից ընդունված սահմանադրական այդ բոլոր ակտերը, վորոնք փոփոխում ու լրացնում եյին ՌԽՖՍՀ Սահմանադրությունը, անփոփոխ կերպով արտացոլում եյին սույնականության շինարարության հաջողությունները, պրոլետարական ղիկտատուրայի ուժի և հոգրության ամրապնդումը։

ՌԽՖՍՀ յերկրորդ Սահմանադրությունն ընդունելուց վոչ շատ առաջ դյուղական խորհուրդների վորոշ ողակների աշխատանքում հայտաբերվեցին լուրջ խեղաթյուրումներ, վորոնց հետեւանքով վորոշ շրջաններում գյուղական խորհրդների ընտ-

բությունները վեր ելին ածվել դատարկ գրասենյակային արարողության:

«Քրա հետևանքը յեղավ այն, վոր խորհուրդները մաւսաներին մոտիկ ու հարազատ որդաններից ոխակում ելին վերածվելու մասնաներին խորթ որդանների, իսկ բանվորների կողմից գյուղացիության զեկավարությունը, պրոլետարիատի դիկտատուրայի այդ հիմքն ու ամրոցը, ոխակում եր կախվելու ողիք»¹:

1925 թ. XIV կուսկոնքերանսը քննարկելով խորհուրդների գործունեյության աշխատացման խնդիրները, ընկեր Ստալինի ցուցումների վորով վորոչում ընդունեց և խորհուրդների աշխատանքն աշխատացնելու համար նշեց կոնկրետ միջոցառումներ:

Կուսակցությունը մեծ Ստալինի զեկավարությամբ հաղթահարեց ժողովրդի թշնամիների—տրոցիկստների, զինովյեվականների, բուժարինականների և մյուսների կողմից՝ խորհուրդների աշխատացմանը ցույց տրվող կատաղի դիմադրությունը:

Այդ դավաճանները մահու չափ վախենալով աշխատավորական մասսաների քաղաքական ակտիվության աճումից, զրպարտիչ կերպով հայտարարում ելին խորհրդային իշխանության ներքին հարկերի՝ մանր-բուրժուական տարերքով կարծեցյալ հեղեղման մասին, խորհուրդների «մերասերման» մասին:

Կուսակցությունը մերկացրեց սոցիալիզմի՝ թշնամիների հականեղակութական զրպարտությունը խորհուրդների նկատմամբ, աշխատացը խորհուրդների գործունեյությունը, պետության կառավարման մեջ ներդրավեց աշխատավորության լայն շասանաներին: Դրա հետևանքով խորհուրդների աշխատանքը բարելավվեց, բարձրացավ նրանց դերը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի կառավարման և մասսաների նյութական-կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, ամրապնդեց դաշինքը միջակի հետ: Ամեն մի նոր ընտրական կամպանիայում գնալով մեծանում եր խորհուրդների ընտրություններին մասնակցող աշխատավորների թիվը:

1925/26 թ. ընտրական կանգանիայի ժամանակ ընտրողների ներկայությունը մեր հանրապետության խորհուրդների հաշվետու և ընտրական ժողովներին բարձրացավ—քաղաքում՝ մինչեւ 54%-ի, իսկ գյուղում՝ մինչեւ 47,3%-ի:

Հաջորդ՝ 1927 և 1929 թվականների ընտրական կամպանիաները նոր ուժով ցույց տվին, վոր խորհուրդների աշխատաց-

ման վերաբերյալ ընկեր Ստալինի դրած խնդիրը հաջողությամբ կատարվում է: Ընտրական ժողովներին ընտրողների ներկայության տոկոսը քաղաքներում կազմեց 70,4, իսկ գյուղում՝ 60,7:

Կուսակցությունը, ղեկավարվելով ընկեր Լենինի այն ցուցումով, վոր պետական աշխատանքի մեջ պետք են ներդրավել միլիոնավոր աշխատավորներ, սիստեմատիկաբար պարզեցնում եր խորհրդային պետական ապարատը, այն դարձնում եր ավելի ու ավելի մատչելի՝ նրանում քաղաքի ու գյուղի միլիոնավոր աշխատավորների մասնակցության համար:

Կուսակցությունն ու կառավարությունն այդ նպատակով անցկացրին խորհրդային պետական ապարատի գտում, դուրս ավելիով այնտեղից բոլոր բյուրոկրատներին և գումափոխված թշնամիներին:

1931 թ. ընտրական կամպանիան ընթանում եր խորհուրդների, վորպես կուսակցության գլխավոր գիծը կիրառողի, ղերի հետագա բարձրացման վերաբերյալ Համկ(բ)Կ կկ և ԿՎՀ 1930 թ. միացյալ պլենումի առաջադրած լողունգով:

Այդ ընտրական կամպանիայում ընտրողների ներկայությունը քաղաքներում հասավ 78,4%-ի, իսկ գյուղերում՝ 70%-ի:

1934 թ. ընտրությունները նորից ցույց տվին, վոր աշխարհումս վոչ մի տեղ ու յերբեք չի յեղել պետության այնպիսի գեմոկրատական կառավարում, ինչպիսին բանվոր դասակարգի դիկտատուրայի յերկրումն է: Նրանք ցույց տվին, վոր Խորհուրդների յերկրում պետական կառավարմանը մասնակցում են միլիոնավոր աշխատավորներ: Քաղաքի ընտրողների ներկայությունը կազմեց 90%-ից ավելի, իսկ գյուղլինը՝ մոտ 85%:

1934 թ. ընտրությունների ժամանակ ընտրվեցին միայն գյուղական խորհուրդներ՝ թվով 40 հազար, մոտ 800 հազար անդամով: Քաղաքային խորհուրդներում ընտրվեց մոտ 150 հազար պատգամավոր: Բացի դրանից միլիոնավոր աշխատավորներ մասնակցեցին խորհուրդների պատգամավորներին տրված նակազների կատարման ստուգմանը:

Աշխատավորության՝ միլիոնավոր մասսաների մասնակցությունն իր պետության շնչարարության և կառավարման մեջ, արտահայտում է մեր դեմոկրատիայի եյությունը:

ԽՍՀՄ աշխատավորների մասնակցությունը պետության կառավարման մեջ չի սահմանափակվում պետական իշխանու-

1 Сталин, Вопросы ленинизма, изд. 9-е, стр. 162.

թյան որդաններում նրանց անմիջական գործունեյությամբ։ Պրոլետարիատի դիմումը սխատեմը կազմված է «լծակ-ների», «փոկերի» և «ղեկավարող ուժի»—պրոֆմիությունների, խորհուրդների, կոռպերացիայի, կոմյերիտմիության և, վերջապես, կոմունիստական կուսակցության, վորպես ղեկավար ուժի, միակցությունից։

Կուսակցության ղեկավարությամբ, կուտառուրական հեղափոխության վերաբերյալ լենինյան լոգունդի դրոշի ներքո աճում ու լայնանում եյին մեր յերկիրն անմիջականորեն կառավարող բանվորների ու գյուղացիների շարքերը։

Խորհուրդների աշխուժացման ստալինյան քաղաքականության իրականացումը, պետական ապարատի զաման կազմակերպումը հանդիսացան աշխատավորների լայն մասսաներին պետական կառավարման գործին, մեր պետական ապարատի գործունեյության վրա հսկողություն ունենալու գործին ներդրավելու հզոր միջոցը։

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ, ժողովրդա-տնտեսական կյանքի բոլոր վոլորտներում կապիտալիզմի լիկվիդացիան, բանվոր դասակարգի ու կոլտնտեսային գյուղացիության նյութական և կուտառ-տեխնիկական մակարդակի վերելքը—այս ամենն առաջացնում է ամբողջ խորհրդային ժողովրդի քաղաքական ակտիվության վիթխարի աճում։ Ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի սահմանումը՝ գաղտնաբառը, ուղղակի ընտրական կառավարման մեջ, մեր սոցիալիստական հասարակության ամբողջ ժողովրդին մասնակից և անում պետության կառավարությանը մեջ պատճենագործության մեջ, մեր սոցիալիստական համարակալության ամբողջ ժողովրդին մասնակից և անում պետության կառավարությանը մեջ։

Հաջողությամբ իրականանում են մեր ամբողջ խորհրդային ժողովրդին պետության կառավարման մեջ դիմումին ներդրավելու վերաբերյալ լենինյան պատգամը։ Աճում ու լայնանում են սոցիալիստական դեմոկրատիզմը։

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ ՄԵՋ ՅԵՎ ՌԽՖՍՀ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ՌԽՖՍՀ 1925 թ. Սահմանադրության ընդունման մոմենտից անցած տարիների ընթացքում մեր յերկրի կյանքում տեղի

ունեցան հսկայական փոփոխություններ, վորոնք արմատապես կերպարանափոխեցին մեր յերկիրը։

Ընկեր Ստալինը Խորհուրդների համամիութենական ՎԻԼ Արտակարգ համագումարում արած իր ղեկուցման մեջ տվեց փայլուն վերլուծությունն այն փոփոխությունների, վորոնք տեղի ունեցան ելունում կայլի, խորհրդային հասարակության դասակարգային կառուցվածքի, ԽՍՀՄ ժողովրդների ազգային փոխարարերությունների մեջ։ Այդ փոփոխություններն ամբողջովին վերաբերում են նաև ՌԽՖՍՀ—Խորհրդային Միության տասնեմեկ հավասար միութենական հանրապետությունների մեջ առաջինին։

Այդ ժամանակամիջոցում ՌԽՖՍՀ ժողովրդական տնտեսությունը դարձավ սոցիալիստական։ Կապիտալիզմը լիովին լիկվիդացիայի յե յենթարկված արդյունաբերության, գյուղատնտեսության և ապրանքաշրջանառության մեջ։ ՌԽՖՍՀ իունը արդյունաբերության արտադրանքը 1937 թ. գերազանցում է նախահեղափոխական Ռուսաստանի արտադրանքից ավելի քան ութ անգամ։

Այլևս չկա մանր մենատնտեսային գյուղացիական տնտեսությունների անձայրածիր ովկիանոսը, տնտեսություններ, վորոնք իրենց աշխատանքը կատարում եյին ամենահետամնաց տեխնիկայի բազայի վրա։ Գյուղատնտեսության վերակառուցման բնագավառում լենինի-Ստալինի կուսակցության իմաստուն քաղաքականության հաղթանակը մեր գյուղատնտեսությունը դարձրեց «... աշխարհիս ամենախոչը մեքենայացված, նոր տեխնիկայով զինված մի արտադրություն՝ կուտանսությունների ու խորհանտեսությունների համայնապարփակ սիստեմի ձևով»¹։

ՌԽՖՍՀ մեջ այժմ կա 173·300 կոլտնտեսություն, 2552 խորհանտեսություն, 3937 մեքենատրակտորային կայան։

Վոչնչացված և վերջին չահագործող դասակարգը՝ կուրակությունը։

ՌԽՖՍՀ կոլտնտեսություններն ու խորհանտեսություններն այժմ իրենց տրամադրության տակ ունեն 285 հազար տրակտոր և 90,5 հազար կոմբայն։ Սոցիալիստական և դառել նաև մեր յերկրի ապրանքաշրջանառությունը—ներկայումս նա ամբողջապես գտնվում է պետության, կոռպերացիայի և կոլտնտեսության մեջ։

¹ Сталин, Доклад о проекте Конституции Союза ССР.

թյունների ձեռքում : Ապրանքաշրջանառության բնագավառում վերացել են վաճառականներն ու սպեկուլանտները : «Այսպիսով, սոցիալիստական սխտեմի լիակատար հաղթանակը ժողովրդական տնտեսության բոլոր վոլորտներում—այժմ փաստ է»¹:

Փոխվել են նաև մեր հասարակության դասակարգային կառուցվածքը :

Վոչնչացված են բոլոր շահագործող դասակարգերը . մեր յերկրում տեղ չունեն կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները, վաճառականները, սպեկուլանտները և ժողովրդի մյուս տպառուկները :

Մեզ մոտ մնացել են յերկու բարեկամ դասակարգերը—բանվորների դասակարգը և գյուղացիների դասակարգը, վորոնք խորհրդային ինտելիգենցիայի հետ միասին կառուցում են հարուստ, կուլտուրական և ինդաւիլ կյանք :

Նշանակալից են հաղթանակները մեր յերկրի ժողովուրդների մեծ բարեկամության ստեղծման ասպարեզում : Հաղթանակած սոցիալիզմի բազայի վրա անսասան կերպով ամրապնդված և մեր մեծ հայրենիքի ժողովուրդների յեղբայրական համագործակցությունը :

Բոլշևիկյան կուսակցության և ժողովուրդների հանճարեղ առաջնորդ ընկեր Սամալինի ղեկավարությամբ մեր յերկրի բանվորների ու գյուղացիների հերոսական պայքարում ձեռք բերված խոշոր նվաճումներն արձանագրված են Ստալինյան Սահմանադրության մեջ :

ԽՍՀՄ Սահմանադրության հիման վրա մշակված են Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության Սահմանադրությունը, վորն ընդունվեց 1937 թ. Հունվարին, խորհուրդների Համառուսական XVII Արտակարգ համագումարի կողմից :

ՌԽՖՍՀ Սահմանադրության առաջին հոդվածում գրված է . «Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը բանվորների ու գյուղացիների Սոցիալիստական պետություն է» :

Այդ հոդվածում արտացոլված են Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերացիայի ժողովուրդների կյանքում կատարված համարակալյան փոփոխությունները : Նրա քաղաքական հիմքը հանդիսանում են աշխատավորների պատղամավորների խորհուրդ-

ները, վորոնք աճեցին և ամրացան կարգածատերերի ու կապիտալիստների իշխանության վոչնչացման և պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման հետևանքով : Այդ խոսքերի մեջ սեղմ ու հակիրճ կերպով ընդհանրացած են նոր, խորհրդային սոցիալիստական պետության ստեղծման փորձը, հեղափոխական պայքարի ու սոցիալիստական շինարարության փորձը :

Մեր յերկրում «...հասարակության պետական ղեկավարությունը (դիկտատուրան) պատկանում է բանվոր դասակարգին, վորպես հասարակության առաջավոր դասակարգի...» (Ստալին) :

Ինքն անունը—աշխատավորների պատգամավորների Խորհրդադիմության մասին, վոր բանվոր դասակարգի դիկտատուրայի բազան անչափելիորեն լայնացել է, իսկ բանվոր դասակարգի դիկտատուրայի պետությունը դարձել է հզոր, անհաղթելի ուժ :

ՌԽՖՍՀ տնտեսական հիմքը կազմում են տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը : ՌԽՖՍՀ տնտեսական հիմքը հաստատվեց տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների կապիտալիստական սեփականության վերացման և շահագործման վոչնչացման հետևանքով :

1918 թ. Լենինը գրում եր «...սոցիալիստական խորհրդային հանրապետություն արտահայտությունը նշանակում է Խորհրդապետական իշխանության վճռականությունը՝ իրականացնելու անցումը ղեպի սոցիալիզմ, այլ վոչ ամենենին տնտեսական նոր կարգերը սոցիալիստական համարելը»¹: Այժմ այդ խորհրդության մեջ մոտ հիմնականում կառուցված է սոցիալիստական հասարակություն, կոմունիզմի առաջին փուլը :

Միայն ժողովրդի անարդ թշնամիները—տրոցկիստները, գինովելականները, բուկարինականները—խորհրդային իշխանության առաջին իսկ որերից ժխտում եյին խորհրդային պետության իսկական սոցիալիստական եյությունը, սոցիալիստական բնույթը : Այդ թշնամական զրագարսությունը բղիստում եր մեկ, առանձին վերցրած յերկրում սոցիալիզմի կառուցման անհնարինության վերաբերյալ տրոցկիստական, հակահեղափոխական «թեորիայից»: Նույնպիսի թշնամական, ամբողջապես դրաբա-

1 Статлн, Доклад о проекте Конституции Союза ССР.

տիչ «թեորիա» յեր ժողովրդի թշնամիների այն պնդումը, վոր իբր թե մեր պետությունը մահանում, անեակում ե պրոլետարական հեղափոխության առաջին որերից: Այդ «թեորիան» նպատակ ուներ թուլացնելու խորհրդային պետության հզորությունը: ԽՍՀՄ դեմ ժողովրդի թշնամիների հետ միասին պատերազմ պատրաստող իմպերիալիստներին ե միայն հարկավոր այսպիսի «թեորիա»: Բոլշևիկների կուսակցությունը, ընկ Ստալինի դեկավարությամբ, ջախջախեց ժողովրդի թշնամիներին:

Կուսակցության ԽVI համագումարում ընկեր Ստալինն ասում եր.

«Մենք կողմնակից ենք պետության մահացման: Յեվ միաժամանակ մենք կողմնակից ենք պրոլետարիատի դիկտատուրայի ուժեղացման, վորն ամենազորեղ և ամենահուժկու իշխանությունն ե մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր պետական իշխանություններից: Պետական իշխանության բարձրագույն գարգացում՝ պետական իշխանության մահացման պայմաններ նախապատրաստելու նպատակով—ահա՛ մարքսիստական ֆորմուլան: Սա «հակասակա՞ն ե»: Այո՛, «հակասական ե»: Բայց այս հակասությունը կենսական և ամբողջությամբ արտացոլում է մարքսյան դիմելութիւն»:

ՈԽՖՍՀ Սահմանադրության, ինչպես և միութենական ու ավտոնոմ բոլոր հանրապետությունների սահմանադրությունների հիմքը հանդիսանում է ԽՍՀՄ ստալինյան մեծ Սահմանադրությունը:

Ընկեր Ստալինը Սահմանադրության նախագծի մասին իր գեկուցման մեջ նշեց ԽՍՀՄ Սահմանադրության հետևյալ հիմնական առանձնահատկությունները:

ԽՍՀՄ Սահմանադրությունը չի հանդիսանում ծրագիր, այլ ներկայացնում է գրանցումն ու որենսդրական ամրապնդումն այն բանի, ինչ արդեն ձեռք ե բերված ու նվաճված ե դորձնականում:

«ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագծի գլխավոր հիմքը կազմում են սոցիալիզմի սկզբունքները, սրա արդեն նվաճված ե իրականացված հիմունքները...»:

ԽՍՀՄ Սահմանադրությունը յենում ե նրանից, վոր մեր խորհրդային հասարակության մեջ արդեն լիկվիդացիայի յեն յենթարկված հակամարտ դասակարգերը, վոր մեր խորհրդային

հասարակությունը կազմված ե իշխանության գլուխ կանգնած յերկու միմյանց բարեկամ դասակարգերից՝ բանվորներից ու գյուղացիներից, վոր հասարակության պետական դեկալարությունը (դիկտատուրան) պատկանում ե բանվոր դասակարգին՝ վորպես հասարակության առաջավոր դասակարգի, վոր ԽՍՀՄ Սահմանադրությունը հարկավոր ե նրա համար, վորպեսզի ամրապնդենք աշխատավորությանը ցանկալի և ձեռնտու հասարակական կարգերը:

ԽՍՀՄ Սահմանադրությունը խորապես ինտերնացիոնալ ե: Նա յելնում ե այն բանից, վոր բոլոր ազգերն ու ցեղերն իրավակավասր են:

Հետեւողական և մինչև վերջ պահպանված դեմոկրատիզմը կազմում է ԽՍՀՄ Սահմանադրության առանձնահատկությունը:

Սահմանադրությունը ծանրության կենտրոնը տեղափոխում է քաղաքացիների իրավունքների ապահովման հարցի վրա, նրանց իրավունքների իրականացման միջոցների հարցի վրա և վոչ թե սահմանափակվում է քաղաքացիների իրավունքների Փիքացիայով:

ԽՍՀՄ Սահմանադրության այս հիմնական առանձնահատկություններն ընդհանուր են բոլոր խորհրդային սահմանադրությունների համար և ցույց են տալիս խորհրդային ամբողջ պետական սիստեմի, վորպես պրոլետարական դիկտատուրայի պետության, միասնությունը:

ՈԽՖՍՀ Սահմանադրության մեջ չկա վոչ մի գլուխ, վոչ մի հողված, վոր չըսլիսի ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան գլուխներից ու հողվածներից և լիակատար համապատասխանության մեջ չինի նրա հետ: Բայց դրա հետ մեկտեղ ամբողջ խորհրդային պետական սիստեմի միասնությունն ամենին չի բացառում, այլ, ընդհակառակը, յենթարկում է ՈԽՖՍՀ Սահմանադրության մեջ ՈԽՖՍՀ վորոշ առանձնահատկությունների հաշվառումը, արտացոլումը:

ԽՍՀՄ Սահմանադրության 16-րդ հոդվածում դրված ե: «Յուրաքանչյուր Միութենական հանրապետություն ունի իր Սահմանադրությունը, վորը հաշվի յե առնում հանրապետության առանձնահատկությունները և կառուցված ե ԽՍՀՄ Սահմանադրությանը լիովին համապատասխան»:

ՈԽՖՍՀ առանձնահատկություններն արտացոլված են Սահմանադրության այն գլուխներում, վորտեղ խոսվում ե պետական կառուցվածքի և իշխանության բարձրագույն ու տեղական

որդանների՝ կազմակերպման մասին, այնուհետև՝ ընտրական սխտեմի վերաբերյալ գլխում և, վերջապես, XIII գլխում:

ՌիթՍՀ Սահմանադրության մասին տված իր զեկուցման մեջ ընկ. Կալինինը նշեց, վոր «Միութենական հանրապետությունների մեջ մեր յերկիրն իր տերիստորիայով ամենաընդարձակն ե, բնակչների թվով՝ առաջինը, իր կազմով՝ ամենաբաղմազգությունը: Բնականաբար, նա ամենաբաղմազիսին ե նաև իր եկոնոմիկայով, կուլտուրայով ու կենցաղով: Նշանակում ե՝ պետական որդանները պետք ե այնպիսի ճկունություն ունենան, վոր իրենց աշխատանքում հենվելով մասսաների ակտիվ մասնակցության վրա, համարակոր չափով ավելի լավ սպասարկեն աշխատավորներին, վոր բոլոր ազգությունների բնակչությունն իշխանությունն որդանապես ընդունի վորպես իր ժողովրդական իշխանությունը»:

Ժողովուրդների խոկական յեղբայրական բարեկամությունը, նրանց միավորման իրավահավասար ու կամավոր բնույթն իր ցայտուն արտահայտությունն ե գտնում ՌիթՍՀ Սահմանադրության 13-րդ հոդվածում՝ «Ճնտեսական և քաղաքական գծով, ինչպես նաև պաշտպանության գծով փոխադարձ ողնությունն իրականացնելու նպատակով Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը կամավոր կերպով միացել ե իրավահավասար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների՝ Ռւլյաբինական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ, Ադրբեյջանական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Թուրքմենական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ, Տաջիկական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ, Կիրգիզական ԽՍՀ հետ—վորպես միութենական պետություն—Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն»:

Յենելով դրանից, ՌիթՍՀ ապահովում ե ԽՍՀՄ համար, հանձինս նրա իշխանության բարձրագույն մարմինների և պետական կառավարման մարմինների, այն իրավունքները, վորոնք վորոշված են ԽՍՀՄ Սահմանադրության 14-րդ հոդվածով:

ԽՍՀՄ Սահմանադրության 14-րդ հոդվածի սահմաններից դուրս ՌիթՍՀ պետական իշխանությունն իրագործում ե ինքնուրույնաբար, լիովին պահպանելով իր սուվերեն իրավունքները»:

Ինչպես ե, ուրեմն, ապահովում ՌիթՍՀ սուվերենությունը, նրա կողմից ինքնուրույնաբար պետական իշխանության իրականացումը:

Դա ապահովվում ե նրանով, վոր ՌիթՍՀ, ինչպես և յուրաքանչյուր միութենական հանրապետությունն, իրենից ներկայացնում ե մի խորհրդային պետություն, վորն ունի իշխանության իր բարձրագույն որդանը—որենսդրական որդանը, վարչականագույնը միութենական իրավասությանը վերաբերող որենքներ: ՌիթՍՀ ունի իր Սահմանադրությունը, վորը հաշվի յետոնում ՌիթՍՀ առանձնահատկությունները և կառուցված ե ԽՍՀՄ Սահմանադրության բաղայի վրա ու նրան լիովին համապատասխան:

ՌիթՍՀ տերիտորիան չի կարող փոփոխվել առանց նրա համաձայնության:

ՌիթՍՀ համար պահպանվում ե ԽՍՀՄ-ից աղքատորեն դուրս գալու իրավունքը, համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 17-րդ հոդվածի և ՌիթՍՀ Սահմանադրության 15-րդ հոդվածի:

Ընկեր Ստալինը Խորհուրդների Համամիութենական ԽIII Արտակարգ համագումարական մեջ նշեց, վոր ԽՍՀՄ իրավահավասար միութենական հանրապետությունների կամավոր միություն ե: Մեզ մոտ չկա և վոչ մի հանրապետություն, վոր ցանկանար ԽՍՀՄ կազմից գուրս դալ, բայց գրանից ամեննելին չի հետևում, վոր ԽՍՀՄ Սահմանադրության մեջ չպետք ե լինի միութենական հանրապետությունների իրավունքների հավասարությունը մեկնաբանող հոդված:

ՌիթՍՀ սուվերենիտեսն ապահովվում ե ԽՍՀՄ կողմից նրա սուվերեն իրավունքների պահպանությամբ: ԽՍՀՄ Սահմանադրությունն ասում ե. «ԽՍՀՄ պահպանում ե Միութենական Հանրապետությունների սուվերեն իրավունքները» (հոդված 15):

ՌիթՍՀ ժողովուրդները դիտակցում են, ուեալ կերպով զգում են ԽՍՀՄ մեծ ուժը, վորն (ԽՍՀՄ) ապահովում ե մեր սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների վերածնությունն ու ծաղկումը:

ՌիթՍՀ, ի տարբերություն մյուս միութենական հանրապետությունների, հանդիսանում ե Փեդերատիվ հանրապետություն, վորը միավորում ե մեծ թվով ազգեր, ժողովուրդներ և ազգային խմբեր:

ՌիթՍՀ մեջ մտնում են 17 ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններ: ՌիթՍՀ մեջ մտնող յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետություն, ԽՍՀՄ Սահմանադրության 14-րդ հոդվածի և ՌիթՍՀ Սահմանադրության 19-րդ

Հոգվածի սահմաններից դուրս, իրականացնում ե իր իշխանությունն ավտոնոմ հիմունքներով:

Ավտոնոմ հանրապետությունը հանդիսանում ե խորհրդային պետություն: Նա ունի իր Սահմանադրությունը—հիմնական ռունքը, վորհ հաշվի յե առնում տվյալ հանրապետության առանձնահատկությունները և հաստատվում ե ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի կողմից: Ավտոնոմ հանրապետությունն ունի իշխանության իր բարձրագույն որդանը—Գերագույն Խորհրդը—որենսդիր որդանը, վորը հրատարակում ե ավտոնոմ հանրապետության իրավասությանը վերաբերող որենքներ: Ավտոնոմ հանրապետությունն ունի պետական կառավարման բարձրագույն որդան (ժողովոմիտորհ), գերագույն դատարան, վորը ընտրվում է ավտոնոմ հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից: Ավտոնոմ հանրապետության տերիտորիան առանց նրա համաձայնության չի կարող փոփոխվել:

Ավտոնոմ հանրապետության կազմակերպումն ապահովում ե հանրապետության ժողովրդին իր պետականության, իր կուլտուրայի զարգացում, վորպեսզի այդպիսիք ծառայեցվեն սոցիալիստական շինարարությանը:

ՌԽՖՍՀ Սահմանադրությունը ՌԽՖՍՀ քաղաքացիներին ապահովում է սոցիալիզմի մեծագույն նվաճումը—աշխատանքի, հանգստի, կրթության, ծերության՝ նյութական ապահովության իրավունք, ամրապնդելով այդ որենսդրական կարգով: Նա կանանց ապահովում ե տղամարդկանց հետ հավասար իրավունքներ: ՌԽՖՍՀ Սահմանադրությունն իրականացնում ե ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքը՝ գաղտնի քվեարկությամբ: ՌԽՖՍՀ Սահմանադրությունն աշխատավորների շահերին համապատասխան, նրանց համար ապահովում ե խոսքի, ժողովների, մամուլի ազատություն, անձի անձեռնմխելիություն և այլն:

ՌԽՖՍՀ Սահմանադրությունը ՌԽՖՍՀ քաղաքացիներին ապահովում ե հասարակական կազմակերպությունների մեջ միավորմելու իրավունք և Փիքսացիայի յե յենթարկում Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ղեկավար դերը, «վորն աշխատավորների առաջավոր ջնկատն ե՝ սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու ու զարգացնելու համար նրանց մղած պայքարում, և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմում ունեն ավտոնոմ մարզեր:

պությունների ղեկավար կորիզն ե ներկայացնում» (Հոդվ. 130): ՌԽՖՍՀ Սահմանադրությունն ամրապնդում ե սոցիալիստական որինականությունը, պարտավորեցնում ե ՌԽՖՍՀ քաղաքացիներին՝ պահպանել սոցիալիստական աշխատանքի դիսցիպլինան, սոցիալիստական համակեցության կանոնները և դրանցում ե աշխատանքի սոցիալիստական սկզբունքները:

Սահմանադրությունը պարտավորեցնում ե ՌԽՖՍՀ քաղաքացիներին՝ պահպանել ՌԽՖՍՀ Սահմանադրությունը, կատարել որենքները, պահպանել աշխատանքի դիսցիպլինան, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՌԽՖՍՀ Սահմանադրությունը պարտավորեցնում ե ՌԽՖՍՀ քաղաքացիներին՝ պահպանել ու ամրապնդել հանրային, սոցիալիստական սեփականությունը—խորհրդային կարգերի սրբազն և անձեռնմխելի հիմքը:

ՌԽՖՍՀ Սահմանադրությունն ամրապնդում ե մեր Բանվորակուղացիական Կարմիր Բանակի հզորությունը, ընդհանուր զինվորական ծառայությունն որենք հայտարարելով: Զինվորական ծառայությունը ՌԽՖՍՀ քաղաքացիների պատվավոր պարտականությունն ե հանդիսանում:

ՌԽՖՍՀ Սահմանադրությունը հաստատում ե ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների նորման՝ 150 հազար բնակչին՝ մի պատգամավոր:

ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության կազմի մեջ մտնում են՝ Նախագահության նախագահը, նրա 17 տեղակալներն՝ ըստ ավտոնոմ հանրապետությունների թվի, նախագահության քարտուղարը և նախագահության 20 անդամները: Այստեղ արտացոլված ե ՌԽՖՍՀ այն առանձնահատկությունը, վոր նա ֆեղերատիվ հանրապետություն ե, տերիտորիայով ամենից ընդարձակը և ազգարնակության թվով՝ առաջինը:

VIII գլխում (Հոդված 78), վոր վերնադրված ե «Պետական իշխանության տեղական որդանները», վորպես ՌԽՖՍՀ առանձնահատկություն, մենք գտնում ենք աշխատավորության պատգամավորների յերկրամասային խորհուրդներ, վորոնք իրենց կազմում ունեն ավտոնոմ մարզեր:

ՌԽՖՍՀ Սահմանադրությունը 102-րդ Հոդվածում սահմանում ե, վոր ազգային ոկրուգների աշխատավորական պատգամավորների խորհուրդների և նրանց գործադիր կոմիտեների ի-

բավունքներն ու պարտականությունները վորոշվում են «Ազգային ոկրուգների վերաբերյալ կանոնադրությամբ»:

XII «Ընտրական սիստեմը» գլխում ՌԽՖՍՀ Սահմանադրության առանձնահատկությունն եւ հանդիսանում 145-րդ հոդվածը, վոր սահմանում եւ իշխանության տեղական որդաների ընտրությունների նորման: Յուրաքանչյուր տվյալ վարչական միավորի (յերկրամասի, մարզի, վարչական ոկրուգի, քաղաքի) և ավտոնոմ մարզի ու ազգային ոկրուգի ընտրական նորմաները, ՌԽՖՍՀ Սահմանադրության սահմանած ընտրական նորմաների շրջանակներում՝ վորոշվում են «աշխատավորների պատգամավորների ընտրությունների վերաբերյալ կանոնադրությամբ»:

Ընտրական նորմաները սահմանելու այսպիսի կարգը լիակատար հնարավորություն եւ տալիս հաշվի առնելու յուրաքանչյուր վարչական միավորի, ավտոնոմ մարզերի և ազգային ոկրուգների բոլոր առանձնահատկությունները:

ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Ռուս ժողովուրդը Հոկտեմբերյան Սոցիալիստական ՄՆԺ հեղափոխության հաղթանակով նորապես գտավ իր հայրենիքը՝ վորպես ազատ ժողովուրդ, վորպես ժողովուրդների ազատարար, վորպես մի ժողովուրդ, վոր իր ձեռքն եւ վերցրել սեփական բախտը և կառուցում եւ ՌԽՖՍՀ յեղայրական ժողովուրդների խնդալի, ունեոր կյանքը:

Ռուսաստանի բանվոր դասակարգը սիրում եր իր հայրենիքը և միենույն ժամանակ այլող ատելությամբ եր լցված դեպի ցարական դաշիճները, կարլածատերերն ու կապիտալիստները, վորոնք նրա հայրենիքը յենթարկում եյին բռնության, ճնշման և ծաղրանքի:

Հին Ռուսաստանի վերաբերմամբ այդ նույն վերաբերմունքով եյին համակած բոլոր ոռւս մեծ գեմոկրատները՝ Բելինսկին, Չերնիշևսկին, Դորոժյուրովը և մյուսները: Այսպէս, ոռւս մեծ գեմոկրատ Բելինսկին 1839 թվին գրում եր. «Վորքան շատ եմ ազգում ու մտածում, այնքան ավելի արյունակցարար եմ սիրում Ռուսիան.... բայց նրա վիճակը, նրա ներկա իրականությունը սկսում են ինձ հուսահատության հասցնել.... կեղոսոտ ե, զաղը բելի յե, վրդովեցուցիչ ե, վոչ մարդկային ե»:

Հին Ռուսաստանը, վորտեղ աշխատավորների նկատմամբ բռնությունը նողկալի յեր, վորտեղ միլիոնավոր աշխատավորների վրա անբաժան թագավորում եր կալվածատիրական-բուրժուական իշխանության կամայականությունը, չեր կարող լինել իսկական հայրենիքը: Միայն յերբ միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները կենինի-Ստալինի կուսակցության զեկավարությամբ կատարեցին Հոկտեմբերյան Սոցիալիստական ՄԵԾ հեղափոխությունը, վոչնչացրին կալվածատերերի ու կապիտալիստների ճնշումը, միայն այն ժամանակ աշխատավորները ձեռք բերին իսկական հայրենիքը:

«Ապրեք համերաշխ, ընկերնե՛ր, սիրեցեք ձեր յերկրորդ մոռը, մեր հզոր սոցիալիստական հայրենիքը»—կոչ եր անում սոցիալիստական հասարակության հանձարեղ յերգիչ Ա.Մ. Գորկին:

Բանվորներն ու գյուղացիները, ուռւսներն ու թաթարները, դաշտանցիներն ու ոսերը, բաշկիրներն ու հրեաները, ՌԽՖՍՀ մեջ բնակվող տասնյակ ուրիշ ժողովուրդներ ՌԽՖՍՀ մեջ գտան իսկական հայրենիքը, ուր նրանք իրենց յերկրի միջին, ազատ տերերն են, իրենց բախտը կերտողներն են:

Մեր յերկրի աշխատավորները, վոր նվաճեցին իշխանությունը և կրծքով այն պաշտպանեցին բազմաթիվ թշնամիներից, մեր հայրենիքը դարձրին հարուստ, գեղեցիկ: Այսպիսի յերկիրը, այսպիսի զարմանալի հայրենիքը չի կարելի չսիրել և նրան սիրում եւ ամբողջ ժողովուրդը-փոքրից մինչև մեծը:

Բանաստեղծ Սուլեյման Ստալինին, վորին ոռւս մեծ գրող Մաքսիմ Գորկին անվանեց [XX դարի Հոմերոս, այսպէս եր գովերդում մեր սքանչելի հայրենիքը.

... Մի յերկիր կա աշխարհում,
Փառքն ե՝ բոլոր դարերում,
Աղքատ ե խոսքս, գիտեմ,
Վոր հայրենիքս յերդեմ...

Մի յերկիր, մի ժողովուրդ և այլ,
Բոլոր յերկրների հույսն ու պատվար,
Յեղ ամեն աղնիվ մարդ-ընտանիք:
Տուն կդանի իրեն յերջանիկ:

Յեղ չկա աշխարհում ուժն այն,
Վոր փակի նրա ուզին լայն,
Ստալինյան հզոր վահանավոր,
Հաղած ե նրա կուրծքն արժանավոր...

Հանուն հայրենիքի փառքի խորհրդացին հայրենասերները կատարում են Հերոսական մեծագործություններ, ի փառս հայրենիքի նրանք բարձրացնում են խորհրդացին գիտության, արվեստի մակարդակը, նվաճում են համաշխարհային ունկորդներ, բարձրացնելով հայրենիքի, ու նրա մարդկանց, նրա հերոսական քաղաքացիների փառքը:

Մեր հանրապետության քաղաքացիների հայրենասիրությունն արտահայտվում է ամենուրեք, ԾինֆՍՀ ժողովրդական կյանքի բոլոր բնադավառներում: Կոլտնտեսային-խորհտնտեսային գաշտերում կամ փառահեղ գործարաններում ու Փաբրիկաներում աշխատելիս, իրենց քաղաքացիական պարտքը կատարելիս՝ մասնակցելով հասարակական ու պետական կյանքին, մեր մեծ հայրենիքի սահմանները թշնամու վոտնագություններից պաշտպանելիս, ամենուրեք ԾինֆՍՀ քաղաքացիներն իրենց գործը կատարում են սիրով, մինչև վերջ գործին նվիրելով իրենց բոլոր ուժերը, գիտելիքները, վորպեսզի հայրենիքին անձնվեր ծառայելով մեծարեն նրան, բարձրացնին հայրենի յերկրի հեղինակությունը: Նրանք աշխարհին ցույց են տալիս խորհրդացին մարդկանց բարձր բարոյական հատկությունները:

Այդպիսին են սոտիանովյան շարժման դրոշը բարձրացրած մեր բանվորները, բոլցերիների ղեկավարությամբ ունենոր կյանք նվաճած և յերկրին ամեն տարի 7-8 միլիարդ փութ հացահատիկի ստալինյան առաջադրանքը հաջողությամբ իրականացնող մեր գյուղացիները. այդպիսին են իրենց անթառամ փառքով պատած մեր ողաչուները, փառապանծ ստալինյան բազեները. այդպիսին են Հյուսիսային բենուը նվաճած քաջարի պապանինականները. այդպիսին են համաշխարհային ունկորդներ նվաճած մեր յերաժշտներն ու սպորտսմենները: Այդպիսին են մեր ամբողջ խորհրդացին ժողովուրդը, զոր ուրախ աշխատում և ստալինյան Սահմանադրության արևի տակ և որըստորե բաղմազատկում են մեր մեծ հայրենիքի հարստությունն ու փառքը:

ԽՍՀՄ ամեն կողմերից շրջապատված են կապիտալիստական պետություններով: Նրանք պատրաստվում են մեր յերկրի վրա հարձակվելու և մեզ մոտ են ուղարկում լրտեսներ, դիվերսանտներ, վնասաբարներ: Նրանք իրենց մոտ ծառայության են հավաքագրում, վրաքես գործակալներ, մեր հայրենիքի անարդ թշնամիներին—տրոցկիստներին, զինովյելվականներին, բուխարինական-

ներին, բուրժուական նացիոնալիստներին, վորոնք ամբողջովին իրենց նվիրել են Փաշիզմին ծառայելուն:

Հակախորհրդացին «աջ-տրոցկիստական բլոկի» դատավարության ժամանակ, պետական մեղադրող, ԽՍՀՄ դատախազ ընկ. Վիշինսկին իր արտասանած ճառում ասաց. «Աջ-տրոցկիստական բլոկի» քայլացիչ գործունեյության հիմնական խնդիրն եր հանդիսանում ԽՍՀՄ տնտեսական հզորության ըստ ամենայնի քայլայումը: Լիկվիդացիայի յենթարկել խորհրդացին սացիալիստական սիստեմը, թուլացնել ԽՍՀՄ պաշտպանության արդյունաբերությունը, կործանել գյուղատրնտեսությունը, լիկվիդացիայի յենթարկել կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները, կործանել տրանսպորտը, զորի դերն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ բացառիկ մեծ և—այսպիսին են այն չբեշավոր խնդիրները, զոր իրենց առաջ դրել եյին Հանցագործուները»:

Այս հանցավոր խնդիրների իրականացման համար բանդիտական շայկայի մասնակիցներ Տրոցկին, Բուխարինը, Ռիխովը, Կրեստինսկին, Յագողան և մյուս սրիկաները վաճառում եյին մեր հայրենիքը, մեր պետության ուղմական գաղտնիքները հանձնում եյին թշնամիներին, վորոնց մոտ ծառայության մեջ եյին նրանք: Իրենց Փաշիստական, իմպերիալիստական տերերի առաջադրանքներով նրանք սարքում եյին դիվերսիոն ակտեր, ձգտում եյին խախտել մեր պետության տնտեսական ու ֆինանսական հիմքը, մեզ թշնամի պետությունների հետ կնքում եյին վնասարական պայմանագրեր: Նրանք ուղղում եյին մասնատել Խորհրդացին Սոցիալիստական Հանրապետությունների Մեծ Միությունը, ուղղում եյին մեր յերկրում վերականգնել կապիտալիզմը: Նրանք փորձում եյին բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետության հզորությունը թուլացնել և պատրաստել Փաշիստական պետությունների հետ մզկելիք պատերազմում նրա պարտությունը: Նրանք սպանեցին Ս. Մ. Կիրովին, մահացրին Վ. Վ. Կույբիշևին, Վ. Ռ. Մենժինսկուն, Ա. Մ. Գորկին: Նրանք մահափորձ եյին կազմակերպում ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի ու նրա մերձավոր զինակիցների դեմ:

Ստալինյան ժողովոմ ընկ. Ն. Ի. Յեժովի ղեկավարած փառապանծ կարմիր հետախուզությունը վրա հասավ ու բացահայտեց Փաշիստական լրտեսներին: Ամբողջ խորհրդացին ժողովրդի կամքն արտահայտելով, պետական մեղադրող ընկ. Վիշինսկին, դիմե-

լով գատարանին, ասաց. «Մեր ժողովութեալ պահանջում ե մի բան՝ ճզմեցնք անիծված իմին»: Անիծված իմը ճզմված ե:

Ի հեճուկս մեզ թշնամի պետությունների ու նրանց բազմաթիվ գործակալությունների—տրոցկիստների, բուխարինականների, զինովյեկանների, մենչեկինների, եսերների, բուրժուականների, և այլնի—ՌԽՖՍՀ բանվորներն ու գյուղացիները ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների հետ յեղբայրական դաշնք կնքած, հասան բազմազդ ու զանազանացեղ խորհրդացին մեծ ժողովրդի խսկական ծաղկման:

Այս հաջողությունները հուժկու հարված են ընդգեմ Փաշիգմի ռեակցիոն ուժերի: Գերմանիայի ու ծագոնիայի Փաշիստական պետություններն որեցոր պատրաստվում են հարձակվելու մեր հայենիքի վրա, վոչչացնելու Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության նվաճումները և մեր յերկիրը դարձնելու իրենց գաղութը:

Ընկեր Ստալինը կոմյերիտական ընկ. Իվանովին տված պատասխանի մեջ բացառիկ ուժով ընդգծեց ԽՍՀՄ վրա ռազմական հարձակում գործելու վտանգը և մեր յերկիրի պաշտպանությունը, նրա զինված ուժերի հզորությունն ամրապնդելու անհրաժեշտությունը:

Ընկեր Ստալինը գրում ե. «Հարկավոր ե մեր ամբողջ ժողովուրդը պահէլ մորիլիկացիոն պատրաստականության վիճակում՝ ռազմական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորապեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոչ մի ֆոկուս չկարողանան մեզ հանկարծակի բերել»¹....

Խորհրդային Միության ժողովուրդները հիշում են իրենց սիրելի առաջնորդի խոսքերը: Նրանք անձնուրաց կերպով աշխատում են ի բարորություն իրենց հայրենիքի, ամեն կերպ ուժեղնում ու ամրապնդում են անպարտելի Կարմիր բանակը, Կարմիր նավատօրմը, Կարմիր ավելիացիան, ԽՍՀՄ զինված ուժերի ամբողջ հզորությունը:

ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի հաղթանակն ստեղծեց խորհրդային մեծ ժողովրդի բարորական ու քաղաքական անխորտակելի միասնություն, վորը հիմնվում ե ստալինյան Սահմանադրությամբ արձանագրված սոցիալիզմի հաղթանակների վրա: Կապիտալիզմն

աշխատավորներին բերում ե ճնշում, գործադրկություն, խավարություն, աղքատություն, քայլայում և պատերազմ: Սոցիալիզմն, ընդհակառակը, նրանց ազատում ե գործադրկությունից ու աղքատությունից, ապահովում ե նրանց համար աշխատանքի և հանդստի, կրթության և ապահովված ծերության իրավունքը, տալիս ե նրանց խնդալի, ուննոր և կուլտուրական կյանք:

Մեր խորհրդային հասարակության ժամանակակից դասակարգային կառուցվածքը հանդիսանում է խորհրդային ժողովրդի բարոյական ու քաղաքական միասնության հիմքը: ԽՍՀՄ մեջ գոյություն ունեն՝ բանվոր գասակարդ, գյուղացիների դասակարգ և խորհրդային ինստելիգենցիա:

«...ԽՍՀՄ բանվոր դասակարգը, —ասում ե ընկեր Ստալինը, —դա մի բոլորովին նոր, շահագործումից աղատագրված դասակարգ ե, վորի նմանը մարդկության պատմությունը դեռ չի իմացել»²:

Միանգամայն ուրիշ ե դարձել նաև մեր գյուղացիությունը: Մեր խորհրդային գյուղացիությունը, կուտնասային գյուղացիությունը, վերջնականապես և անդարձ կանդնեց սոցիալիզմի ուղղությունը և հանդիսանում ե սոցիալիզմի շինարարության ակտիվ մասնակիցը:

Մեր խորհրդային ինստելիգենցիան, վոր 80-90%-ով բաղկացած ե նախակին բանվորներից ու գյուղացիներից, նույնպես զավարար և բարեկամ դասակարգերի, բանվոր դասակարգի ու հավասար և բարեկամ դասակարգերի, զինվորների հետ մեկտեղ, նրանց վորտեղ նա բանվորների ու գյուղացիների հետ մեկտեղ, նրանց վորտեղին լժված, կատարում ե նոր անդասակարգ սոցիալիստ միասուն լժված, կատարում կառուցումը»²: Պարզ ե, վոր իրավատական հասարակության կառուցումը²: Պարզ ե, վոր իրավատական հասարակության կառուցումը՝ զավարար և բարեկամ դասակարգերի, բանվոր դասակարգի ու զինվորների դասակարգի և նրանց ինստելիգենցիայի մատ գյուղացիների դասակարգի և հանդիսական հակառակ գաղաքական շահեր: Դեռևս բանչկան մեկուսացած, հակառակ քաղաքական շահեր: Դեռևս բանչկան մեջ գաղաքարդի ու գյուղացիության միջև գյուղացիուն ունեցող վոր դասակարգի ու գյուղացիության միջև գյուղացիուն ունեցող վորությունը ու չնչվող քաղաքական հակառակությունները, ինչպես ասում ե ընկեր Ստալինը, արմատական հակառակություններ չեն հանդիսանում, և դրա համար ել նրանց փոխհարաբերությունը:

¹ Стalin, Доклад о проекте Конституции СССР, Партиздат, 1936 г., стр. 11.

² Նույն աեղում, եջ 17:

թյունը բարեկամության հարաբերություն են, փոխադարձ վատահության ու անխախտ գաշինքի հարաբերություն են:

Ահա թե ինչու ընկ, Մոլոտովը լիակատար իրավամբ կառող եր ասել. «Մեզ մոտ՝ Խորհրդային Միության մեջ գոյացել ե այն, ինչ առաջներում տեսնված չեր և գոյություն չունի մյուս յերկրներում, վորտեղ կապիտալիզմը հասարակությունը ծվատում ե գասակարգերի, —մեզ մոտ աշխատավորների իշխանության հաղթանակի հիման վրա գոյացել ե ժողովրդի բարոյական և քաղաքական միասնություն, վորովճետեւ մեր յերկրում մերձեցել և մի ամբողջության մեջ են միացել յերկու մեծ ուժեր՝ ժողովուրդը և կոմունիզմը»¹:

ԽՍՀՄ Սահմանադրության ըննարկումն ու ընդունումը և ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիան դըսկորեցին Խորհրդային Միության ժողովուրդների քաղաքական ակտիվության բացառիկ վերելքը:

Միլիոնավոր բանվորներ, գյուղացիներ, ծառայողներ և ինժեներա-տեխնիկական աշխատավորներ, գիտության ու արգեստի աշխատողներ ուսումնասիրում ելին ԽՍՀՄ Սահմանադրության մասին ընկեր Ստալինի գեկուցումը, ԽՍՀՄ և ԽՍՖՍՀ Սահմանադրությունն ու ընտրական որենքը: Միլիոնավոր խորհրդային քաղաքացիներ ընտրական կամպանիայի ժամանակ աշխատում ելին վորպես ընտրական հանձնաժողովների անդամներ, վտահված անձեր, ադիտատորներ, սրուպագանդիստներ և այլն:

Այս աճած քաղաքական ակտիվությունը և իրենց քաղաքական-բարոյական միասնությունը բանվորներն ու գյուղացիները, ժողովուրդն ամբողջությամբ, դրսեռեցին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրություններին՝ 1937 թ. գեկտեմբերի 12-ին, միահամուռ կերպով քվեարկելով կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին, ցույց տալով անսահման նվիրվածություն, սեր և վստահություն Լենինի-Ստալինի մեծ կուսակցությանը, սրտաբուղիս սեր դեպի մեծ Ստալինը:

1938 թ. գետրվարի 12-ին Համառուսական ԿԳԿ ԽVI գումարման IV նստաշրջանը քննարկեց և ընդունեց «ԽՍՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը»:

ԽՍՖՍՀ ժողովուրդները պատրաստվում են իրենց իշխանու-


թյան գերագույն որդանի—ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրություններին:

Ոգտագործելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ կուտակված հարուստ փորձը, մեր հանրապետության աշխատավորները ՌԽՖՍՀ Գերագույն Խորհրդի ընտրական կամպանիան կանցկացնեն ել ավելի լավ, ել ավելի կազմակերպված, քան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունները:


1938 թ. հունիսի 26-ին, ԽՍՖՍՀ Գերագույն Խորհրդի և ՌԽՖՍՀ մեջ մանող ավտոնոմ հանրապետությունների գերագույն խորհրդների ընտրությունների հանդիսավոր որը, մեր յերկրի բոլոր ժողովուրդները, բոլոր բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան միահամուռ կերպով կքվեարկեն կոմունիստների և անկուսակցականների անխախտ բլոկի թեկնածուների ոգտին:

Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ժողովուրդները իրենց լավագույն վորդիների շաղիկների արյան գնով ձեռք բերեցին իրենց համար աղատություն և յերջանկություն, ջախջախելով միջազգային իմպերիալիզմի ավագակային բանդաներին, նրանց սպիտակ-դվարդիական ծառաներին, ստոր արոցկիստական-բուխարինական ֆաշիստական լրտեսներին ու պրովոկատորներին:



Ռուս մեծ ժողովուրդը, Խորհրդային Միության բոլոր յեղացարական ժողովուրդների հետ միասին, հիշելով իր առաջնորդ մեծ Ստալինի ցուցումները կապիտալիստական շրջապատման, ԽՍՀՄ գեմ ֆաշիստական սկետությունների կողմից պատրաստվող պատերազմի մասին, ամրացնում ե Խորհրդային Միության, նրա փառագանձ կարմիր Բանակի ու Կարմիր Նախորդությունը հզորությունը և ամեն բոլով պատրաստ ե մահացու հարված հասցնելու թշնամիներին և ջախջախելու նրանց՝ իրենց իսկ սեփական տերիտորիայում:



¹ Молотов, Речь на первой сессии Верховного Совета СССР, Партизодат, 1938 г., стр. 21.



ՌԻՖԱՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԱՎԱՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ



ՌԻՖՍՀ առաջինն և ԽՍՀՄ տասնմեկ հայտասար հանրապետությունների մեջ	3
Բովանդակության ֆեղերատիվ Սոցիալիստական Հանրապետության հոչակումը	18
ՌԻՖՍՀ առաջին Սահմանադրության ընդունումը	32
ՌԻՖՍՀ—վորովս խորհրդային ավտոնոմիայի վրա հիմքը՝ ված Փեղերացիայի—պետական շինարարությունը	41
ՌԻՖՍՀ գերը Խորհրդային Միություն կազմելու գործում	54
ՌԻՖՍՀ յերկրորդ Սահմանադրությունը Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ մեջ և ՌԻՖՍՀ նոր Սահմանադրության ընդունումը	60
Մեր Սոցիալիստական Հայրենիքը	66
ՌԻՖՍՀ պետական կառուցման սինման ընդմեջ	76
	84—85

Խմբ. Վ. Գուրգենյան

Թարգմ. Գ. Հակոբյան

Տեխն. Խմբ. Ս. Խաչատրյան

Արքադրիչ Վ. Զինօջյան

Կոնսուլ Արքադրիչ Լ. Արովյան

Դրամիակ լիազոր № 3309, հրատ. № 590

Պատվեր № 116, ափամ 10.000

Հանձնված և արտադրության 19/VII 1938 թ.

Սառարադրված և տպագրելու 5/VIII 1938 թ.

Գինը 1 ռ.

Գետհրատ—Քաղաքական գրականության հքատաբակչության
ապաբան, Յերևան, Արքադրիչյան № 66

ՀՀ Ազգային գրադարան



NL0185346

ԳԻՒԾ 1 Ր.

Ա. ԲԱԿԱԿԻՆ, Ա. ԵԲՈՅԱՆ

Р С Ф С Р

ОЧЕРК ОБРАЗОВАНИЯ И РАЗВИТИЯ
РОССИЙСКОЙ СОВЕТСКОЙ ФЕДЕРАЦИИ

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1938